

ԼՐԱՏՈՒ
ՀԱՅԿԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ
ԼՍՈՑԻԼՑԻԼՅԻ

2 (6)



2025

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ARMENIAN LIBRARY ASSOCIATION

ԼՐԱՏՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

Կիսամյա գիտա-տեղեկատվական հանդես

HERALD

OF THE ARMENIAN LIBRARY ASSOCIATION

A Biannual Scientific-Informative Journal

2025

2(6)

ԵՐԵՎԱՆ- YEREVAN

2025

Հանդեսը լույս է տեսնում 2023 թվականից
տարին երկու անգամ (էլեկտրոնային)
The journal has been published since 2023
twice a year (electronic)

Հրատարակումը երաշխավորված է
Հայկական գրադարանային ասոցիացիայի կողմից
Publication is recommended by
Armenian Library Association

Խ մ ք ա գ ռ ա կ ա ն խ ո ռ ո Ւ Ր Ղ
Նախագահ՝ *Ռուզան Տոնոյան*
Գլխավոր խմբագիր՝ *Մայա Գրիգորյան*
Պատասխանատու խմբագիր՝ *Արմինե Հովհաննիսյան*
Անդամներ՝ *Գևորգ Բարդակչյան, Լևոն Ավդոյան, Արա Ղազարյան,
Ալբերտ Խառատյան, Տիգրան Զարգարյան, Վահե
Թորոսյան, Գագիկ Սուքիասյան, Վիկտորիա Խուրշուդյան,
Արարատ քին. Պողոսյան, Ավագ Հարությունյան,
Համո Սուքիասյան, Միհրան Մինասյան, Ռաֆիկ Ղազարյան*

E d i t o r i a l B o a r d

Chair: Ruzan Tonoyan

Editor-in-Chief: Maya Grigoryan

Executive Secretary: Armine Hovhannisyan

Members: Gevorg Bardakchyan, Levon Avdoyan, Ara Ghazaryan, Albert
Kharatyan, Tigran Zargaryan, Vahe Torosyan, Gagik Sukiasyan,
Viktoria Khurshudyan, Priest Ararat Poghosyan, Avag Harutyunyan,
Hamo Sukiasyan, Mihran Minasyan, Rafik Ghazaryan

e-ISSN 2953-8092

DOI: 10.54503/2953-8092

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ

Հարգելի՛ ընթերցող

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Հայկական գրադարանային ասոցիացիայի «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի» գիտա-տեղեկատվական հանդեսի 2025 թ. երկրորդ համարը, ուր հոդվածները խմբավորված են «Տեսություն և պրակտիկա», «21-րդ դարի գրադարան», «Մարզային և համայնքային գրադարաններ», «Մշակութային ժառանգություն», «Հայկական գրադարանային ասոցիացիա», «Կրթական հաստատությունների գրադարաններ», «Գործընկերություն» խորագրերի ներքո:

Կոնֆլիկտները կամ կոնֆլիկտային իրավիճակները մարդու գործունեության անբաժանելի մասն են և հանդիպում են հասարակության տարբեր ոլորտներում: Գրադարանային ոլորտը բացառություն չէ: Սույն համարում ներկայացվել է, թե ինչպես են կոնֆլիկտները հայտնվում գրադարաններում և ինչ ազդեցություն ունեն ոլորտի զարգացման վրա:

Առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել Front-end տեխնոլոգիաներին, որպես գրադարանների թվային հարթակների ձևավորման գործիքների: Քննարկվել են օգտագործողի միջերեսի, փորձի և մատչելիության բարելավման ժամանակակից տեխնոլոգիական լուծումները, վերլուծվել են տեխնիկական մարտահրավերներն ու արդյունավետության բարձրացման ուղիները:

Ամսագրում անդրադարձ կա նաև գրադարանային կրթությանը, որը ներկայումս գերակա խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Հատկապես կարևորել ենք շարունակական կրթության դերը, որը կարող է էական ազդեցություն ունենալ ոլորտի զարգացման վրա:

ԼՐԱՏՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

2025 թ. լրացավ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի հիմնադրման 90 տարին: Այս համարում ներկայացվել է գրադարանի գործունեությունը:

Մեր ուշադրության կենտրոնում են դպրոցական գրադարանները, որպես տեղեկատվական և ուսումնական կենտրոններ՝ որոնք նպաստում են աշակերտների տեղեկատվական գրագիտության բարձրացմանը: Ներկայացվել է մեկ դպրոցական գրադարանի փորձը՝ ընդգծելով ձեռքբերումներն ու առկա խնդիրները:

Համարում առանձին անդրադարձ կա Բյուսովյան գիտական կենտրոնի հավաքածուին. հուսով ենք՝ դա առիթ կհանդիսանա՝ հետազայում հավաքածուն լիարժեք ուսումնասիրելու համար:

Մարզային և համայնքային գրադարաններից ներկայացվել են Լոռու մարզի որոշ գրադարաններ՝ պատմական ակնարկից մինչև վիճակագրական տվյալներ:

Մշակութային ժառանգության համատեքստում առանձնացվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանի պատկերագրական գործունեության մի դրվագ, որը, մեր կարծիքով, կհետաքրքրի ոլորտի մասնագետներին: Շարունակվել է նաև «Պորտ» ընկերության տպագրած գրքերի մատենագիտական ցանկի ներկայացումը՝ ընդգրկելով հայերեն նորահայտ անունների հատվածը:

Որպես հաղորդում՝ անդրադարձ ենք կատարել 2025 թ. Համաշխարհային գրադարանային և տեղեկատվական կոնգրեսին և գրադարանավարների վերապատրաստման դասընթացներին՝ որպես Հայկական գրադարանային ասոցիացիայի գործունեության արդյունքներ:

Հուսով ենք՝ համարը ևս օգտակար կլինի մասնագիտական խնդիրների ուսումնասիրության, վերլուծության և լուծումների մշակման համար:

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԸ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ*

ՀՏԴ: 02

DOI: 10.54503/2953-8092.2025.2(6)-5

ԳԱՐԵԳԻՆ ՂՈԶԻԿՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

ORCID: [0009-0000-2409-2673](https://orcid.org/0009-0000-2409-2673)

Կոնֆլիկտները կամ կոնֆլիկտային իրավիճակները մարդու գործունեության անբաժանելի մասն են և հանդիպում են հասարակության տարբեր ոլորտներում՝ աշխատանքային միջավայրում, ընտանիքում և հանրային կյանքում: Գրադարանային ոլորտը նույնպես բացառություն չէ: Աշխատակազմը, կազմված տարբեր սոցիալական խավերի և մասնագիտական կողմնորոշում ունեցող անհատներից, վաղ, թե ուշ առերեսվում է կոնֆլիկտների հետ:

Ուսումնասիրության հիմնական նպատակն է հետազոտել գրադարանային կոնֆլիկտը որպես սոցիալական ու կազմակերպչական երևույթ, վերհանել նրա տեսակները և առաջարկել արդյունավետ լուծման մեխանիզմներ, ներառյալ օրենսդրական կարգավորման հնարավորությունները, որոնք նպաստում են պրոֆեսիոնալ և խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքային միջավայրի ձևավորմանը և թիմային աշխատանքի արդյունավետությանը:

Նպատակից ելնելով՝ դիտարկվել են մի շարք խնդիրներ, որոնք ներառում են՝ կոնֆլիկտի բնույթագրումը գրադարանային միջավայրում, կոնֆլիկտային իրավիճակների դասակարգումը և դրա կառավարման մեթոդների գնահատումը: Ուսումնասիրությունը իրականացվել է ինչպես առաջնային,

* Հոդվածը ներկայացվել է 12.11.2025, գրախոսվել է 25.11.2025, ընդունվել է տպագրության 23.12.2025:

The article was submitted on 12.11.2025, reviewed on 25.11.2025, accepted for publication on 23.12.2025.

այնպես էլ երկրորդային աղբյուրների հիմքի վրա՝ օգտագործելով գրականություն, գիտական հոդվածներ և էլեկտրոնային աղբյուրներ, ինչը հնարավորություն է տվել համադրված կերպով վերլուծել խնդիրների տեսական և գործնական կողմերը:

Արդյունքում՝ փորձել ենք գտնել գրադարաններում կոնֆլիկտային իրավիճակների արդյունավետ կառավարման միջոցներ, որոնք կարող են նպաստել աշխատակազմի հոգեբանական հարմարավետությանը, թիմային փոխգործակցության բարձրացմանը և կազմակերպության գործունեության արդյունավետությանը:

Conflicts or conflictual situations are an integral part of human activity and occur across various spheres of society, including the workplace, family, and public life. The library sector is no exception; its staff, composed of individuals from diverse social backgrounds and professional orientations, sooner or later encounters conflicts.

The primary aim of this study is to examine conflicts in the library conflict as a social and organizational phenomenon, identify its types, and propose effective resolution mechanisms, including possible legal and regulatory measures that contribute to the creation of a calm, professional, and problem-solving-oriented work environment and enhance team performance.

Based on this aim, several research problems were addressed, including the characterization of conflict in the library context, the classification of conflict situations, and the assessment of their management methods. The study was conducted using both primary and secondary sources, including books, scientific articles, and electronic resources, which enabled a comprehensive analysis of both theoretical and practical aspects of the problem.

As a result, the study seeks to identify effective strategies for managing conflict situations in libraries, which can promote staff psychological well-being, improve team collaboration, and enhance organizational efficiency.

Բանալի բառեր՝ Գրադարանային կոնֆլիկտ, կոնֆլիկտային իրավիճակ, աշխատանքային միջավայր, թիմային համագործակցություն, կազմա-

կերպական խնդիրներ, կոնֆլիկտների կառավարում, օրենսդրական կարգավորում, կոնֆլիկտի հոգեբանություն, գրադարանավար, ընթերցող:

Ինչպես հղել՝ Ղոչիկյան, Գ. (2025), Կոնֆլիկտները գրադարաններում, *Լրափու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(6), 5-26.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.2\(6\)-5](https://doi.org/10.54503/2953-8092.2025.2(6)-5)

How to cite (APA style): Ghochikyan, G. (2025), Conflicts in Libraries, *Herald of the Armenian Library Association*, 2(6), 5-26.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.2\(6\)-5](https://doi.org/10.54503/2953-8092.2025.2(6)-5)

Ներածություն

Կոնֆլիկտը երկու և ավելի անձանց միջև շահերի, նպատակների, արժեքների ընկալման տարբերություններով պայմանավորված անհամաձայնություն է և համապատասխան փոխհարաբերությունների, գործողությունների դրսևորում (МАКСУМОБА 2022, 68-75): Կոնֆլիկտը (լատիներեն «conflictus»՝ բախում, վեճ, տարաձայնություն) տեղ է գտել հասարակության և անհատի կենսագործունեության ամենատարբեր ոլորտներում: Այն դրսևորվում է տարբեր ձևերով և հանգեցնում տարաբնույթ հետևանքների՝ իրավիճակի պարզեցումից, բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացումից մինչև կործանարար երևույթներ (ՍՈՒՎԱՐՅԱՆ 2016, 393):

Ծագումով հրեա գերմանացի սոցիոլոգ և փիլիսոփա Ջորջ Սիմելը (1858-1918թթ.) համարվում է կոնֆլիկտների ժամանակակից տեսության դասական նախահայրերից մեկը: Առաջին անգամ Ջ. Սիմելը ներմուծել է «կոնֆլիկտի սոցիոլոգիա» եզրույթը և ուսումնասիրել է անհատի և հասարակության միջև կապը: Իր «Conflict and the Web of Group-affiliations» աշխատության մեջ նա առաջ է քաշել հետևյալ հարցերը (SIMMEL 1955, 196: Թարգմանությունը տե՛ս ՉԵԼԴԵԼԻՆ 2007, 37).

✓ «իրական» է արդյոք «առանձին վերցված» հասարակությունը,

✓ «իրական» է արդյոք «առանձին վերցված» անհատը,

✓ ի՞նչ կապ կա այդ երկու «իրականությունների» միջև:

Կոնֆլիկտը հասկանալու համար անհրաժեշտ է այն ուսումնասիրել՝ ի՞նչ է տեղի ունեցել և ին՞չ պայմաններում: Ուսումնասիրելու համար առկա են տեսական երկու մոդելներ՝ կառուցվածքային և գործընթացային: Կառուցվածքային մոդելն ուսումնասիրում է առաջացման պայմանները և պարզաբանում է այն գործոնները, որոնցով պայմանավորված է կոնֆլիկտի տեսակը, մասնակիցների կազմը, ուժգնությունը և այլն: Գործընթացային մոդելի շուրջ համախմբված տեսությունները դիտարկում են կոնֆլիկտը՝ որպես գործընթաց և ուսումնասիրում կոնֆլիկտի ծագումից մինչև դրա որոշակի լուծման ընթացքը, դրա առանձին փուլերի տրամաբանությունը (ՍՈՒՎԱՐ-ՅԱՆ 2016, 394):

Կոնֆլիկտները լինում են հորիզոնական (հավասար կարգավիճակի աշխատակիցների միջև), ուղղաձիգ (ղեկավար և ենթակա փոխհարաբերություններում), իրական կամ երևութական (մտացածին), տարերային կամ կազմակերպված, բացահայտ կամ քողարկված (լատենտային), երկարաժամկետ կամ կարճաժամկետ, սրընթաց կամ դանդաղընթաց, կանոնարգված կամ անկանոն, տեղային-սահմանափակ (լոկալ) կամ լայնածավալ-ընդգրկուն, պասիվ կամ հարձակողական, կառավարելի կամ անկառավարելի:

Կազմակերպության ներսում ընդունված է կոնֆլիկտները տարանջատել հետևյալ տեսակների՝ ներանձնային, միջանձնային, անձի ու խմբի միջև և միջխմբային: Դրանց գոյացման հիմնական պատճառները կարող են լինել արժեքային-աշխարհայացքային, վարվելակերպի հետ կապված, անհատական կամ խմբային շահերի,

փոխկապակցվածության, միջոցների սղության, աշխատանքի վատ կազմակերպման, բարոյահոգեբանական անբարենպաստ մթնոլորտի, ներկազմակերպական տեղեկատվության, այդ թվում՝ միջանձնային հաղորդակցման անհաջող կարգավորման (ՍՈՒՎԱՐՅԱՆ 2016, 394-395):

Կոնֆլիկտները գրադարաններում

Գրադարանը, ինչպես ցանկացած այլ կազմակերպություն, անցնում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին կոնֆլիկտների միջով: Կոնֆլիկտներն այստեղ ցուցիչ են այն բանի, որ առկա են որոշակի խնդիրներ:

Կոնֆլիկտները գրադարաններում կարող են դասակարգվել չորս հիմնական տեսակների, դրանք են՝

- ✓ Ղեկավար-գրադարանավար (գործատու-աշխատող),
- ✓ Գրադարանավար-գրադարանավար,
- ✓ Գրադարանավար-ընթերցող,
- ✓ Ընթերցող-ընթերցող (CEPTEBA 2017, 670-673):

1. Ղեկավար-գրադարանավար (գործատու-աշխատող) կոնֆլիկտները ընդգրկվում են ուղղաձիգ խմբում: Դրանք առաջանում են հիմնականում աշխատանքային սխալ բաշխվածության, սխալ վարձատրության, անբարենպաստ աշխատանքային պայմանների, պաշտոնների սխալ տրամադրման և այլ դեպքերում: Այդ թվում, կարող են առաջանալ մի շարք խնդիրներ, երբ գործատուն իրականացնում է աշխատանքային պարտականությունների փոփոխություններ, աշխատակցի կողմից իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում կամ այլ դեպքեր, որոնցից կարող են առաջանալ մի շարք վեճեր:

Կոնֆլիկտային իրավիճակների պատճառները հաճախ արմատավորված են կառավարման գործունեության թերությունների և

սխալների մեջ, երբ առաջացած լարվածության մեղավորը գրադարանի ղեկավարն է: Որպես գրադարանային թիմում կոնֆլիկտների հանգեցնող կառավարման գործունեության բնորոշ թերության օրինակ կարելի է նշել գրադարանի կառուցվածքային ստորաբաժանումների և դրա աշխատակիցների գործունեությունը կարգավորող կառավարման փաստաթղթերի (կանոնակարգեր, աշխատանքային նկարագրություններ, գործընթացային քարտեզներ և այլն) բացակայությունը կամ վատ որակը: Սա հանգեցնում է կոնֆլիկտների, որոնք կապված են աշխատակիցների՝ փաստաթղթերում չգրանցված պարտականությունները կատարելուց հրաժարվելու հետ:

Նոր աշխատակիցների հետ իրենց պարտականությունների կատարման վերաբերյալ կոնֆլիկտները ևս կարող են լինել, եթե ղեկավարը նախապես չի ծանոթացրել նրան աշխատանքի նկարագրությանը կամ առաջարկել է, որ նա աշխատանքը կատարի այնպես, ինչպես նախկին աշխատակիցը՝ առանց հաշվի առնելու նորի կրթությունը, աշխատանքային ունակությունները և այլ առանձնահատկություններ:

Կոնֆլիկտային իրավիճակները հաճախ առաջանում են բաժինների և աշխատակիցների միջև աշխատանքի ծավալի բաշխման սխալներից: Սա գրադարանների ղեկավարների ամենատարածված և բնորոշ սխալներից մեկն է, որը հանգեցնում է կոնֆլիկտների: Տարօրինակ է, բայց շատ գրադարաններ չեն կազմում ծրագիր, ուր կարտացոլվի աշխատանքի ողջ ծավալը և ժամանակահատվածը, չունեն աշխատանքների կատարման չափորոշիչներ:

Աշխատակիցների միջև կոնֆլիկտների պատճառ է նաև նրանց շրջանում հստակ տեղեկատվության բացակայությունը այն մասին, թե ինչ է նախատեսվում և ինչ նպատակով, ինչու են կայացվում տվյալ որոշումները և այլն: Վատ իրազեկվածությունը հանգեց-

նում է տարբեր լուրերի, ենթադրությունների ի հայտ գալուն: Այդ իսկ պատճառով ղեկավարների որոշման նկատմամբ բացասական վերաբերմունքը կապված է ոչ թե դրա իրական էության, այլ աշխատակիցների շրջանում ձևավորված դրա մասին աղավաղված պատկերացման հետ:

Կոնֆլիկտային իրավիճակների մեկ այլ խումբ կապված է գրադարանի աշխատակիցների բարոյական և նյութական խրախուսման հետ: Ամենից հաճախ նման կոնֆլիկտային իրավիճակներ են առաջանում կատարված մեծ աշխատանքների նյութական խրախուսման (հավելավճար, պարգևավճար, լրավճար և այլն) և դրա այլ ձևերի (պատվոգիր, շնորհակալագիր, համերգի տոմսեր և այլն) բաշխման ժամանակ:

Մի շարք կոնֆլիկտներ չեն լուծվում բանակցությունների միջոցով: Այդպիսի դեպքերում անհրաժեշտ է իրավական և դատական միջամտություն:

Ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 264 հոդվածի 1-ին կետի՝ գործատուի և աշխատողի միջև առաջացած տարաձայնությունները ենթակա են դատական քննության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով (ՕՐԵՆՍԳԻՐՔ 2004, հոդված 264): Այդ թվում, եթե իրականացվել է աշխատանքային պայմանների փոփոխություն, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի դադարեցում կամ լուծարման հետ անհամաձայնություններ, ապա աշխատակիցը դրանց վերաբերյալ փաստաթուղթը ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում իրավունք ունի դիմելու դատարան (ՄԵՀՐԱԲՅԱՆ 2016, 132) :

Աշխատակցի՝ իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում կամ նմանատիպ այլ դեպքերում գործատուն իրավունք ունի տալու

նկատողություն (<< աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդված), կարող է գրկել պարզևավճարից և նմանատիպ վճարներից, ժամանակավոր դադարեցնել աշխատանքային պայամագիրը, լուծարել այն (<< աշխատանքային օրենսգրքի 109-րդ և 113-րդ հոդվածներ): Գործատուի տված նկատողությունը աշխատողն իրավունք ունի բողոքարկել մեկ ամսվա ընթացքում (<< աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդված): Ըստ << աշխատանքային օրենսգրքի 229-րդ հոդվածի՝ նկատողությունն ուժի մեջ է մեկ տարի:

2. Գրադարանավար-գրադարանավար կոնֆլիկտները կարող են լինել ներանձնային, միջանձնային, անձի ու խմբի միջև և միջխմբային:

Գրադարաններում միջանձնային կոնֆլիկտները առավել հաճախ առաջանում են մեկ ստորաբաժանման ներսում աշխատող աշխատակիցների միջև, որոնք կապված են որոշակի աշխատանքային հարաբերություններով և պարտականություններով: Նման կոնֆլիկտները հաճախ սկսվում են հակասություններով և վեճերով: Դրանք պայմանավորված են աշխատախմբի ներսում եղած տարբեր պատկերացումներով և նույն աշխատանքի նկատմամբ տարբեր մոտեցումներով: Գործունեության ընդհանուր նպատակի գիտակցումը հանգեցնում է համահունչ աշխատախմբի ձևավորմանը: Հետևաբար, նման աշխատախմբում կոնֆլիկտների առկայությունը կարող է նպաստել գրադարանային գործի բարելավմանն ու զարգացմանը: Այն աշխատախումբը, ուր ոչ մի կոնֆլիկտ չի առաջանում, չի զարգանում, գտնվում է լճացման ու անկման վիճակում:

Գրադարանային աշխատակազմում կոնֆլիկտներ կարող են առաջանալ ոչ միայն գործնական հիմքերի վրա, այլև ներքին միջարք պատճառներով, երբ կոնֆլիկտը կապված չէ կոնկրետ առարկայի հետ, այլ կոնկրետ անձի կամ անձանց հետ: Նման կոնֆլիկտ-

ները կոչվում են հուզական: Դրանց ծագման աղբյուր կարող է լինել անվստահությունը, որը գալիս է անցյալից, կողմնակալ դատողությունից, հակակրանքից և այլն: Նման միջանձնային կոնֆլիկտներն ամենից հաճախ դեստրուկտիվ կոնֆլիկտներն են, քանի որ այստեղ խնդրի գործնական քննարկումը փոխարինվում է փոխադարձ դժգոհությունների և թշնամանքի արտահայտմամբ, որոնք չեն կարող բացասաբար չանդրադառնալ աշխատանքային հարաբերությունների վրա (ԶԵԼԴԵԼԻՆ 2007, 87): Դրանք կործանում են ընդհանուր աշխատանքային մթնոլորտը և ազդում աշխատանքի արդյունավետության վրա:

Մեկ այլ տեսակ են աշխատակցի և խմբի միջև կոնֆլիկտները: Խումբը կարող է լինել կամ կառուցվածքային ստորաբաժանման աշխատակազմ, կամ դրա շրջանակում ձևավորված ոչ ֆորմալ խումբ: Այստեղ կոնֆլիկտի հիմքում հաճախ ընկած են խմբային վարքագծի նորմերը, որոնց հետ մեկ կամ մյուս աշխատակիցը համաձայն չէ:

Միջխմբային կոնֆլիկտները կարող են առաջանալ ինչպես կառուցվածքային միավորի ներսում, երբ աշխատակազմը «բաժանվել» է առնվազն երկու խմբի, այնպես էլ կառուցվածքային միավորների միջև, երբ տարակարծությունը կապված է կառուցվածքային միավորների կողմից լուծվող խնդիրների հակասությունների, մեկ կամ մի քանի բաժինների շահերի անհամապատասխանության հետ: Այստեղ հաճախ միանում են դիրքային կոնֆլիկտները, որոնք կապված են ստորին ստորաբաժանումների նկատմամբ ամբարտաճան դիրքորոշման հետ:

Այժմ դիտարկենք միջանձնային և միջխմբային գործարար կոնֆլիկտների բնորոշ պատճառները: Դրանք կապված են գործնական իրավիճակներում գործելու տարբեր ընկալումների և գնահա-

տականների հետ: Սա հաճախ հանգեցնում է գրադարանավարների տարբեր կատեգորիաների միջև անհամաձայնությունների: Այսպիսի կոնֆլիկտներ կարող են առաջանալ նաև ղեկավարի կողմից իրականացվող ցանկացած փոփոխության արդյունքում, երբ գրադարանավարների մի խումբը հավանություն է տալիս փոփոխություններին, իսկ մյուսը՝ ոչ: Կարող են նաև առաջանալ այնպիսի խնդիրներ, երբ գրադարանավարների մի խմբի մոտ ցանկություն է առաջացել բարեփոխումների առաջարկություններ ներկայացնել, սակայն մնացածը կողմ չեն փոփոխություններին:

Շատ են հանդիպում դեպքեր, երբ աշխատակիցներն ընտելանում են նույն ոճով աշխատանքի դիմաին և ցանկություն չունեն փոխել այն: Այս դեպքում նրանք դիմադրում են նորություններին, փոփոխություններին համակերպվում են դժկամությամբ: Այսպիսի կոնֆլիկտները կարող են լուծվել երկու ձևով. առաջին դեպքում կարող է միջամտել անմիջապես ղեկավարությունը, երկրորդ դեպքում՝ խմբի փորձառու գրադարանավարը կամ խմբի ոչ լեգիտիմ ղեկավարը:

Գրադարաններում «հին» և «նոր» աշխատակիցների միջև կոնֆլիկտները տարածված երևույթ են: Խմբին միացող նոր աշխատակցին ժամանակ է պետք ինտեգրվելու համար: Նոր աշխատակցի հարմարվելուն պետք է օժանդակի ղեկավարը: Դրա հաջողությունը մեծապես կախված է «հին» աշխատակիցների բարեհամբույր կամ, ընդհակառակը, նորեկի նկատմամբ բացասական վերաբերմունքից:

Կոնֆլիկտային իրավիճակի առաջացման բնորոշ պատճառներից են երիտասարդ մասնագետի և «հին» աշխատակիցների միջև աշխատանքային անհամաձայնությունները: Բնորոշ են նաև աշխատակիցների կողմից աշխատանքային կարգապահության խախտումների (ուշացումներ, բացակայություններ և այլն), իրենց պարտականությունների նկատմամբ անփույթ վերաբերմունքի, վատ աշխա-

տանքի հետ կապված կոնֆլիկտները: Կարգապահական նորմերը պահպանող աշխատակիցները նյարդայնանում են գործընկերոջ ճշտապահության, ճշգրտության, բարեխղճության պակասից, նրա ծուլությունից, անգործությունից, իր պարտականությունների նկատմամբ վատ վերաբերմունքից և այլն:

Առաջնային խմբում ձևավորված հաղորդակցության կանոնների և նոր աշխատակցի միջև կազմակերպչական կոնֆլիկտները, որը ձգտում է հակադրվել խմբին, դիմադրել խմբային ազդեցությանը, հաստատել իրեն ծանոթ վարքագծի նորմերը, նույնպես «անհատականություն-խումբ» կոնֆլիկտների շարքից են: Քանի որ նոր աշխատակիցը «չի կարող ուրիշի տանը իր կանոնները թելադրել», նման ցանկությունն անխուսափելիորեն առաջացնում է գրադարանավարի և խմբի միջև բախում: Լուծումն այդ կոնֆլիկտի պատճառների վերլուծությունն է: Հիմնական պատճառն այն է, որ նոր գրադարանավարն իրեն ավելի գիտակ է համարում, քան խմբի մյուս անդամները. գրադարանային գործի նկատմամբ արհամարհական վերաբերմունք, որը հատկապես տարածված է գրադարանային կրթություն չունեցող և գրադարանում իրենց աշխատանքը ժամանակավոր համարող աշխատակիցների շրջանում: Նման արհամարհանքը անխուսափելիորեն փոխանցվում է նաև գործընկերներին:

Գործարար կոնֆլիկտների հետ մեկտեղ, գրադարանային թիմերը բնութագրվում են նաև անձնական (հուզական) հարաբերությունների վրա հիմնված կոնֆլիկտներով: Դրանք ամենից հաճախ առաջանում են բնավորության, անհատականության գծերի տարբերությունների հիման վրա, ինչը գործնականում հաճախ հանգեցնում է փոխադարձ թշնամանքի: Երբ գրադարանավարների խմբերի միջև առաջանում են անհամաձայնություններ և բախումներ, յուրաքանչյուր խումբ սկսում է մյուս խմբի անդամներին ընկալել որպես

հակառակորդների «Մենք-Նրանք» սկզբունքով: Առաջանում է անբավարար համեմատություն (մի խմբի արժանիքները գերազնահատվում են, իսկ մյուսինը՝ թերազնահատվում), ինչը, բացասաբար է անդրադառնում գրադարանավարների գործնական շփումների վրա: Փոխադարձ թշնամանքի և օտարացման վրա հիմնված նման կոնֆլիկտների վտանգն այն է, որ դրանք հաճախ ունենում են գրադարանային թիմի առանձին աշխատակիցների կամ խմբերի միջև թաքնված բախման բնույթ:

Գրադարանավարների միջանձնային կոնֆլիկտների դեպքում անհրաժեշտ է նաև տարբերակել դրանց առաջացման պատճառները: Դրանց թվում կարելի է առանձնացնել գրադարանավարի հուզական վարքագծի հետ կապված պատճառները (հոգնածություն, գերլարվածություն, ինքն իրենից և ուրիշներից դժգոհություն, իր նկատմամբ կատարված անարդարության զգացում և այլն): Նման հոգեբանական «ծախողումների» պատճառները կարող են նաև թաքնված լինել աշխատանքային շփումներից դուրս: Այսպիսով, տնից աշխատանքի բերված վեճերի և խնդիրների արձագանքները հաճախ ծառայում են որպես աշխատանքային կոնֆլիկտի պատճառ: Հոգեբանական «խափանումները» բնորոշ են ցանկացած մարդու: Դրանք հաղթահարելու համար կարևոր է կարողանալ վերահսկել իրեն: Մյուս կողմից, եթե այդ բացասական գծերը անընդհատ չեն դրսևորվում, չեն հանդիսանում տվյալ գրադարանավարի կայուն հոգեբանական բնութագրերը, ապա կոնֆլիկտային իրավիճակը համեմատաբար հեշտությամբ լուծվում է առանց միջամտությունների, իսկ հետագա աշխատանքային շփումներում կարող է ընդհանրապես չառաջանալ (BAHEEB 2002, 61-82):

3. Գրադարանավար-ընթերցող կոնֆլիկտներ: Սանկտ Պետերբուրգի մշակույթի և արվեստի պետական համալսարանը գրա-

դարանային կոնֆլիկտոլոգիայի խնդիրների վերաբերյալ իրականացրել է մի շարք հետազոտություններ: Դրանք ցույց են տվել, որ գրադարանավարների մեծամասնությունը դրական բնութագրեր է վերագրում իրենց գործընկերներին, իսկ բացասական՝ ընթերցողներին, ինչը վկայում է ընթերցող-գրադարանավար համակարգի միջև վատ հաղորդակցության, ինչպես նաև գրադարանային մասնագետների սոցիալ-հոգեբանական ճշտապահության ցածր մակարդակի և գրադարանային կոնֆլիկտոլոգիայի ոլորտում նրանց գիտելիքների պակասի մասին: Ինչպես արդեն նշվեց, աշխատողների միջև կոնֆլիկտային իրավիճակների մեծ մասը պայմանավորված է սոցիալ-հոգեբանական պատճառներով, մասնավորապես գրադարանային մասնագիտության առանձնահատկություններով: Սոցիոլոգիական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գրադարանավարների և ընթերցողների միջև կոնֆլիկտները ամենից հաճախ առաջանում են տեսակետների տարբերության պատճառով, քանի որ գրադարանավարներն իրենց աշխատանքը համեմատում են ստեղծագործական աշխատանքի հետ, իսկ ընթերցողներն, ընդհակառակը, ավելի շատ գրադարանը դիտարկում են որպես ծառայությունների ոլորտ (Сергеева 2017, 670-673):

Գրադարավար-ընթերցող կոնֆլիկտների մեծ մասն առաջանում է ընթերցողներին սպասարկելիս: Կոնֆլիկտները հաճախ առաջանում են սահմանափակ ֆինանսական, աշխատանքային և նյութական ռեսուրսների պատճառով, ինչը նշանակում է՝

- ✓ պահանջարկ ունեցող գրականության անբավարար օրինակներ,
- ✓ որոշակի գրականություն տանը տրամադրելու անհնարիություն,

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

✓ ցանցային տեղեկատվական ռեսուրսների անհասանելիություն,

✓ ընթերցասարահներում տեղերի անբավարար քանակ,

✓ ընթերցողների պատվերների դանդաղ կատարում,

✓ հերթեր սպասարկման բաժիններում,

✓ ցածր որակի վճարովի ծառայություններ (МАКСУМОВА 2022, 68-75):

Նման կոնֆլիկտների պատճառներից են գրադարավարի կողմից ընթերցողի հարցումների անտեսումն ու հարցումը բավարարելու անկեղծ ցանկության բացակայությունը: Կոնֆլիկտի մեկ այլ հաճախակի հանդիպող պատճառ է ընթերցողների և գրադարանային աշխատողների տեղեկատվության պակասը: Ընթերցողների տեղեկատվության պակասի պատճառ հանդիսանում են տեղեկատվական իմացության ցածր մակարդակը, ավանդական և էլեկտրոնային որոնման համակարգերի օգտագործման բարդությունը, պահանջարկի փոփոխություններին դանդաղ դանդաղ արձագանքը, տեղեկատվական կարիքների անորոշությունը:

Գրադարանավար-ընթերցող կոնֆլիկտները հաճախ առաջանում են գրքեր և այլ նյութեր արգելելու, սահմանափակելու կամ գրաքննության փորձերի պատճառով: Ըստ Statista կայքի տվյալների՝ 2023 թ. ԱՄՆ գրադարանները գրքերի մուտքն արգելելու կամ սահմանափակելու 1247 փորձ են կատարել, որոնք ազդել են 4240 եզակի հրատարակությունների վրա¹: Այս խնդրահարույց գրքերի գրեթե կեսը նվիրված էր LGBTQIA+ (Lesbian, Gay, Bisexual, Transgender, **Q**ueer/**Q**uestioning, Intersex, Asexual/Ally and others) կամ BIPOC (Black, Indigenous, and **P**eople **o**f Color) խնդիրներին: Գրքերի գրա-

¹ Statista <https://www.statista.com/> (22.12.2025)

քննության ջանքերն առավել հաճախ նախաձեռնում են հովանավորները (28%), ծնողները (24%) և այլ խմբեր (21%)։ գրադարաններն ու ուսուցիչներն իրենք հազվադեպ են նախաձեռնում նման գործողություններ (3%)։ Նման կոնֆլիկտների մեծ մասը տեղի է ունենում հանրային գրադարաններում (54%) և դպրոցական գրադարաններում (39%)։

Որոշ օրենքները նպաստեցին գրադարաններում կոնֆլիկտների առաջացմանը։ Օրինակ, Ֆլորիդայում 2023 թ. հուլիսից մինչև 2024 թ. հունիսը դպրոցական գրադարաններից առգրավվել է 4561 գիրք, ինչը շատ ավելին է, քան ցանկացած այլ նահանգից։ Միջազգային մակարդակում գրադարանային կոնֆլիկտները կարող են ունենալ այլ ձևեր, ինչպես, օրինակ, Հոնկոնգում, որտեղ իշխանությունները 2020 թ. Ազգային անվտանգության մասին օրենքների ընդունումից հետո հանրային գրադարաններից հանել են ժողովրդավարական ուղղվածության գրքեր։

4. Ընթերցող-ընթերցող կոնֆլիկտներ։ Այդպիսի կոնֆլիկտները հատկապես երևում են բարձրագույն ուսումնական հաստատությունների գրադարաններում, երբ առկա է ուսումնական գրքերի անբավարար քանակ և ուսանողների կողմից մեծ պահանջարկ։ Երկու ընթերցողների կողմից միևնույն գրքի պահանջը հանգեցնում է ներքին հոգեբանական թշնամանքի։ Վերջնական բախումը, սակայն, տեղի է ունենում գրադարանավարի հետ, քանի որ նա է գիրք տրամադրողը։ Հարց-բողոք է առաջանում՝ ինչու՞ է գիրքը տրվել ուրիշին, ոչ թե իրեն։ Այդպիսի հոգեբանական պատկեր ունեն հատկապես նոր ընդունված ուսանողները, որոնք դեռ պատկերացում չունեն բուհական կյանքից, իրենք դեռ ապրում են դպրոցական կյանքով, որտեղ յուրաքանչյուր առարկայի համար առկա են ուսումնական դասագրքեր։ Հաջորդ կուրսերում իրենք արդեն ընտելանում են, որ

յուրաքանչյուր առարկայի համար կարող են օգտվել տարբեր աղբյուրներից:

Կոնֆլիկտների կառավարման մեթոդներ

Շատ դեպքերում գրադարանային աշխատախմբում կարելի է հետևել կոնֆլիկտի առաջացման և զարգացման հետևյալ տարբերակին. գործնական վեճ, որի ընթացքում կողմերը փորձում են փոխադարձ համաձայնության գալ: Եթե դրան հասնել հնարավոր չէ, ապա հարաբերություններում լարվածություն է առաջանում, անհամաձայնության ոլորտն ընդլայնվում է՝ քննարկման մեջ այլ հարցերի շուրջ անհամաձայնություններ ներառելու և «անձնական» դառնալու պատճառով: Եթե նման կոնֆլիկտային իրավիճակը ժամանակին չի «մարվում», այն վերածվում է բաց կոնֆլիկտի, որտեղ ոչ թե գործնական վեճն է դուրս գալիս առաջին պլան, այլ հոգեբանական կոնֆլիկտը, հակառակորդների թշնամանքը՝ միմյանց նկատմամբ: Առանձին թեմա են միջխմբային կոնֆլիկտները, երբ խախտվում են խմբային պահանջները և սոցիալ-հոգեբանական միջավայրը, որոնք ներկայացնում են խմբում միջանձնային հարաբերությունների մանրամասն բնութագիրը: Հաճախ միջխմբային կոնֆլիկտը ծագում է միջանձնային կոնֆլիկտի հիման վրա, երբ դրա մասնակիցներին միանում են իրենց աջակցող կողմնակիցները: Այս դեպքում միջանձնային կոնֆլիկտը դառնում է միջխմբային:

Ուստի անհրաժեշտ է մշակել կոնֆլիկտների կառավարման հստակ մեթոդաբանություն՝ այն չխորացնելու և վաղ փուլում շտկելու համար: Կոնֆլիկտների կառավարումը կարող է իրականացվել մի շարք մեթոդներով, սակայն յուրաքանչյուր ստեղծված իրավիճակի համար կարող են կիրառվել անհատական մեթոդներ: Առանձնացնենք մի քանի հիմնական մեթոդներ, որոնք ամենից շատ են կիրառվում կոնֆլիկտային իրավիճակներում: Դրանք են.

✓ Հարցի փակման մեթոդ: Այս մեթոդը ենթադրում է կողմերի բարեկամական ծանոթացում միմյանց, նրանցից մեկի (կամ երկուսի) օրինականության ընդհանուր ճանաչում և, այս հիմքով, կոնֆլիկտի դադարեցում: Այս մեթոդը կիրառելի է այն դեպքերում, երբ կողմերն ընդունում են օբյեկտիվ ճշմարտությունը (ուժեղ փաստարկների առկայության դեպքում, գիտական վեճի, արքիտրաժային գործընթացի և այլնի դեպքում):

✓ Ուժային ճնշման մեթոդ: Սա հարկադրանքի մեթոդ է՝ վարչական, տնտեսական, բարոյական: Այն պահանջում է, որ ղեկավարն ունենա հզոր իշխանություն և հեղինակություն: Այս մեթոդն արդարացնում է իրեն այն դեպքերում, երբ խնդրի խորը ուսումնասիրության համար ժամանակ չկա (արտակարգ իրավիճակում, ճգնաժամային իրավիճակում և այլն), սակայն այն ենթադրում է միայն կոնֆլիկտի ժամանակավոր կասեցում, որը կարող է կրկնվել կամ ավելի բարդանալ հետագայում:

✓ Հակասությունների հարթեցման մեթոդ: Այս մեթոդը սովորաբար ներառում է երրորդ անձի մասնակցությունը, որի խնդիրն է նվազեցնել անհամաձայնությունները, շտկել և գտնել ընդհանուր լեզու և այլն: Մեթոդը լավ է, երբ կոնֆլիկտի մթնոլորտը լարված չէ, չկա ագրեսիա, չկա թշնամանք: Այս մեթոդի արդյունավետությունը մեծապես որոշվում է «հարթողի» անձնական որակներով և խնդիրը լուծելու պատրաստվածությամբ:

✓ «Շարժում դեպի» մեթոդ: Սա փոխզիջման, սակարկության, որոշ պահանջներից հրաժարվելու ուղի է՝ կոնֆլիկտի մյուս կողմի համաձայնության դիմաց: Փոխզիջումը պարունակում է ներքին կոնֆլիկտը. մի կողմից հնարավոր է հարթել այն, մյուս կողմից՝ դրա պատճառները մնում են չպարզաբանված: Հետևաբար, փոխզիջումը հաճախ համարվում է ժամանակավոր, մարտավարական միջոց:

Բացի այդ, փոխզիջումը չի գործում այնտեղ, որտեղ կա օբյեկտիվ ճշմարտություն:

✓ Կոնֆլիկտից խուսափելու մեթոդ: Կոնֆլիկտի ընթացքում վեճի մեջ մտնելիս կողմերը սովորաբար ամեն ինչ անում են ոչ թե այն լուծելու, այլ իրենց օգտին ավելի ու ավելի նոր փաստարկներ հորինելու համար: Արդյունքում, բախումը սրվում է: Ստացվում է արատավոր շրջան: Փորձելով արագ լուծել վեճը իրենց օգտին՝ կողմերը ձգձգում և սրում են կոնֆլիկտը: Ինչ վերաբերում է «վեճում ծնվող ճշմարտության» մասին հայտնի արտահայտությանը, ապա այստեղ, ակնհայտորեն, դա նշանակում է գիտական վեճ, որը վարվում է «ստերիլ» պայմաններում՝ խիստ կանոններով (МАКСИМОБА 2022, 68-75):

Նշենք, որ Ռուսաստանի ազգային գրադարանի մեթոդաբանները մշակել են քայլեր՝ գրադարանավար-ընթերցող կոնֆլիկտները հարթելու համար: Նրանք խորհուրդ են տալիս.

✓ լսել ընթերցողին՝ հասկանալու համար նրա բողոքի նշանակությունը, տալով նրան լիցքաթափվելու հնարավորություն,

✓ չառարկել, հակառակ դեպքում առարկությունը կբարձրացնի թշնամանքի զգացումը,

✓ թյուրիմացությունից խուսափելու համար կրկնել ընթերցողի հիմնական հայտարարությունները,

✓ եթե ընթերցողի զայրույթը հանդարտվել է, ապա երկկողմանի փոխզիջման ուղիներ փնտրել,

✓ չվախենալ փոխզիջումից, չամաչել ներողություն խնդրելուց,

✓ եթե ընթերցողը սխալ է, նրան հնարավորություն տալ պահպանել արժանապատվության զգացումը,

✓ փորձել հնարավորինս ընդգծել ընկերասիրությունը և կոնֆլիկտը վերացնելու ցանկությունը,

✓ պահպանել սեփական արժանապատվությունը, մնալ «հավասարը հավասարի» դիրքում,

✓ եթե ընթերցողը ճիշտ է, ապա փորձել հնարավորինս շուտ շտկել թույլ տված սխալը, քանի որ ձգձգումը միայն կխորացնի կոնֆլիկտը,

✓ եթե սխալը շտկելը դժվար է, խնդրել ընթերցողին հնարավորինս ճշգրիտ հիմնավորել իր պահանջը և մեղադրանքը,

✓ առաջարկել ընթերցողին ձևակերպել ցանկալի վերջնական արդյունքը,

✓ կոնֆլիկտային խնդիրը դիտարկել՝ որպես դասագրքի խնդիր և փնտրել դրա լուծումը (BAHEEB 2002, 100-101):

Ամփոփում

Կատարված ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել, որ կոնֆլիկտները գրադարաններում անխուսափելի երևույթ են: Դրանք ունեն բազմաշերտ բնույթ և կարող են դրսևորվել տարբեր մակարդակներում՝ ղեկավար-աշխատող, աշխատակից-աշխատակից, գրադարանավար-ընթերցող և ընթերցող-ընթերցող փոխհարաբերություններում, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է լուծման առանձնահատուկ մոտեցում: Կոնֆլիկտների առաջացման հիմնական պատճառները պայմանավորված են ոչ միայն գործառնական և կազմակերպչական թերություններով, այլև սոցիալ-հոգեբանական գործոններով՝ արժեքային տարբերություններով, հաղորդակցության խաթարումով, հուզական լարվածությամբ և փոփոխություններին դիմադրությամբ: Կառավարման անարդյունավետ մեխանիզմները, մասնավորապես՝ հստակ կարգավորող փաստաթղթերի բացակայությունը, պարտականությունների ոչ հստակ բաշխումը և աշխատակիցների վատ իրազեկվածությունը, էականորեն խորացնում են կոնֆլիկտային իրավիճակները գրադարանային միջավայրում:

Կոնֆլիկտների արդյունավետ կառավարումը հնարավոր է միայն համալիր մոտեցման դեպքում՝ համադրելով կազմակերպչական, հոգեբանական և իրավական մեխանիզմները: Առաջացող կոնֆլիկտների կառավարման մեթոդները (փոխզիջում, միջնորդություն, հարթեցում, իրավական կարգավորում և այլն) կարող են կիրառվել՝ կախված կոնֆլիկտի տեսակից, խորությունից և մասնակիցների հոգեբանական պատրաստվածությունից: Գրադարաններում առողջ, համագործակցային աշխատանքային միջավայրի ձևավորումը նպաստում է ոչ միայն կոնֆլիկտների նվազեցմանը, այլև գրադարանային աշխատակազմի արդյունավետության, ծառայությունների որակի և կազմակերպության ընդհանուր կայուն զարգացման բարձրացմանը:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ՄԵՀՐԱԲՅԱՆ 2016 – Մեհրաբյան, Լ. (2016), *Աշխատանքային իրավունք: Ուսումնական ձեռնարկ*, Երևան, Տնտեսագետ, 139 [Mehrabyan, L. (2016), *Ashkhatanqayin iravunq: Usumnakan dzernark*, Yerevan, Tntesaget, 139];

ՉԵԼԴԵԼԻՆ 2007 – Չելդելին, Ս. (խմբ.) (2007), *Կոնֆլիկտ: Վերլուծությունից մինչև միջամտություն*, Երևան: Զանգակ-97, 464 [Cheldelin, S. (edt.) (2007), *Conflict: From Analysis to Intervention*, Yerevan, Zangak-97, 464];

ՍՈՒՎԱՐՅԱՆ 2016 – Սուվարյան, Յ. (խմբ.) (2016), *Մենեջմենթ: Դասագիրք բուհերի տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողների համար*, Երևան, Տնտեսագետ, 672 [Suvaryan, Yu. (edt.) (2016), *Menejment: Dasagirq buheri tntesagitakan masnagitutyunneri usanoghneri hamar*, Yerevan, Tntesaget, 672];

ՕՐԵՆՍՊԻՐՔ 2004 – [ՀՀ աշխատանքային օրենսգիրք](#), (22.12.2025)

ВАНЕЕВ 2002 – Ванеев, А. (2002), *Конфликты в библиотеке: Предупреждение и разрешение*, Санкт Петербург, Профессия, 124 [Vaneev, A.

(2002), *Konflikti v biblioteke: Preduprezhdenie i razreshenie*, Sankt Peterburg, Professiya, 124];

МАКСУМОВА 2022 – Максумова, М. (2022), Конструктивные методы управления конфликтами в библиотеках, *INFOLIB: Информационно-библиотечный вестник*, Ташкент, 2, 68-75 [Maksumova, M. (2022), Konstruktivnie metodi upravlenie konfliktami v bibliotekakh, *INFOLIB: Informatcionno-bibliotecnii vestnik*, Tashkent, 2, 68-75];

СЕРГЕЕВА 2017 – Сергеева, А. (2017), Конфликтные ситуации в библиотечной практике, *Форум молодых ученых*, 9(13), 670-673 [Sergeeva, A. (2017), Konfliktntie situatsii v bibliotechnoy praktike, *Forum molodikh uchenikh*, 9(13), 670-673];

SIMMEL 1955 – Simmel, G. (1955), *Conflict and the Web of Group-affiliations*, Translated by K. H. Wolff and R. Bendix, New York, The Free Press, 2010, 196.

CONFLICTS IN LIBRARIES

GAREGIN GHOSHIKYAN

Scientific Library of the Armenian State University of Economics

Keywords: Library conflict, conflict situation, working environment, team collaboration, organizational problems, conflict management, legal regulation, psychology of conflict, librarian, reader.

Based on the conducted study, it can be concluded that conflicts in libraries are an inevitable phenomenon. They are multidimensional in nature and may manifest at various levels, including manager–employee, employee–employee, librarian–reader, and reader–reader interactions, each of which requires a specific approach to resolution. The primary causes of conflicts are determined not only by functional and organizational shortcomings but also by socio-psychological factors such as differences in values, disruptions in communication, emotional tension, and resistance to change.

Ineffective management mechanisms-particularly the absence of clear regulatory documentation, unclear distribution of responsibilities, and insuffi-

cient staff awareness-significantly exacerbate conflict situations within the library environment. Effective conflict management is possible only through a comprehensive approach that integrates organizational, psychological, and legal mechanisms.

The proposed conflict management methods (compromise, mediation, reconciliation, legal regulation, etc.) may be applied depending on the type, depth, and intensity of the conflict, as well as the psychological preparedness of the participants. The formation of a healthy and collaborative working environment in libraries contributes not only to the reduction of conflicts but also to increased staff efficiency, improved service quality, and the overall sustainable development of the organization.

**FRONT-END ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ**

Flib.sci.am կայքի օրինակով*

ՀՏԴ: 02(479.25):004

DOI: 10.54503/2953-8092.2025.2(6)-27

ԱՍՏԴԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան

ORCID: [0009-0006-1817-1408](https://orcid.org/0009-0006-1817-1408)

Սույն ուսումնասիրության մեջ ընդգծվում է Front-end տեխնոլոգիաների դերը ժամանակակից գրադարանների թվային հարթակների ձևավորման գործում՝ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի flib.sci.am հարթակի օրինակով: Քննարկվում են օգտվողի միջերեսի, օգտագործողի փորձի և մատչելիության բարելավմանն ուղղված ժամանակակից տեխնոլոգիական լուծումները, ինչպիսիք են HTML, CSS, JavaScript, React.js և այլ առաջադեմ գործիքներ: Վերլուծվում են գրադարանների թվային հարթակների ձևավորման ընթացքում ի հայտ եկող տեխնիկական խնդիրները և մարտահրավերները: Արդյունքում ընդգծվում է Front-end ծրագրավորման ռազմավարական նշանակությունը՝ որպես գրադարանային ծառայությունների արդյունավետության, մատչելիության և օգտատերերի փորձի բարելավման առանցքային գործոն:

This study highlights the role of Front-end technologies in the development of digital platforms of modern libraries, using the flib.sci.am platform of the Fundamental Scientific Library of the NAS RA as a case study. It examines contemporary technological solutions aimed at improving user interface design,

* Հոդվածը ներկայացվել է 08.09.2025, գրախոսվել է 13.10.2025, ընդունվել է տպագրության 05.12.2025:

The article was submitted on 08.09.2025, reviewed on 13.10.2025, accepted for publication on 05.12.2025.

user experience, and accessibility, such as HTML, CSS, JavaScript, React.js, and other advanced tools. The study analyzes the technical issues and challenges that arise during the design and maintenance of digital library platforms. As a result, it emphasizes the strategic importance of front-end development as a key factor in enhancing the efficiency, accessibility, and user experience of library services.

Քանալի բառեր՝ Front-end, միջերես, թվային գրադարան, վեբ բովանդակություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան:

Ինչպես հղել՝ Հովհաննիսյան, Ա. (2025), Front-end լուծումների կիրառումը գրադարանային հարթակներում. Flib.sci.am կայքի օրինակով, *Լրափու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(6), 27-39.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.2\(6\)-27](https://doi.org/10.54503/2953-8092.2025.2(6)-27)

How to cite (APA style): Hovhannisyany, A. (2025). Implementation of Front-End Solutions in Library Platforms: A Case Study of the Flib.sci.am Website, *Herald of the Armenian Library Association*, 2(6), 27-39.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.2\(6\)-27](https://doi.org/10.54503/2953-8092.2025.2(6)-27)

Ներածություն

Ժամանակակից գրադարանները չեն սահմանափակվում ավանդական գրադարանի գործառույթների նեղ շրջանակի մեջ: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն է տալիս թվային հարթակ տեղափոխել գրադարանային ծառայությունները: Այս համատեքստում Front-end մշակումը կարևոր դեր ունի՝ որպես օգտագործողի և համակարգի միջև կապող օղակ: Front-end-ը տեղեկատվական համակարգի այն մասն է, որը հասանելի է օգտագործողին: Այն ներառում է կայքի դիզայնը, ընտրացանկերը, որոնման դաշտը, էջերի կառուցվածքը և ամբողջ ինտերակտիվությունը (JONATHAN, SUPRIHADI 2023, 529-536):

Սույն աշխատանքի մեջ փորձել ենք բացահայտել Front-end -ի նշանակությունն ու դերը գրադարանների թվային հարթակների ձևավորման գործում՝ flib.sci.am հարթակի օրինակով, ինչպես նաև ցույց տալ, թե ինչպես կարող են ժամանակակից front-end տեխնոլոգիաները նպաստել գրադարանային ծառայությունների արդյունավետության բարձրացմանն ու տեղեկատվության մատչելիության ընդլայնմանը: Նպատակից ելնելով՝ առաջադրել ենք հետևյալ խնդիրները՝ ա. ներկայացնել Front-end-ի դերը գրադարանային թվային հարթակի ձևավորման գործում, բ. ներկայացնել գրադարանային վեբ միջավայրի միջերեսի ստեղծման համար առավել արդյունավետ տեխնոլոգիաները և գործիքները, գ. ուսումնասիրել հարթակների մատչելիության բարձրացմանն ուղղված տեխնոլոգիական և դիզայներական լուծումները, դ. բացահայտել թվային հարթակների ձևավորման ընթացքում գրադարանների առջև ծառացած հիմնական մարտահրավերները, ներկայացնել flib.sci.am հարթակի կիրառման փորձը՝ որպես գրադարանային թվայնացման հաջողված օրինակ:

Front-end-ը գրադարանային թվային հարթակի ձևավորման գործիք

Front-end-ը հանդիսանում է գրադարանի թվային հարթակի ստեղծման և գործարկման առանցքային բաղադրիչներից մեկը, քանի որ այն ապահովում է օգտվողի և տեղեկատվական համակարգի միջև կառուցվածքային և գործառնական փոխգործակցությունը: Այս փոխգործակցությունը ձևավորում է ճկուն, արդյունավետ և օգտագործողի համար մատչելի թվային միջավայր, որը թույլ է տալիս գրադարանային ռեսուրսների առավել նպատակային օգտագործում: Ժամանակակից գրադարանները, որպես տեղեկատվության պահպանման, տարածման և գիտելիքի փոխանցման կենտրոններ, իրենց թվային հարթակների միջոցով պարտավոր են ապահովել ոչ միայն

բովանդակության առկայություն, այլև դրա արդյունավետ ներկայացում և հասանելիություն օգտատերերի տարբեր խմբերի համար:

Front-end-ի ներդրումը գրադարանային միջավայրում ուղղակիորեն նպաստում է թվային ռեսուրսների մատչելիության բարձրացմանը, օգտագործման հարմարավետությանը և տեղեկատվության կառավարման գործընթացների ամբողջացմանը: Օգտվողին հասանելի միջերեսի որակը պայմանավորում է ոչ միայն տեղեկատվության որոնման արագությունը, այլև տվյալների ընկալման արդյունավետությունը, ինչը հատկապես կարևոր է գիտական գրադարանների պարագայում, որտեղ տեղեկատվության ծավալն ու բարդությունը պահանջում են հստակ կառուցվածք և տրամաբանական կազմակերպում (AWASTHI, MORE, VIEGAS 2022, 411-416):

Ժամանակակից վեբ տեխնոլոգիաների՝ HTML5, CSS3, JavaScript-ի, ինչպես նաև React.js և այլ Front-end տարբերակների կիրառումը հնարավորություն է տալիս ստեղծել դինամիկ, մոդուլային և բազմաֆունկցիոնալ միջերեսներ: Այս տեխնոլոգիաները ապահովում են տարբեր սարքերին հարմարեցված (responsive) դիզայն, ինչը կարևոր է՝ հաշվի առնելով օգտատերերի կողմից շարժական սարքերի լայն կիրառումը տեղեկատվության որոնման և օգտագործման գործընթացում: Ճկուն միջերեսների շնորհիվ հնարավոր է իրական ժամանակում թարմացնել տվյալները, ապահովել արագ որոնման գործիքները և բարելավել ընդհանուր միջավայրը:

Front-end լուծումների միջոցով տեղեկատվության ներկայացումը իրականացվում է ոչ միայն կառուցվածքային ճշգրտությամբ, այլև տեսողական գրավչությամբ, ինչը զգալիորեն բարելավում է օգտվողի ընկալումը և նպաստում գրադարանի թվային հարթակի ավելի լայն ընդունելությանը: Տեսողական հստակությունը, ընթերնելի տառատեսակների և գունային հավասարակշռված լուծումների

կիրառումը նվազեցնում են տեղեկատվական ծանրաբեռնվածությունը և հեշտացնում օգտվողի կողմնորոշումը թվային միջավայրում

Հարթակից օգտվողի համար խիստ կարևոր է բազմալեզու միջերեսի առկայությունը, որը հնարավորություն է տալիս տարբեր լեզվական խմբերի ներկայացուցիչներին օգտվել գրադարանի թվային ռեսուրսներից՝ առանց լեզվական խոչընդոտների: Մինևոյն ժամանակ, միջազգային WCAG¹ չափորոշիչներին համապատասխանությունը ապահովում է թվային հարթակի մատչելիությունը տեսողական, լսողական կամ շարժողական սահմանափակումներ ունեցող օգտվողների համար: Մատչելիության սկզբունքների պահպանումը գրադարանային միջավայրում ոչ միայն տեխնիկական պահանջ է, այլև գիտակրթական և սոցիալական պատասխանատվության դրսևորում:

Արդյունքում՝ Front-end ծրագրավորումը դառնում է գրադարանի թվային հարթակի ռազմավարական հիմնասյուներից մեկը, որի միջոցով ապահովվում է համապատասխանություն տեղեկատվական և տեխնոլոգիական միջազգայնորեն ընդունված չափանիշներին: Այն նպաստում է օգտատերերի համար հարմարավետության բարձրացմանը, տեղեկատվության հասանելիության արագացմանը և գիտական համայնքի համար գրադարանային ռեսուրսների գործնական արժեքի աճին: Միաժամանակ, Front-end լուծումները ստեղծում են հիմք հետագա արդիականացման, նորարարական տեխնոլոգիաների ներդրման և թվային գրադարանային ծառայությունների շարունակական բարելավման համար՝ ապահովելով գրադարանի կայուն զարգացումը ժամանակակից տեղեկատվական հասարակության պայմաններում:

¹ Web Content Accessibility Guidelines

Գրադարանային վեբ միջավայրի միջերեսի ստեղծման համար առավել արդյունավետ տեխնոլոգիաները և գործիքները

Գրադարանային վեբ միջավայրի միջերեսի ձևավորման գործում առանցքային դեր ունեն HTML, CSS և JavaScript տեխնոլոգիաները, որոնք հանդիսանում են ժամանակակից front-end ծրագրավորման հիմքը: Այս տեխնոլոգիաների համադրված կիրառումը հնարավորություն է տալիս ձևավորել կառուցվածքային, տեսողական և գործառնական առումով ամբողջական միջերեսներ, որոնք համապատասխան են գրադարանային ծառայությունների բովանդակային և գործնական պահանջներին:

HTML-ը (HyperText Markup Language) ապահովում է տեղեկատվության կառուցվածքային ներկայացումը՝ սահմանելով էջերի տրամաբանական կառուցվածքը, բովանդակության տրամաբանությունը և տվյալների փոխկապակցվածությունը: Գրադարանային վեբ միջավայրում HTML-ի ճիշտ և ստանդարտներին համապատասխան կիրառումը թույլ է տալիս համակարգված ներկայացնել մատենագիտական տվյալները, թվային փաստաթղթերը, որոնման արդյունքները այլ տեղեկատվական բլոկները: Կառուցվածքային հստակությունը հատկապես կարևոր է գիտական գրադարանների պարագայում, որտեղ մեծ ծավալի տվյալների ընկալումն ու որոնումը պահանջում են տրամաբանական և կանխատեսելի միջերես:

CSS-ը (Cascading Style Sheets) պատասխանատու է միջերեսի տեսողական ձևավորման և տարբեր սարքերին հարմարեցման համար: CSS-ի միջոցով սահմանվում են գունային լուծումները, տառատեսակները, դասավորությունը, տարրերի փոխհարաբերությունները, ինչը նպաստում է տեղեկատվության ընթերցելիության և ընկալելիության բարձրացմանը: Գրադարանային միջավայրում CSS-ի կիրառումը թույլ է տալիս ապահովել արձագանքող (responsive) դի-

զայն, որի շնորհիվ վեբ հարթակը հավասարապես արդյունավետ է աշխատում ինչպես համակարգչային, այնպես էլ շարժական սարքերում: Սա կարևոր նախապայման է գիտական տեղեկատվության հասանելիության ընդլայնման տեսանկյունից:

JavaScript-ը հանդիսանում է գրադարանային վեբ միջավայրի ինտերակտիվության և դինամիկ ֆունկցիոնալության հիմնական գործիքը: JavaScript-ի միջոցով հնարավոր է իրականացնել որոնման դինամիկ համակարգեր, ֆիլտրեր, տվյալների բեռնման օպտիմալ մեխանիզմներ, ինչպես նաև օգտատերերի գործողություններին արձագանքող տարրեր: Գրադարանային թվային հարթակներում JavaScript-ի կիրառումը զգալիորեն բարելավում է օգտվողի փորձը՝ նվազեցնելով գործողությունների քանակը և արագացնելով տեղեկատվության հասանելիությունը:

Վերոնշյալ տեխնոլոգիաների կիրառումը առավել արդյունավետ է դառնում ժամանակակից Front-end տարբերակների կիրառման դեպքում: React-ը, Vue-ն և Angular-ը լայնորեն կիրառվում են բարդ գրադարանային համակարգերում՝ շնորհիվ իրենց մոդուլային ճարտարապետության և ընդլայնելիության: Այս գործիքները հնարավորություն են տալիս բաժանել միջերեսն առանձին բաղադրիչների, որոնք կարելի է անկախ մշակել, թեստավորել և կրկնակի օգտագործել տարբեր համակարգերում:

Front-end-ի գործիքների կիրառումը նաև ամբողջացնում է տվյալների թարմացման և բեռնման գործընթացը՝ օգտագործելով տվյալների տարբեր մոդելներ և կառավարման մեխանիզմներ: Սա հատկապես կարևոր է գրադարանային միջավայրի համար, որտեղ անհրաժեշտ է աշխատել մեծ ծավալի մատենագիտական տվյալների, թվային հավաքածուների և արտաքին շտեմարանների հետ:

Արդյունքում գրադարանային հարթակները դառնում են ավելի արագ արձագանքող, կայուն և ճկուն:

Միջերեսի տեսողական և կառուցվածքային կայունության ապահովման տեսանկյունից կարևոր դեր ունեն CSS մեթոդաբանական համակարգերը: BEM (Block, Element, Modifier), Flexbox և Grid-ը հնարավորություն են տալիս ստեղծել միջերեսի ճիշտ դասավորված տարբերակներ, որոնք հեշտությամբ ձևափոխվում են տարբեր էկրանների և բովանդակության տեսակների դեպքում: Դիզայն համակարգերի կիրառումը ապահովում է միջերեսի տեսողական միասնականությունը և կրկնակի օգտագործվող բաղադրիչների ձևավորումը, ինչը զգալիորեն հեշտացնում է նախագծի սպասարկումը և հետագա արդիականացումը: Այս գործիքակազմի միջոցով ձևավորվում են կայուն և մատչելի վեբ հարթակներ, որոնք լիովին համապատասխան են գիտական համայնքի պահանջներին:

Հարթակների մալգեյիության բարձրացմանն ուղղված տեխնոլոգիական և դիզայնեական լուծումները

Գրադարանային թվային հարթակների արդյունավետության նախապայմաններից է մատչելիությունը, որին հասնելու համար անհրաժեշտ է առաջնային ուշադրություն դարձնել կայքի կառուցվածքի պարզությանը և տրամաբանությանը: Դա թույլ է տալիս օգտվողներին արագ կողմնորոշվել տվյալների բազմազանության մեջ, նվազեցնում է որոնման ժամանակը և բարձրացնում տեղեկատվության հասանելիությունը՝ առանց լրացուցիչ օգնության կամ ուղեցույցի:

Օգտագործողի համար խիստ կարևոր է որոնման համակարգի արդյունավետությունը, որն իր հերթին պահանջում է կառուցվածքի հստակություն, մետատվյալների ճիշտ դասակարգում, կարգավորումների ճկունություն: Արդյունքում, կարելի է գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը՝ անկախ տվյալների ծավալից և բարդությունից:

Գրադարանային հարթակների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պարզ որոնման գործիքները զգալիորեն բարձրացնում են օգտվողների ներգրավվածությունը և տեղեկատվության օգտագործման արդյունավետությունը, հատկապես գիտական տվյալների դեպքում, որոնք հաճախ պահանջում են ճշգրիտ ֆիլտրումներ:

Համակարգի օգտագործելիության ապահովման մեկ այլ կարևոր բաղադրիչ է Արձագանքող (Responsive) դիզայնի ներդրումը, որը թույլ է տալիս հարթակին արդյունավետ գործել տարբեր սարքերի և էկրանների չափերի վրա: Արձագանքող դիզայնը ապահովում է, որ կայքի միջերեսը պահպանի տեսողական և գործառնական համաչափությունը՝ լինի դա համակարգիչ, պլանշետ, սմարթֆոն կամ այլ շարժական սարք: Նմանապես, օգտվողները կարող են օգտագործել գրադարանի թվային ռեսուրսները, անկախ սարքի տեսակից:

Մատչելիության բարձրացման տեսանկյունից առաջնային նշանակություն ունի WCAG չափորոշիչների պահպանումը: WCAG ստանդարտները թույլ են տալիս վեբ հարթակները դարձնել մատչելի տեսողական, լսողական կամ շարժողական սահմանափակումներ ունեցող օգտվողների համար: Դրանց կիրառումից, օրինակ, կարելի է նշել ընթերցելի տառատեսակների և դինամիկ սահուն տարրերի օգտագործումը, ստեղնաշարով նավարկման հնարավորությունների ապահովումը, ինչպես նաև էկրանի ընթերցիչների հետ համատեղելիության պահպանումը: Այս մոտեցումը բարձրացնում է հարթակի սոցիալական ներառվածությունը, ստեղծում է արդիական, համընդհանուր մատչելի միջավայր, որը համապատասխանում է ժամանակակից տեխնոլոգիական և կրթական չափանիշներին:

Միջերեսների մշակման ժամանակ պարտադիր պետք է հիմնվել օգտվողների վարքագծի, պահանջների և կարիքների վերլուծության վրա: Այսպիսի դեպքերում, նվազագույնի են հասցվում թե-

րությունները, բարձրանում է գիտական համայնքի համար գրադարանային ծառայությունների գործնական արժեքը:

Թվային հարթակների ձևավորման ընթացքում գրադարանների առջև ծառացած հիմնական մարտահրավերները,

Գրադարանների թվային հարթակների ստեղծումն ու դրանց երկարաժամկետ պահպանությունը ուղեկցվում են մարտահրավերներով, որոնք պայմանավորված են կազմակերպչական, տեխնիկական և մարդկային գործոններով: Գրադարանները, որոնք ձգտում են ապահովել տեղեկատվության հասանելիություն, արդյունավետ կառավարման գործընթաց և ժամանակակից թվային ծառայություններ, ունեն մի շարք կարևոր խնդիրներ: Առաջնայիններից մեկը տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների սահմանափակությունն է, որը հաճախ խոչընդոտում է ժամանակակից տեխնոլոգիաների լիարժեք ներդրմանը և համակարգերի շարունակական արդիականացմանը:

Ծրագրային ապահովման մշտական թարմացումը մեկ այլ կարևոր մարտահրավեր է: Այն պահանջում է համապատասխան մասնագիտական գիտելիքներ, բարձր որակավորում ունեցող կադրերի մասնակցություն և համակարգերի անխափան աշխատանք ապահովելու մեխանիզմներ: Բացակայությունը կամ անբավարար մասնագիտական աջակցությունը կարող է հանգեցնել տեխնիկական խափանումների, որոնք անմիջական ազդեցություն են ունենում օգտվողների համար մատուցվող ծառայությունների որակի վրա:

Մեկ այլ մարտահրավեր է տվյալների անվտանգության և օգտվողների անձնական տեղեկատվության պաշտպանությունը: Տվյալների պահպանման և պաշտպանվածության ապահովումը պահանջում է համալիր մոտեցում՝ ներառելով կոդի անվտանգություն, սերվերի և տվյալների շտեմարանի պաշտպանվածություն, ինչպես նաև

մշտադիտարկման համակարգեր՝ իրական ժամանակում վտանգների կանխարգելման նպատակով:

Մարդկային ռեսուրսների պակասը ևս հանդիսանում է լուրջ մարտահրավեր: SS մասնագետների անբավարար ներգրավվածությունը սահմանափակում է գրադարանի կարողությունները՝ արդյունավետ կերպով սպասարկել, կառավարել և զարգացնել թվային հարթակները: Անբավարար մասնագիտական աջակցությունը կարող է նաև դժվարացնել նոր ծառայությունների ներդրումը, խոչընդոտել գոյություն ունեցող համակարգերի համալիր գործարկմանը և անվտանգության ապահովմանը:

Flib.sci.am հարթակի կիրառման փորձը

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի flib.sci.am հարթակը թվային զարգացման հաջողված փորձառություն է ուր կիրառված են ժամանակակից Front-end տեխնոլոգիաներ և օգտատերերի պահանջների վրա հիմնված դիզայներական մոտեցումներ: Այն ապահովում է պարզ, ճկուն և արձագանքող միջերես, որը հեշտացնում է օգտվողների կողմնորոշումը, տեղեկատվության որոնումն ու դիտումը՝ անկախ տվյալների քանակից կամ ձևաչափից:

Հարթակի կառուցվածքը ներառում է արդյունավետ որոնման և տվյալների ընտրության գործիքներ, որոնք թույլ են տալիս ապահովել արագ հասանելիություն գիտական նյութերին, նվազեցնելով տեղեկատվության որոնման ժամանակը և բարելավել տեղեկատվության մատուցման ճկունությունը: Օրինակ, հանրային օգտագործման առցանց քարտարանի համակարգի ինտեգրումը, տարբեր զտիչների կիրառումը, մետատվյալների խելամիտ դասակարգումը ստեղծում են ինտերակտիվ, օգտագործողի համար հարմարավետ միջավայր:

Flib.sci.am հարթակը համարվում է նաև փորձառական հարթակ՝ գրադարանի թվային ծառայությունների կատարելագործման և

նորարարական լուծումների փորձարկման համար: Հարթակի փորձառությունը ցույց է տալիս, որ ավանդական կառույց ունեցող գրադարանները ժամանակակից թվային լուծումների կիառմամբ կարող են վերափոխվել և դառնալ տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնական հարթակներ:

Հարթակի միջերեսը ձևավորված է օգտագործողի վարքագծի վերլուծության հիման վրա: Այս մոտեցումը հնարավորություն է տվել ճիշտ բաշխել որոնման գործիքները, ներկայացման ձևերը և ինտերակտիվ տարրերը՝ ապահովելով առավելագույն հարմարավետություն և արագ արձագանքող միջավայր: Responsive դիզայնի, բազմալեզու միջերեսի և WCAG ստանդարտներին համապատասխանության շնորհիվ հարթակը մատչելի է տարբեր խմբերի օգտատերերի համար՝ ներառյալ տեսողական, լսողական կամ շարժողական սահմանափակումներ ունեցողները:

Ամփոփում

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ Front-end ծրագրավորումը առանցքային նշանակություն ունի գրադարանների թվային հարթակների ձևավորման գործում: Այս գործիքակազմի ճիշտ և գրագետ կիրառումը խիստ կարևոր է՝ ճկուն, մատչելի, նավարկելի բովանդակություն ու միջերես ունենալու համար: Այսօր գրադարանները կանգնած են մի շարք մարտահրավերների առաջ, ներառյալ տեխնիկական և ֆինանսական սահմանափակումները, ծրագրային ապահովման թարմացման անհրաժեշտությունը, տվյալների անվտանգությունը և փորձառու կադրերի պակասը: Այս մարտահրավերների հաղթահարումից է կախված գրադարանային թվային միջավայրերի կայունությունը, արդյունավետությունը և երկարաժամկետ զարգացման հնարավորությունները: Գործիքակազմի և որակյալ մասնագետների

համագործակցության արդյունքում հնարավոր է հաղթահարել բոլոր դժվարությունները և հասնել ցանկալի արդյունքի

Օգտագործված գրականության ցանկ (References)

AWASTHI, MORE, VIEGAS 2022 – Awasthi, A., More, S., Warren V. (2022), Research and Analysis of the Front-end Frameworks and Libraries in Web Development, *International Journal for Research in Applied Science and Engineering*, 10(4), 411-416;

JONATHAN, SUPRIHADI 2023 – Jonathan, R., Suprihadi (2023), Development of Front-End Web Applications Utilizing Single Page Application Framework and React.js Library, *International Journal Software Engineering and Computer Science (IJSECS)*, 3(3), 529-536.

IMPLEMENTATION OF FRONT-END SOLUTIONS

IN LIBRARY PLATFORMS:

A Case Study of the Flib.sci.am Website

ASTGHİK HOVHANNISYAN

Fundamental Scientific Library National Academy

Keywords: Front-end, Interface, Digital Library, Web Content, Information Technologies, Fundamental Scientific Library of NAS RA.

Front-end development plays a key role in the creation of digital platforms for libraries. The proper and skillful use of this toolkit is crucial for ensuring flexible, accessible, and navigable content and interfaces. Today, libraries face a number of challenges, including technical and financial constraints, the need for software updates, data security concerns, and a shortage of experienced personnel. Overcoming these challenges is essential for the sustainability, efficiency, and long-term development of library digital environments. Through the collaboration of advanced tools and qualified specialists, it is possible to overcome all difficulties and achieve the desired results.

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՆ
*Մարտահրավերներ և հեռանկարներ****

ՀՏԴ: 02:37(479.25)

DOI: 10.54503/2953-8092.2025.2(6)-40

ԱՐՓԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան

ORCID: [0009-0000-0883-354X](https://orcid.org/0009-0000-0883-354X)

Ժամանակակից տեղեկատվական հասարակության պայմաններում գրադարանների արդյունավետ գործունեությունը մեծապես պայմանավորված է գրադարանային ոլորտում աշխատող մարդկանց մասնագիտական կրթությամբ և շարունակական զարգացմամբ: Հայաստանյան գրադարանները, ունենալով հարուստ տպագիր ժառանգություն և միաժամանակ կանգնած լինելով թվայնացման ու տեղեկատվական նոր պահանջների առջև, հափկապես կարիք ունեն բարձր որակավորում ունեցող գրադարանային մասնագետների:

Սույն ուսումնասիրության նպատակն է հիմնավորել գրադարանային մասնագիտական կրթության կարևորությունը հայաստանյան գրադարանների զարգացման և ծառայությունների որակի բարձրացման համապետքաբար: Հետազոտության խնդիրներն են՝ բացահայտել գրադարանային կրթության դերը գրադարանների արդիականացման գործընթացներում, վերլուծել մասնագիտական պատրաստվածության ազդեցությունը տեղեկատվական ծառայությունների արդյունավետության վրա և գնահատել շարունակական

* Հոդվածը ներկայացվել է 13.09.2025, գրախոսվել է 22.11.2025, ընդունվել է տպագրության 25.12.2025:

The article was submitted on 13.09.2025, reviewed on 22.11.2025, accepted for publication on 25.12.2025.

կրթության անհրաժեշտությունը ոլորտում: Կարող ենք նշել, որ գրադարանային մասնագիտական կրթության զարգացումը հայաստանյան գրադարանների մրցունակության, ընթերցողների պահանջներին համապատասխան ծառայությունների ապահովման և գիտելիքահեն հասարակության ձևավորման կարևոր նախապայմանն է:

In the context of the modern information society, the effective functioning of libraries largely depends on the level of professional education and continuous development of individuals working in the library sector. Armenian libraries, possessing a rich cultural heritage while simultaneously facing the challenges of digitalization and new information demands, are in particular need of highly qualified library professionals.

The aim of this article is to substantiate the importance of professional library education in the context of the development of Armenian libraries and the improvement of service quality. The objectives of the study include identifying the role of library education in the modernization processes of libraries, analyzing the impact of professional training on the effectiveness of information services, and assessing the necessity of continuous professional development in the field. It can be confidently argued that the development of professional library education constitutes an essential prerequisite for the competitiveness of Armenian libraries, the provision of services that meet users' needs, and the formation of a knowledge-based society.

Քանայի քաներ՝ Գրադարանային կրթություն, գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ, գրադարանային գործ, գրադարանային ծառայություններ, տեղեկատվական հասարակություն:

Ինչպես հղել՝ Հայրապետյան, Ա. (2025), Մասնագիտական կրթությունը որպես հայաստանյան գրադարանային գործունեության որակի ապահովման գործոն: Մարտահրավերներ և հեռանկարներ, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(6), 40-51.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.2\(6\)-40](https://doi.org/10.54503/2953-8092.2025.2(6)-40)

How to cite (APA style): Hayrapetyan, A. (2025). Professional Education as a Factor in Ensuring the Quality of Library Activities in Armenia: Challenges and Prospects, *Herald of the Armenian Library Association*, 2(6), 40-51.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.2\(6\)-40](https://doi.org/10.54503/2953-8092.2025.2(6)-40)

Ներածություն

Գրադարանները ժամանակակից տեղեկատվական հասարակության պայմաններում շարունակում են մնալ գիտելիքի պահպանման և տարածման կարևորագույն ինստիտուտներ: Գրադարանների գործունեության արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն նյութական և տեխնոլոգիական ռեսուրսներով, այլև այս կառույցներում աշխատող մարդկանց մասնագիտական պատրաստվածությամբ և կրթական մակարդակով: Մասնագիտական պատրաստվածությունն ապահովում է տեղեկատվական ռեսուրսների որակյալ կառավարում և օգտատերերի պահանջներին համապատասխան ժամանակակից ծառայությունների մատուցում:

Հայաստանյան գրադարանային համակարգը ներկայում կանգնած է մի շարք նոր մարտահրավերների առջև: Թվայնացման գործընթացները, տեղեկատվական հոսքերի աճը, ինչպես նաև օգտատերերի տեղեկատվական վարքագծի փոփոխությունները պահանջում են գրադարանային նոր մոտեցումներ և մասնագիտական կարողություններ: Այս պայմաններում մասնագիտական կրթությունը դառնում է առանցքային՝ ապահովելով ոլորտի արդիականացումը և միջազգային չափանիշներին համապատասխան զարգացումը:

Գրադարանավարի մասնագիտական կրթության դերը

Գրադարանավարի մասնագիտական կրթությունը համարվում է բարդ և բազմաշերտ գործընթաց, որը ներառում է տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ՝ ապահովելով մասնագե-

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

տի արդյունավետ ինտեգրում գրադարանային միջավայր: Կրթության հիմնական ուղղությունները ներառում են՝

- Գրադարանագիտություն և տեղեկատվական գիտություններ՝ դասակարգում, գրացուցակավորում, տեղեկատվական աղբյուրների վերլուծություն և կառավարման մեթոդներ:

- Տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ թվային գրադարանների կառավարում, էլեկտրոնային համակարգերի և տվյալների շտեմարանների նախագծում և օգտագործում:

- Հաղորդակցություն և սպասարկում՝ ընթերցողների հետ աշխատանքի հոգեբանություն, հաղորդակցական ռազմավարություններ և սպասարկման ժամանակակից մոտեցումներ:

- Մշակութային և կրթական ծրագրերի կազմակերպում՝ գրադարանային միջոցառումների, ցուցահանդեսների և կրթական նախագծերի ձևավորում:

- Գրադարանի կառավարման հմտություններ՝ կառավարման մոդելներ, ֆինանսավորում, հանրային կապեր և թիմային ղեկավարում (БЕЛЯЕВА, ЕСИПОВ 2023, 143-148):

Այս հմտությունների ձևավորումը իրականանում է բակալավրիատի և մագիստրոսական կրթական ծրագրերի, ինչպես նաև շարունակական վերապատրաստման դասընթացների և սեմինարների միջոցով: Իրականացված աշխատանքների շնորհիվ ժամանակակից գրադարանավարը իրականացնում է հետևյալ գործառույթները.

- նյութերի թվայնացում, առցանց հասանելիության ապահովում, թվային տեղեկատվական համակարգերի կիրառում,

- տեղեկատվության որոնում, հայտնաբերում և արդյունավետ սպասարկում,

- մասնակցություն գիտահետազոտական աշխատանքներին,

➤ գրադարանի՝ որպես մշակութային, կրթական և հանրային հարթակի ձևավորում:

Հայաստանի գրադարանային ոլորտում մասնագիտական պատրաստվածության մարտահրավերները և զարգացման ուղիները

Ժամանակակից հասարակության մեջ գրադարանները վաղուց դադարել են լինել միայն տպագիր գրականության պահպանման տարածքներ: Դրանք վերածվել են գիտելիքի պահպանման, տեղեկատվության տարածման, հաղորդակցության և մշակութային հիշողության պահպանման բազմաֆունկցիոնալ կենտրոնների: Գրադարանների այս նոր դերակատարությունը պահանջում է նաև մասնագիտական նոր որակ՝ բարձր պատրաստվածություն ունեցող գրադարանային մասնագետներ, որոնք կարող են գործունեալ արդյունավետ տեղեկատվական ռեսուրսների, օգտատերերի և ժամանակակից տեխնոլոգիաների հետ:

Հայաստանում գրադարանային գործը ձևավորվել և զարգացել է հարուստ պատմական ավանդույթների հիման վրա՝ երկար տարիներ պահպանելով իր կրթական և մշակութային նշանակությունը: Խորհրդային ժամանակաշրջանում ձևավորվել էր գրադարանավարների պատրաստման համակարգված և համեմատաբար կայուն մոդել, որը հիմնված էր դասական գրադարանագիտության, գրքագիտության, գրացուցակավորման սկզբունքների վրա (ԴԱՆԻԵԼՅԱՆ 2017, 22: ՍՈՒՔԻԱՍՅԱՆ 2011, 144): Սակայն տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ և գրադարանային գործունեության գործառույթների ընդլայնմամբ այդ մոդելը աստիճանաբար սկսեց չհամապատասխանել ժամանակակից պահանջներին՝ առաջ բերելով համակարգային արդիականացման անհրաժեշտություն:

21-րդ դարում գրադարանային ոլորտի զարգացումը պայմանավորված է թվայնացման գործընթացների արագացմամբ, տեղե-

կատվական հոսքերի բազմապատկմամբ և օգտատերերի տեղեկատվական վարքագծի փոփոխությամբ: Այս պայմաններում գրադարանավարից պահանջվում են բազմաշերտ մասնագիտական կարողություններ, այդ թվում՝ տեղեկատվական կառավարման հմտություններ, թվային գրագիտություն, էլեկտրոնային ռեսուրսների ստեղծում և կառավարում, օգտագործողների սպասարկման ժամանակակից մոտեցումների կիրառում, ինչպես նաև նախագծային և հաղորդակցական կարողություններ: Մասնագիտական կրթության առանցքային խնդիրն է ապահովել այդ հմտությունների համակարգված փոխանցումը և զարգացումը (МУРАДОВА, БОЗОРОВ 2022, 11-15):

Հայաստանյան գրադարանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրադարանների մի մասը դեռևս լիարժեք չի ինտեգրել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները և թվային ծառայությունները: Այս իրավիճակը մեծապես պայմանավորված է մասնագիտական վերապատրաստման սահմանափակ հնարավորություններով և գրադարանային կրթության արդիականացման դանդաղ տեմպերով: Արդյունքում գրադարանային ծառայությունների որակը հաճախ չի համապատասխանում օգտատերերի աճող պահանջներին, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ գրադարանների զարգացման և հանրային ազդեցության վրա:

Արդի շրջանում գրադարանավարի մասնագիտությունը պահանջում է համադրություն դասական գրադարանագիտական գիտելիքների և նորագույն տեղեկատվական ու տեխնոլոգիական հմտությունների միջև: Մասնագիտական կրթությունը ոչ միայն ապահովում է տեխնիկական և գործնական կարողությունների ձևավորում, այլև նպաստում է գրադարանավարի մասնագիտական ինքնագի-

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

տակցության ձևավորմանը՝ որպես կրթության, մշակույթի և հասարակական զարգացման կարևոր դերակատարի:

Չնայած գրադարանային կրթության ոլորտում վերջին տարիներին արձանագրված դրական տեղաշարժերին, շարունակում են մնալ մի շարք մարտահրավերներ.

➤ Կրթական ծրագրերի տեխնոլոգիական բաղադրիչը դեռևս թերի է:

➤ Պակասում են միջազգային համագործակցության և փորձի փոխանակման ծրագրերը:

➤ Շատ գրադարանավարներ չունեն պարբերաբար վերապատրաստվելու հնարավորություն:

➤ Հասարակության ընկալումը գրադարանային գործունեության նկատմամբ հաճախ սահմանափակ է և հին կարծրատիպերի վրա հիմնված:

Այս մարտահրավերների լուծման համար անհրաժեշտ է պետական և մասնավոր կառույցների համատեղ աշխատանք՝ կրթական ծրագրերի արդիականացման, մասնագիտական հմտությունների բարձրացման և գրադարանավարի հեղինակության ամրապնդման ուղղությամբ:

Առաջին հերթին անհրաժեշտ է ընդգծել իրավական հիմքի բացակայությունը. «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքում պետք է արձանագրվի մասնագիտական կրթության կարևորությունը: Պետական կարգավորումը կամ միջամտությունը կստեղծի ենթակառուցվածք, որը հնարավորություն կտա վերահսկել մասնագիտական կրթության ստանդարտների իրականացմանը բոլոր աշխատակիցների համար, և, ըստ այդմ, կնպաստի գրադարանային գործընթացների արդիականացմանը:

Պետք է պետական մակարդակով ուշադրություն դարձնել Հայաստանի Հանրապետության այն կրթական կառույցներին, որոնք պատրաստում են ժամանակակից գրադարանավարին: Այսօր նման կրթություն ապահովում են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի «Թանգարանագիտություն, գրադարանագիտություն և մատենագիտություն» ամբիոնը, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Գիտակրթական կենտրոնում գործող «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» ամբիոնը: Գործում են նաև որոշ քոլեջներ, սակայն դրանք ապահովում են միայն նախնական կրթություն:

Վերջին տարիների զարգացումների համատեքստում վերոնշյալ կրթական կառույցների հնարավորությունները սահմանափակվել են. ՀՊՄՀ-ում փակվել է այս մասնագիտության մագիստրոսական կուրսը, իսկ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական կենտրոնի ամբիոնը, որը նախկինում ապահովում էր մագիստրոսական կրթություն, տևական շրջան է, ինչ չի գործում դիմորդների պակասի պատճառով: Դիմորդների բացակայությունը, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, կապված է հիմնականում այն հանգամանքի հետ, որ երիտասարդները առավել շատ նախընտրում են մասնագիտություններ, որոնք կապահովեն բարձր ու կայուն եկամուտ, մինչդեռ գրադարանային ոլորտը ներկայում ՀՀ-ում համարվում է ամենացածր վարձատրվող ոլորտներից մեկը:

Այս փոխկապակցված մարտահրավերները պահանջում են համալիր և համակարգված լուծումներ: Նախ, պետական մակարդակով անհրաժեշտ է վերանայել գրադարանային աշխատողների աշխատավարձերը, ինչը կնպաստի ոլորտի մասնագետների ներգրավմանը և պահպանմանը: Երկրորդ, անհրաժեշտ է հասկանալ, թե ներկայում գրադարաններում աշխատողների քանի տոկոսն ունի մասնագիտական կրթություն: Նրանք, ովքեր չունեն այդ կրթությու-

նը, պետք է անպայման լրացնեն բացը, ինչի համար անհրաժեշտ է սահմանել ժամկետ: Երրորդ, Մանկավարժական համալսարանում և ՀՀ ԳԱԱ Գիտակրթական կենտրոնում պետք է բացվեն մագիստրոսական ծրագրեր, որոնք ուղղված են հենց գրադարանային-տեղեկատվական ոլորտին՝ ապահովելով մասնագետների պատրաստվածությունը՝ ըստ ժամանակակից պահանջների:

Բուհերում դասավանդվող կրթական ծրագրերը պետք է վերանայվեն և արդիականացվեն՝ ներառելով այն հմտությունները, որոնք այսօր առավել պահանջված են գրադարանային գործունեության ոլորտում, որպեսզի շրջանավարտները ավարտելուց հետո կարողանան ինտեգրվել աշխատաշուկային և արդյունավետ կատարեն իրենց մասնագիտական պարտականությունները:

Շատ կարևոր է նաև շարունակական մասնագիտական զարգացման համակարգի ներդրումը. յուրաքանչյուր աշխատակցի համար պարտադիր պետք է դառնա մասնագիտական սեմինարների, վերապատրաստման դասընթացների և գիտաժողովների մասնակցությունը: Շարունակական զարգացման այս փուլը պետք է վերանայվի հինգ տարին մեկ, ինչի արդյունքում այն աշխատակիցները, ովքեր շարունակաբար զբաղվել են սեփական կրթության զարգացմամբ, կստանան աշխատելու թույլտվություն, իսկ նրանք, ովքեր չեն բավարարել պահանջները, պարզապես կհեռանան ոլորտից:

Մասնագիտական շարունակական կրթության համակարգում առանձնահատուկ նշանակություն ունի Հայկական գրադարանային ասոցիացիայի գործունեությունը, որը վերջին տարիներին իրականացրել է մի շարք նպատակային և արդյունավետ ծրագրեր՝ ուղղված գրադարանային ոլորտի մասնագետների կարողությունների զարգացմանը: Ասոցիացիայի կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացները նպաստում են գրադարանավարների մասնա-

գիտական գիտելիքների արդիականացմանը, նոր հմտությունների ձևավորմանը, իսկ դրանց ավարտին տրվող վկայականները հանդիսանում են մասնագիտական պատրաստվածության փաստաթղթավորված ցուցիչներ: Հետևաբար, այդ վկայականների հաշվառումը գրադարանավարների մասնագիտական կարողությունների գնահատման գործընթացում ոչ միայն նպատակահարմար, այլև անհրաժեշտ պայման է շարունակական կրթության խթանման և ոլորտում որակի բարձրացման համար:

Նման ռազմավարական մոտեցումն, ըստ էության, հանդիսանում է գրադարանային համակարգի կայունության, ծառայությունների որակի բարձրացման և ժամանակակից տեղեկատվական հասարակության պահանջներին համապատասխան աշխատող մասնագետների պատրաստման հիմքը:

Ամփոփում

Ամփոփելով կատարված աշխատանքը՝ կարող ենք նշել, որ գրադարանավարի մասնագիտական կրթությունը բարդ և բազմաշերտ գործընթաց է: Այն տեսական գիտելիքների և գործնական հմտությունների համակցում է, որը ներառում է մի քանի բաղադրիչներ: Այս առումով Հայաստանի գրադարանային համակարգը կանգնած է մի շարք մարտահրավերների առջև, քանի որ մի շարք գրադարանային գործընթացներ և ծառայություններ պահանջում են համապատասխան մասնագետի առկայություն: Պետք է իրականացվեն մի շարք ծրագրեր, որոնք թույլ կտան վերակազմակերպել գրադարանային կրթության համակարգը, ինչն իր հերթին թույլ կտա պատրաստել ժամանակակից պահանջներին համապատասխան մասնագետներ գրադարանների համար: Պահանջվող բարեփոխումներն անհնար են առանց պետական աջակցության, որը պետք է լինի ոչ միայն բովանդակային, այլև ֆինանսական:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԴԱՆԻԵԼՅԱՆ 2017 – Դանիելյան, Ն. (2017), *Գրադարանային-մատենագիտական գործի զարգացումը Հայաստանում (1965-1990 թթ.): Սեղմագիր*, Երևան, 22 [Daniealyan, N. (2017), *Gradaranayin-matenagitakan gortsizargatcumy Hayastanum (1965-1990 tt.). Seghmagir*, Yerevan, 22];

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ 2011 – Սուքիասյան, Գ. (2011), *Գրադարանային-տեղեկատվական և մատենագիտական բարձրագույն կրթությունը Հայաստանում: Ուսումնամեթոդական ձեռնարկ*, Երևան, Հեղինակային հրատ., 124 [Sukiasyan, G. (2011), *Gradaranayin-teghekatvakan yev matenagitakan bardzraguyn krtutyuny Hayastanum: Usumnametodakan dzernark*, Yerevan, Heghinakayin hrat., 124];

БЕЛЯЕВА, ЕСИПОВ 2023 – Беляева, Н., Есипов, А. (2023), Библиотечное образование в контексте цифровизации, *Вестник СанктПетербургского государственного института культуры*, Санкт-Петербург, 2(55), 143-148 [Belyaeva, N., Yesipov, A. (2023), *Bibliotechnoye obrazovanie v kontekste tsifrovizatsii*, *Vestnik Sankt-Peterburskogo gosudarstvennovo instituta kulturi*, Sankt-Peterburg, 2(55), 143-148];

МУРАДОВА, БОЗОРОВ 2022 – Муродова, Г., Бозоров, Д. (2022), Современные библиотеки и цифровые технологии, *Вестник науки и образования*, Иваново, 5-2(125), 11-15 [Muradova, G., Bozorov, D. (2022), *Sovremennye biblioteki i tsifrovie teghnologii*, *Vestnik nauki i obrazovanie*, Ivanovo, 5-2(125), 11-15];

**PROFESSIONAL EDUCATION AS A FACTOR IN ENSURING THE
QUALITY OF LIBRARY ACTIVITIES IN ARMENIA**

Challenges and Prospects

ARPINE HAYRAPETYAN

Khanko Aper National Children's Library

Keywords: Library Education, Library and Information Resources, Library Science / Library Work, Library Services, Information Society

In summary, it can be stated that library professional education is a complex and multifaceted process. It represents a combination of theoretical knowledge and practical skills encompassing several components. In this context, the Armenian library system faces a number of challenges, as many library processes and services require the presence of adequately trained professionals. It is necessary to implement a series of programs aimed at reorganizing the library education system, which in turn will enable the preparation of specialists who meet contemporary professional standards for libraries. The required reforms cannot be achieved without state support, which must encompass not only content-related but also financial aspects.

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ԺԱՄԱՆԱԿԻ ՄԻՋՈՎ

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը 90 տարեկան է*

ՀՏԴ: 02(479.25)

DOI: 10.54503/2953-8092.2025.2(6)-52

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան
Բանասիրական գիտությունների թեկնածու**

ORCID: [0000-0002-7989-0514](https://orcid.org/0000-0002-7989-0514)

Հոդվածը նպատակ ունի ներկայացնելու ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի գործունեությունն ու ռազմավարական նշանակությունը գիտության, կրթության և մշակույթի ոլորտներում հիմնադրման օրվանից: Առաջադրել ենք հետևյալ խնդիրները՝ ներկայացնել գրադարանի պատմական ձևավորման և զարգացման փուլերը, վերլուծել ժամանակակից տեղեկատվական միջավայրում նրա գործառույթների վերափոխումը, արժևորել գրադարանի հավաքածուները, ամբողջացել գրադարանի մատենագիտական գործունեությունը հայագիտական շտեմարանների ձևավորման գործում: Ընդգծել ենք, որ Հիմնարար գիտական գրադարանը վաղուց արդեն դուրս է եկել դասական գրադարանի սահմաններից և վերածվել գիտելիքի ստեղծման, պահպանման և տարածման բազմագործառույթային հարթակի:

Կարծում ենք՝ սույն հոդվածը հնարավորություն կտա գիտական հանրության ուշադրությունը բնեղել գրադարանի վրա՝ որպես ազգային գիտական մտածողության, մշակութային հիշողության և միջազգային հաղորդակցության կարևորագույն ինստիտուտ:

* Հոդվածը ներկայացվել է 06.12.2025, գրախոսվել է 21.12.2025, ընդունվել է տպագրության 25.12.2025:

The article was submitted on 06.12.2025, reviewed on 21.12.2025, accepted for publication on 25.12.2025.

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

The article aims to present the activities and strategic significance of the Fundamental Scientific Library of NAS RA in the fields of science, education, and culture since its establishment. The following objectives have been set: to outline the main stages in the library's historical formation and development; to analyze the transformation of its functions within the contemporary information environment; to highlight the value of the library's collections; and comprehensively examine its bibliographic activities in the formation of Armenian studies databases. It is emphasized that the Fundamental Scientific Library has long since moved beyond the boundaries of a classical library and has evolved into a multifunctional platform for the creation, preservation, and dissemination of knowledge.

We believe that this article will help draw the attention of the scholarly community to the library as a key institution of national scientific thought, cultural memory, and international communication.

Քանալի բառեր՝ Հիմնարար գիտական գրադարան, գիտական ժառանգություն, հավաքածուներ, համագործակցություն, հայագիտություն, մատենագիտություն, թվային գրադարան:

Ինչպես հղել՝ Գրիգորյան, Մ. (2025), Ժամանակի միջով: ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը 90 տարեկան է, *Լրալու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(6), 52-75.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.2\(6\)-52](https://doi.org/10.54503/2953-8092.2025.2(6)-52)

How to cite (APA style): Grigoryan, M. (2025), Through Time: The Fundamental Scientific Library of NAS RA is 90 Years Old, *Herald of the Armenian Library Association*, 2(6), 52-75.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.2\(6\)-52](https://doi.org/10.54503/2953-8092.2025.2(6)-52)

Ներածություն

Գիտության ճանապարհը սկսվում է այնտեղ, որտեղ բացվում է գրադարանի դուռը: Հայաստանի գիտական ու մշակութային կյանքում Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանը հենց այն մշակութային և գիտական կառույցն է, ուր գիտելիքը չի հանգչում, իսկ ժամանակը դառնում է գիտություն: Հանրապետության ամենամեծ գիտական պահոցն այսօր 90 տարեկան է:

Գիտության զարգացման պատմության մեջ գրադարանները հանդես են եկել որպես գիտելիքի կուտակման, համակարգման և փոխանցման առանցքային կառույցներ: ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը հենց այդպիսի հաստատություն է, որի գործունեությունը ինը տասնամյակ շարունակ ուղեկցել է գիտության ձևավորմանն ու զարգացմանը: Հիմնադրված լինելով 1935 թ.¹ որպես ԱրմՖԱՆ-ի կենտրոնական գրադարան, այն հետագա տասնամյակներում վերաճել է հանրապետության խոշոր գիտական, տեղեկատվական կենտրոններից մեկի: Գրադարանի պատմությունը սերտորեն փոխկապակցված է ակադեմիական գիտության կայացման, գիտական դպրոցի ձևավորման և գիտական մտքի միջազգայնացման գործընթացների հետ:

21-րդ դարում, տեղեկատվական տեխնոլոգիաների և թվայնացման համատարած պայմաններում, գրադարանը ոչ միայն պահպանել է իր ավանդական գործառույթները, այլև վերաիմաստավորել է իր առաքելությունը՝ դառնալով գիտելիքի շրջանառության, բաց հասանելիության և նորարարական գրադարանային մոդելների փորձարկման կենտրոն:

Գրադարանը՝ պայմանական զարգացման տարրեր փոփոխում

Գրադարանը¹ ձևավորվել է 1935 թ.¹ որպես Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի Հայաստանի մասնաճյուղի, այլ կերպ՝ ԱրմՖԱՆ-ի կենտրոնական գրադարան: Ընդամենը մի

¹ Հիմնարար գիտական գրադարան <https://www.flib.sci.am/> (24.12.2025)

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

քանի տարի անց այն դարձել է գիտական նվաճումների պահպանման հուսալի կենտրոն, ուր սկսել են հավաքվել Հայաստանի և Խորհրդային Միության գիտական մտքի ստեղծած արժեքները:

1943 թ. Հոկտեմբերի 1-ին Օրբելու նախագահությամբ հիմնադրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիան, որը նշանակալի իրադարձություն էր հայ իրականության մեջ (ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ 2013, 6): Ակադեմիայի հիմնադրմամբ գրադարանը ձեռք է բերել առանձին ակադեմիական հաստատության կարգավիճակ՝ դառնալով Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահության անմիջական ենթակայության ներքո գործող գիտական, տեղեկատվական, մատենագիտական կենտրոն: 1944 թ. ձևավորվել է գրադարանի առաջին խորհուրդը՝ անվանի գիտնականների և նվիրյալ մասնագետների մասնակցությամբ: Խորհուրդը նախագահել է Ժամանակի գիտական մտքի հանճարներից մեկը՝ Վիկտոր Համբարձումյանը:

1944 թ. նոյեմբերի 10-ին ընդունվում է պատմական որոշում՝ վերակազմավորել և վերանվանել գրադարանը՝ այն կոչելով Հայաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետության գիտությունների ակադեմիայի Ֆունդամենտալ գրադարան: ԽՍՀՄ Նախարարների Խորհուրդը 1944 թ. այն ներառում է միութենական գիտական գրադարանների երկրորդ կարգի մեջ, իսկ 1957 թվականից կոչվել է Ֆունդամենտալ գիտական գրադարան:

Գրադարանն իր գործունեությունը սկսել է Աբովյան 15 հասցեում գտնվող շենքում: Ավելի ուշ, երբ հիմնադրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիան և շահագործման է հանձնվել ակադեմիայի Բաղրամյան 24 հասցեում գտնվող շենքը, գրադարանը տեղափոխվել է այստեղ և շարունակում գործել մինչև 1980 թ., որից հետո հաստատվել է հատուկ գրադարանի համար կառուցված շենքում՝

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Բաղրամյան 24/6 հասցեում, ուր գործունեություն է ծավալում առ այսօր:

2002 թ. սեպտեմբերի 12-ին ՀՀ կառավարության որոշմամբ գրադարանը վերակազմավորվել է որպես պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ «Հիմնարար գիտական գրադարան» անվամբ²:

1935 թվականից սկսած գրադարանը գործունեություն է ծավալել Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահներ, հայտնի գիտնականներ Հովսեփ Օրբելու, Վիկտոր Համբարձումյանի, Ֆադեյ Սարգսյանի, Ռադիկ Մարտիրոսյանի, Աշոտ Սաղյանի անմիջական ենթակայության ներքո, ովքեր ակադեմիայի գիտական, ռազմավարական նախագծերի մեջ միշտ առանձնահատուկ տեղ են հատկացրել գրադարանին՝ որպես գիտությանը սպասարկող և գիտությունը հանրայնացնող կենտրոն: Տարբեր տարիներին գրադարանը ղեկավարել են ոչ պակաս հայտնի գիտնականներ Վաչե Կարմենյանը, Գուրգեն Հովնանը, Արարատ Ղարիբյանը, Վաչե Նալբանդյանը և Անրի Ներսիսյանը, Տիգրան Զարգարյանը, Կարապետ Մինասյանն ու Նունե Շահումյանը: Ներկայում գրադարանը ղեկավարում է բանասիրական գիտությունների թեկնածու Մայա Գրիգորյանը:

Բոլոր ժամանակներում գրադարանը գիտակրթական տարբեր գործառույթներ իրականացնող կառույց է եղել և շարունակում է մնալ այդպիսին նաև այսօր: Շարունակվում են անցյալից ժառանգությունն ստացած գրադարանագիտության, մատենագիտության, տեղեկատվական գիտության և գրքի պատմության ոլորտների գիտահետազո-

² ՀՀ կառավարության որոշում «ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կազմակերպություն» ՊՈԱԿ ստեղծելու և «ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կազմակերպություն» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատելու մասին <https://www.arlis.am/hy/acts/21984> (24.12.2025)

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

տական աշխատանքները, որոնց կից զարգանում են տեղեկատվական դարաշրջանին բնորոշ գործառույթները, որոնց շնորհիվ Հիմնարար գիտական գրադարանը ուժ է դրել 21-րդ դար՝ ամբողջովին պատրաստ ընդառաջ գնալու տեղեկատվական հասարակության և արհեստական բանականության առաջադրած մարտահրավերներին: Հայաստանյան իրականության մեջ այն հուսալի գործընկեր է, գիտահետազոտական տարբեր ծրագրերի մեջ՝ վստահելի աղբյուր նորարարական ծրագրային մոդուլների մշակող և տարածող, նոր սերնդի գրադարանավար պատրաստող:

Համագործակցություն՝ հանուն գիտության, կրթության և մշակույթի զարգացման

Հիմնարար գիտական գրադարանն իր 90 տարիների ընթացքում առաջնորդվել է և շարունակում է առաջնորդվել մեկ գլխավոր սկզբունքով՝ գիտելիքը կյանք է ստանում, երբ դառնում է համընդհանուր արժեք, երբ տարածվում է և ծառայում հասարակությանը: Այս հավատով են տարիներ շարունակ ձևավորվել գրադարանի գործընկերային հարաբերությունները Հայաստանի ու արտերկրի գիտական, կրթական և մշակութային տարբեր կազմակերպությունների ու կառույցների հետ:

Այսօր Հիմնարար գիտական գրադարանի ռազմավարական ուղղություններից մեկը հետազոտական և կրթական համայնքների աշխատանքներին աջակցելն է՝ տրամադրելով նրանց բարձրարժեք գիտական շտեմարաններ: Գլխավոր նպատակն է՝ նպաստել պետության կողմից սահմանված գերակա ծրագրերի կատարմանը, նորարարությանը, գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, օգնել գեներացնել նոր գիտելիքը, ունենալ հստակ գիտատեղեկատվական ուղղվածություն, առաջարկել ծառայությունների տարբեր փաթեթներ՝ ըստ օգտվողների կարիքների:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Առաջնորդվելով կայուն սկզբունքներով՝ գրադարանն այսօր համագործակցում է տարբեր գիտահետազոտական ինստիտուտների, կրթական և մշակութային կազմակերպությունների հետ՝ ապահովելով հանրության համար անհրաժեշտ մատենագիտական և տեղեկատվական հենքը: Սերտ են կապերը հանրապետությունում գործող տարբեր բուհերի, պետական և մասնավոր կրթական հաստատությունների հետ: Գրադարանը կայուն գործընկերային կապեր ունի տարբեր մշակութային օջախների՝ թանգարանների, արխիվների, գրադարանների, արվեստի կենտրոնների հետ: Այդ համագործակցության շրջանակում այսօր մի շարք գիտական, կրթական և մշակութային կազմակերպությունների գիտական պարբերականներ իրենց մնայուն տեղն ունեն գրադարանի թվային պահոցում:

Հիմնարար գիտական գրադարանը ուսումնասիրում և փորձարկում է թվային գրադարանի մոդուլները՝ հետազայում այդ համակարգերը տրամադրելով տարբեր գիտակրթական և մշակութային օջախներին: Գրադարանի որակյալ մասնագետների աշխատանքի շնորհիվ այսօր Հայաստանում գրեթե բոլոր գրադարաններն օգտագործում են մի շարք ծրագրեր և ավտոմատացված համակարգեր, որոնք նախապես մշակում են անցել հենց Հիմնարար գիտական գրադարանում:

Գիտական գրադարանը նաև մեթոդաբանական կենտրոն է: Դա են փաստում յուրաքանչյուր տարի Երևանում եւ տարբեր մարզերում կազմակերպվող սեմինարները, դասախոսությունները, քննարկումները, որոնք նպաստում են հայաստանյան գրադարանային ցանցի բարելավմանը և դարաշրջանի պահանջներին համահունչ մասնագետի պատրաստմանը:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Բաց դռներ դեպի աշխարհ

Գիտությունը սահմաններ չունի: Հիմնարար գիտական գրադարանն իր առաքելությունը չի սահմանափակում միայն հայաստանյան շրջանակի մեջ. այն բացում է դռները դեպի ողջ աշխարհ, հնարավորություն տալիս գիտությանը քայլել սահմանների վրայով և հետազոտական արժեքները հասանելի դարձնել ամենուր: Այստեղ գիտելիքը ոչ միայն պահպանվում է. այն փոխանակվում է, ընդլայնվում և դառնում համընդհանուր արժեք, ծառայելով գիտության զարգացմանը և մշակութային կապերի ամրապնդմանը:

Գրադարանը վաղուց դուրս է եկել տեղական նշանակության օջախ լինելու սահմաններից և դարձել է միջազգային գիտական մտքի փոխանակման կարևոր կենտրոններից մեկը: Տարիների ընթացքում ստեղծվել են հզոր ու բազմաշերտ միջազգային կապեր՝ ընդգրկելով 50 երկրի 155 գրադարան, թանգարան, հրատարակչություն և գիտական կենտրոն: Այս հսկայական գործընկերային համակարգը անընդհատ զարգանում է՝ ապահովելով գիտական տեղեկատվության ազատ հոսքը և ստեղծելով նոր հնարավորություններ ինչպես Հայաստանի, այնպես էլ արտերկրի գիտականների համար: Միջազգային կապերի շնորհիվ գրադարանը դարձել է միջանկյալ և կամրջող օղակ՝ գիտական ձեռնարկումների, հետազոտական ծրագրերի և հրատարակչական նախաձեռնությունների միջև:

Միջազգային համագործակցությունը հնարավորություն է տալիս գրադարանին տարվա ընթացքում համալրվել տարբեր երկրների գիտական ձեռքբերումներով՝ նոր գիտական հրատարակություններով, ամսագրերով, հետազոտություններով: Շնորհիվ այս համագործակցության՝ Հայաստանի գիտական հանրությունը մշտապես տեղեկացվում է գիտական աշխարհի նորությունների ու ձեռքբերումների մասին:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Փոխադարձաբար, աշխարհի տարբեր կենտրոններ են ուղարկվում Հայաստանում տպագրվող մի շարք կարևոր ամսագրեր և գրքեր՝ ներկայացնելով հայաստանյան գիտական նվաճումները: Սա թույլ է տալիս ներկայացնել հայ գիտնականի աշխատանքը, գնահատել նրանց ներդրումը գիտության զարգացման մեջ և ընդլայնել գիտական ձեռքբերումների ճանաչելիության շրջանակը:

Համագործակցության շրջանակում իրականացվում են փորձի փոխանակման ծրագրեր, որոնք հնարավորություն են տալիս գրադարանի մասնագետներին այցելել աշխարհի տարբեր կենտրոններ ու գրադարաններ, ուսումնասիրել նրանց փորձը, ներդնել այն հայաստանյան իրականության մեջ, զարգացնել նոր համակարգեր, գտնել թվայնացման լուծումներ և իրականացնել հայերեն տպագիր ժառանգության ուսումնասիրման աշխատանքներ: Այս գործընթացը թույլ է տալիս ոչ միայն պահպանել և տարածել գիտելիքը, այլև նպաստում է հայ գիտական համայնքի մասնագիտական հմտությունների աճին և միջազգային ճանաչմանը:

Ապագայի գրադարան-լաբորատորիա

21-րդ դարում տեղեկատվական տեխնոլոգիաները արմատապես փոխել և շարունակում են փոխել ավանդական գրադարանի մասին մեր պատկերացումները: Գիտելիքի ձեռքբերումը, շարունակական կրթությունը, նորարարական մեթոդների և միջոցների ներդրումը գիտության և կրթության բնագավառում նպաստել են գրադարանների ձևափոխմանն ու արժևորմանը՝ ընդգծելով նրանց դեռևս անհրաժեշտությունը նշված գործընթացներում: Իրենց հերթին գրադարանները դարձել են այն հարթակները, որտեղ ձևավորվում են գիտության և կրթության զարգացման համար անհրաժեշտ մոդուլներն ու գործիքակազմը (ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002, 168): Հինարար գիտական գրադարանն այսօր այդ հարթակներից մեկն է:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Գրադարանն ակտիվ մասնակցում է «Հայկական միացյալ գրադարանային ավտոմատացված ցանց» համալիր ծրագրի իրականացմանը՝ նպաստելով գրադարանի հավաքածուների էլեկտրոնային քարտարանի ամբողջական ձևավորմանը: Անցումը թղթային կրիչներից դեպի էլեկտրոնայինը թույլ է տալիս ոչ միայն պահպանել գիտական ժառանգությունը, այլև տրամադրել այն համացանցում բաց և ազատ հասանելիությամբ (ԱՂՈՅԱՆ 2015, 14): Գիտական այս հաստատությունը նպատակաուղղված ձևավորում է ակադեմիական գիտական ժառանգության թվային շտեմարաններ՝ ընդգրկելով մենագրություններ, ամսագրեր, մատենաշարային հրատարակություններ և հայագիտական բացառիկ արժեքներ: Թվային հարթակների ստեղծումն ապահովում է հայերեն գիտական նյութերը միջազգայնացմանն ու ճանաչելիությանը:

Հաշվի առնելով վերջին տասնամյակի պատերազմական իրավիճակները, որոնք վտանգում են թվային արխիվները, գրադարանը կարևորվում է բաց կոդերով ծրագրաշարերի ներդրումը հայաստանյան գրադարաններում, ինչը ապահովում է հայատառ և հայագիտական թվային նյութերի անձեռնմխելիությունը և բաց, ազատ օգտագործումը: Լավագույն օրինակը գրադարանային գործընթացների ավտոմատացման «Կոհա» համակարգն է, որը Հիմնարար գիտական գրադարանի շնորհիվ ունի լայն կիրառություն բազմաթիվ գրադարաններում:

Գրադարանի մարտահրավերներից է նաև Հայաստանում տպագրված գիտական նյութերի միջազգային հասանելիությունը, որի նախապայմաններից մեկը թվային միջավայրում թվային առարկաների նույնականացման համակարգի ներդրումն է, որը հեշտացնում է գիտական նյութերի որոնումն ու մեջբերումը: Գրադարանի աշխատակիցների մասնագիտական հմտությունների և գրագետ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

մշակման շնորհիվ ակադեմիական գրեթե բոլոր ամսագրերի հոդվածները, մենագրությունները, ժողովածուները մուտքագրվում են Համահայկական թվանշային գրադարան և CrossRef միջազգային համակարգ: Կատարելագորված համակարգը թույլ է տալիս անմիջապես այդ նյութերը հասանելի դարձնել միջազգային գիտական հանրությանը (ТУМАНЯН 2024, 222):

Հիմնարար գիտական գրադարանի ամենամեծ ձեռքբերումներից մեկը Համահայկական թվանշային գրադարանն է: Այն ապահովում է բաց հասանելիություն՝ ներառելով գիտական հրապարակումներ, գրքեր, ամսագրեր, կրոնական և կրթական նյութեր, արխիվային փաստաթղթեր: Սա համատեղ նախագիծ է, որն իրականացվում է Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների գիտահետազոտական ինստիտուտի, Հիմնարար գիտական գրադարանի և Պոզնանի «Գերհամակարգչային և ցանցային կառուցվածքներ» կենտրոնի ջանքերով: Գրադարանը միակն է Հայաստանում, որ հոդված առ հոդված մշակում և Համահայկական թվանշային գրադարան է մուտքագրում ոչ միայն ակադեմիական, այլև հանրապետության տարբեր գիտակրթական և մշակութային հաստատությունների ամսագրերը, գիտական հոդվածների ժողովածուները, մենագրությունները և այլն (ԹՈՒՄԱՆՅԱՆ 2025, 65-73): Վստահաբար կարող ենք ասել, որ այսօր գրադարանը պարզապես պահոց չէ, այլ թվային գիտելիքի պահպանման ու տարածման կենտրոն:

Հիմնարար գիտական գրադարանի հավաքածուներն ու համայրումները

Ցանկացած գրադարան կենսունակ է իր հավաքածուներով և ընթերցողներով: Հարուստ և բազմազան է Հիմնարար գիտական գրադարանի ֆոնդը, որը բաղկացած է ավելի քան երեք միլիոն գրադարանային միավորից, բնական, տեխնիկական և հումանիտար

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

գիտությունների վերաբերյալ հրատարակություններից, որոնցից շուրջ մեկ միլիոնը օտարալեզու է:

Յուրաքանչյուր գիրք գրադարանում իր պատմությունն ունի: Ասվածն ավելի է ընդգծվում, երբ խոսում ենք 16-18 դարերում տպագրված հայերեն և օտարալեզու տպագիր նյութերի մասին, որոնք ամբարում են հայ և համաշխարհային պատմության գաղտնիքները: Հնատիպ հավաքածուն հարուստ է ինքնագրեր, ընծայագրեր, տպագիր հիշատակարաններ պարունակող գրքերով, որոնք անփոխարինելի աղբյուր են հետազոտողների համար: Բազմաթիվ տպագրություններ եզակի են և առկա միայն Հիմնարար գիտական գրադարանում: Այս հավաքածուի համալրումն ու պահպանումն այսօր գրադարանի ռազմավարական ուղղություններից մեկն է (АЙРАПЕТЯН 2025, 60-65):

Ակադեմիայի գրադարանում են պահպանվում Հայաստանի և Սփյուռքի հայ նշանավոր գիտնականների, արվեստի և հասարակական գործիչների՝ նվիրատվության կարգով ստացված 28 անձնական հավաքածուները: 1965 թ. Վիկտոր Համբարձումյանի ժառանգները գրադարանին են նվիրում պրոֆեսոր Համազասպ Համբարձումյանի անձնական գրադարանը, որի հիման վրա էլ ձևավորվում է առաջին անհատական հավաքածուն: Այսօր այստեղ են պահպանվում նաև գիտության և մշակույթի երախտավորներ Ավո Հովհաննիսյանի, Հովսեփի և Կարապետ Կուսիկյանների, Գալուստ Գյուլբենկյանի, Արշակ Ալպոյաճյանի, Հովսեփ Էդգարյանի, ակադեմիկոսներ Արմեն Թախտաջյանի, Արարատ Ղարիբյանի, Վաչե Նալբանդյանի, Գևորգ Զահուկյանի, Գագիկ Սարգսյանի, ակադեմիայի արտասահմանյան անդամ, արքեպիսկոպոս Պողոս Լևոն Զեքիյանի և այլ երախտավորների անձնական գրադարանները, որոնք հարուստ են հատկապես

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

մասնագիտական գրականությամբ (ԳՐԻԳՈՐՅԱՆ 2023, 75-76; ԳՐԻԳՈՐՅԱՆ 2024, 90-102):

Գրադարանի հավաքածուների հարստացման գլխավոր աղբյուրը նվիրատվություններն են: Համագործակցությունը ակադեմիական ինստիտուտների, տարբեր համալսարանների, գիտակրթական կազմակերպությունների, ինչպես նաև հրատարակիչների հետ տալիս է իր արդյունքը: Հանրապետությունում տպագրվող գիտական գրականության գերակշիռ մասն իր մնայուն տեղն է գտնում գրադարանում:

Մեկ այլ կարևոր խնդիր է հավաքածուների երկարաժամկետ պահպանությունն ու հասանելիությունը: Այս առումով առանցքային նշանակություն ունի թվայնացումը և թվային գրադարանի շարունակական ձևավորումը, ինչև գրադարանի աշխատակազմի ուշադրության կետրոնում է արդեն 2 տասնամյակ (ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 2023, 10-12):

Հաշվի առնելով հայ տպագիր ժառանգության աշխարհասփյուռ բնույթը՝ գրադարանն արդեն երկու տարի է իրականացնում է «Որդեգրիր գիրք» և «Թվային հայրենադարձություն» նախագծերը, որոնց շրջանակում գրադարանի շտեմարաններում իրենց արժանի տեղն են գտնում այն գրքերի թվային տարբերակները, որոնք ֆիզիկապես հասանելի չեն և անհնար է դրանց բնօրինակների ձեռքբերումը: Երկու նախագծերն են միտված են հայագիտության զարգացմանը:

Գրադարանի մատենագետները մշտապես որոնողական աշխատանքներ են իրականացնում աշխարհի խոշորագույն թվային պահոցներում՝ հայերեն տպագիր ժառանգության նորահայտ անուններ գտնելու ուղղությամբ» Այս աշխատանքը միաժամանակ և՛ հա-

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

վաքագրման, և՛ պահպանման, և՛ գիտական հասանելիության ապահովման գործընթաց է (ԳՐԻԳՈՐՅԱՆ 2023, 57-68):

Մանրակրկիտ աշխատանք է տարվում նաև Մերձավոր Արևելքի և այլ վտանգված տարածքներից հայատառ ժառանգությունը ուսումնասիրելու և հնարավորության դեպքում Հայաստան տեղափոխելու ուղղությամբ: Պատերազմող կամ անկայուն երկրներում պահպանվող գրքերը հաճախ կանգնած են կորստի վտանգի առաջ, և դրանց փրկությունը պետք է դիտարկել ազգային անվտանգության խնդիրների շրջանակի մեջ:

Գրադարանը՝ մատենաչափության կենտրոն

Հիմնարար գիտական գրադարանը գիտական ու մշակութային կենտրոն է, որտեղ համախմբված են հետազոտողների պահանջները, ակադեմիական ժառանգության պահպանումն ու մատենագիտական գործունեությունը: Գրադարանի առաքելությունը խորապես կապված է հայ տպագիր մշակույթի ուսումնասիրման և փոխանցման տեսլականի հետ:

Այսօր գրադարանում իրականացվող բազմաբևեռ ծրագրերը միտված են դարերի խորքից եկող տպագիր ժառանգության պահպանմանը և ժամանակակից պահանջներին համապատասխանող մատենագիտական նորարարությունների ներդրմանը: Հատկապես կարևոր են այն ծրագրերը, որոնց նպատակն է ամբողջացնել հայերեն տպագիր ժառանգության քարտեզը՝ ներկայացնելով ինչպես Հայաստանի, այնպես էլ աշխարհասփյուռ հայկական համայնքների բազմադարյա տպագրական գործունեությունը: Այս աշխատանքների արդյունքները հասանելի են դառնում ընթերցողին մատենագիտությունների միջոցով, որոնք աղբյուրագիտական արժեք ունեն հետազոտողների համար:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Գրադարանը մեծ ուշադրություն է դարձնում աշխարհի տարբեր հատվածներում գտնվող հայկական հոգևոր մշակութային կենտրոնների տպագիր ժառանգության ուսումնասիրությանը: Սա հայագիտության զարգացման առանցքային ուղղություններից մեկն է, քանի որ հայկական տպագրության պատմությունը երբեք սահմանափակված չի եղել աշխարհագրական մեկ տարածքով: Հայ տպագիր գրքի հիմնական օջախները՝ Վենետիկը Կոստանդնուպոլիսը, Նոր Զուղան, Վիեննան, Երուսաղեմը և այլ վայրեր, ձևավորել են բազմաշերտ և անգնահատելի ժառանգություն:

Ներկայում իրականացվող ծրագրերն առնչվում են Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքում, Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանում, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանություններում, ինչպես նաև Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսությունում պահվող հայերեն տպագիր ժառանգությանը: Համագործակցության շնորհիվ հնարավոր է դառնում բացել փակ դռները, վերականգնել և գիտական շրջանառության մեջ դնել սկզնաղբյուրային արժեք ունեցող նյութեր, կազմել մատենագիտական ցանկեր, ընթերցողին տրամադրել մոռացված կամ դեռևս չուսումնասիրված տպագրությունները (ԶԱՐԳԱՐՅԱՆ 2023, 5; ԶԱՐԳԱՐՅԱՆ 2024, 10; ԶԱՐԳԱՐՅԱՆ, ՄԱՆՈՒԿՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ 2025, 110):

Մատենագետների աշխատանքը մեկտեղում է երկու կարևոր նպատակ. առաջինը՝ փաստագրել հայ տպագիր նյութը՝ անկախ նրանից, թե որտեղ է այն գտնվում, և երկրորդը՝ ստեղծել մի համակարգ, որտեղ այն կարող է հասանելի դառնալ հայ և միջազգային գիտական հանրությանը:

Առանձնահատուկ նշանակություն ունեն ակադեմիկոսների կենսամատենագիտությունները: Սրանք կարևոր են ոչ միայն կենսագրական տեղեկություն ստանալու համար, այլև գիտական դպրո-

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ցի ու գիտական մտածողության զարգացման պատմությունը հասկանալու տեսակետից: Քայլելով ժամանակի պահանջներին համընթաց՝ Հիմնարար գիտական գրադարանն իր ավանդական տպագիր մատենագիտությունների կողքին ձևավորում է էլեկտրոնային շտեմարաններ, որոնցում ներկայացվում են Գիտությունների ազգային ակադեմիայի հարուստ պատմությունը, ակադեմիկոսների ստեղծած գիտական ժառանգությունը, նրանց հրապարակումները և ներդրումը համաշխարհային գիտության տարբեր բնագավառների մեջ (ՄԱՆՈՒԿՅԱՆ 2023, 30; ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 2025, 74; GRIGORYAN 2025, 48):

Այսօր Հիմնարար գիտական գրադարանը միավորում է գիտական համայնքը, կրթական հաստատությունները և հասարակությանը՝ թույլ տալով յուրաքանչյուրին մասնակցել հայագիտության զարգացմանը, գնահատել հազվագյուտ ժառանգությունը և նպաստել նրա ճանաչմանը ամբողջ աշխարհում:

Ընթերցողը գրադարանի ուշադրության կենտրոնում

Գրադարանի իրական հարստությունը ոչ միայն գրքերի մեջ է, այլև այն մարդկանց մեջ, ովքեր ընթերցում են դրանք: Յուրաքանչյուր օր այստեղ են գալիս գիտնականներ, դասախոսներ, հայցորդներ, մագիստրոսներ, մշակույթի և կրթության գործիչներ:

Ընթերցողների հետ ամենօրյա աշխատանքի արդյունքում ձևավորվել է սպասարկման մի համակարգ, որը միաժամանակ և՛ ավանդական է, և՛ լիովին համահունչ ժամանակակից պահանջներին: Հայտնի է, որ ընթերցողը գրադարանի սրտում է. նրա պահանջներն ու հետաքրքրություններն են ուղղորդում գրադարանի զարգացման հիմնական ուղիությունները: Ուստի, ընթերցողների սպասարկումն ամբողջությամբ արդիականացվել է՝ ապահովելով արագ, հարմար և մատչելի միջավայր բոլորի համար:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Ընդլայնվել և վերագինվել է գրադարանի համակարգչային ցանցը: Ընթերցասրահն ունի առձեռն հավաքածու, ուր հասանելի են առավել շատ պահանջված գրքերն ու ամսագրերը: Այս հավաքածուն ապահովում է ընթերցողի՝ տեղեկատվություն գտնելու պահանջը առանց երկար որոնումների:

Ընթերցողների սպասարկումն առավել արդյունավետ դարձնելու համար ներդրվել է առցանց պատվերի համակարգը: Յուրաքանչյուրը կարող է ցանկացած վայրից պատվիրել անհրաժեշտ նյութը և ստանալ էլեկտրոնային հաղորդագրություն՝ հաղորդագրությանը, որ պատվերն արդեն պատրաստ է: Այս գործընթացը զգալիորեն կրճատում է սպասման ժամանակը և բարձրացնում է աշխատանքային արդյունավետությունը, հատկապես գիտական հետազոտություններով զբաղվողների համար:

Էլեկտրոնային կառավարման համակարգի կարևոր բաղադրիչներից է նաև էլեկտրոնային ստորագրությունը: Այն թույլ է տալիս ընթերցողին հաստատել պատվերները, երկարաձգել օգտագործման ժամկետները և իրականացնել մի շարք այլ գործողություններ՝ առանց թղթային ձևակերպումների: Սպասարկման ողջ գործընթացն այսօր ավտոմատացված է, ինչի շնորհիվ հնարավոր է վերահսկել պատվիրված գրականության շարժը, ընթերցողների գրանցումներն ու պատվերները: Սա հենց այն ճանապարհն է, որը տանում է դեպի Կանաչ գրադարան, որի ներդրումը Հայաստանում արդեն երազանք է:

Ընթերցողները գրադարանի ուշադրության կենտրոնում են: Տարիների ընթացքում այստեղ ուսումնասիրված նյութերի հիման վրա պատրաստվել են գիտական թեզեր, մենագրություններ, հոդվածներ, դասագրքեր: Կարող ենք վստահ ասել, որ գրադարանը

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

կարևոր դերակատարում ունի գիտնականների մասնագիտական աճի վրա:

Մարդիկ, ովքեր կերպով և կերպում են գրադարանի պարամոթյունը

Հիմնարար գիտական գրադարանի հաջողության և արդյունավետ գործունեության հիմքում կանգնած են այն մարդիկ, ովքեր ամեն օր անթաքույց նվիրումով ու պատասխանատվությամբ իրականացնում են գիտելիքի պահպանման և փոխանցման կարևոր առաքելությունը: Գրադարանի աշխատողները ոչ միայն իրենց ոլորտի բարձրակարգ մասնագետներ են, այլ նաև մշակույթի ու գիտության նվիրյալ ծառայողներ:

Նրանց աշխատանքի մեջ միահյուսված են մասնագիտական հմտությունները, կազմակերպվածությունը, թիմային համագործակցությունը և ամենից կարևորը՝ ընթերցողին մշտապես աջակցելու պատրաստակամությունը: Գրադարանավարները տիրապետում են իրենց մասնագիտությանը. նրանք գիտեն յուրաքանչյուր հավաքածուի բնույթը, տիրապետում են մատենագիտական որոնման նրբություններին, կողմնորոշվում են տասնյակ հազարավոր գրքերի ու տպագիր նյութերի մեջ և կարողանում են ճշգրիտ ու արագ գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը:

Գրադարանի աշխատակիցների հնարամտությունն ու ստեղծագործ մոտեցումը հաճախ են դառնում ընթերցողների հաջողության հիմնաքարը: Նրանց շնորհիվ ամենաբարդ հարցերն ունենում են լուծում, նյութերը հայտնաբերվում են ճիշտ պահարանում, իսկ հետազոտական գործընթացը ստանում է նոր շունչ: Նրանք կարողանում են աշխատել ինչպես ավանդական տպագիր նյութերի, այնպես էլ ժամանակակից թվային շտեմարանների հետ՝ ապահովելով լիարժեք և արագ սպասարկում:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Աշխատակիցների կազմակերպվածությունը գրադարանի ամենօրյա գործունեության անբաժանելի մասն է: Նրանք համակարգում են աշխատանքային հոսքերը, ապահովում են ընթերցասրահի անխափան աշխատանքը, վերահսկում են ֆոնդերի պահպանությունը, իրականացնում են թվայնացման ծրագրեր, համակարգում են պատվերները և մշտապես հետևում են ծառայությունների արդիականացմանը: Նրանց կատարած աշխատանքը հաճախ մնում է ստվերում, սակայն հենց այդ աննկատ, բայց անփոխարինելի ջանքերի շնորհիվ է գրադարանը գործում արդյունավետ:

Հիմնարար գիտական գրադարանի աշխատողները պարզապես մասնագետներ չեն. նրանք գիտելիքի պահապաններ են, մշակութային ժառանգության հանրահռչակողներ, հետազոտողի առաջին օգնականները և անձինք, որոնց շնորհիվ գրադարանը շարունակում է լինել գիտական կյանքի կարևոր կենտրոն: Նրանց շնորհիվ այստեղ ստեղծվում է այն մթնոլորտը, որտեղ գիտելիքը դառնում է հասանելի, հետազոտությունը՝ հնարավոր, իսկ ընթերցողը՝ մշտապես գնահատված: Այս նվիրյալների մասին է, որ կարելի ասել. «Մենք գրում ենք պատմություն, մենք դառնում ենք պատմություն»:

Ամփոփում

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի իննսունամյա գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն հայ գիտության ձևավորման և զարգացման ամբողջ ընթացքում հանդես է եկել որպես առանցքային գիտատեղեկատվական և մշակութային ինստիտուտ: Հոգվածում ներկայացված պատմական փուլերի վերլուծությունը վկայում է, որ գրադարանը մշտապես զարգացել է ակադեմիական գիտության պահանջներին համահունչ՝ պահպանելով գիտելիքի կուտակման և փոխանցման իր հիմնարար առաքելությունը:

Ժամանակակից տեղեկատվական միջավայրում Հիմնարար

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

գիտական գրադարանը վերափոխել է իր գործառույթները՝ համադրելով ավանդական գրադարանային գործունեությունը թվայնացման, բաց հասանելիության և նորարարական տեխնոլոգիաների հետ: Թվային շտեմարանների ձևավորումը, հայագիտական ռեսուրսների ամբողջացումը, ինչպես նաև միջազգային գիտատեղեկատվական համակարգերին ինտեգրումը գրադարանին հնարավորություն են տվել դուրս գալ տեղական շրջանակներից և ապահովել հայերեն գիտական նյութերի միջազգային տեսանելիությունը:

Գրադարանի հավաքածուները՝ ներառելով հնատիպ տպագրություններ, անձնական գրադարաններ և ժամանակակից գիտական հրատարակություններ, հանդիսանում են ազգային գիտական և մշակութային հիշողության կարևոր բաղադրիչ: Դրանց պահպանման, թվայնացման և մատենագիտական մշակման ուղղությամբ իրականացվող աշխատանքները հաստատում են գրադարանի առանձնահատուկ դերը հայագիտության և գիտական աղբյուրագիտության զարգացման գործում:

Գրադարանը ձևավորվել է որպես համագործակցային և մարդակենտրոն կառույց՝ գիտական հանրությանը տրամադրելով բարձրարժեք տեղեկատվական ծառայություններ և աջակցելով հետազոտական ու կրթական գործընթացներին: Արդյունքում կարելի է եզրակացնել, որ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը ներկայումս գործում է որպես գիտելիքի ստեղծման, պահպանման և տարածման բազմագործառույթային հարթակ՝ ապահովելով գիտական ժառանգության շարունակականությունը և նպաստելով ազգային գիտական մտածողության ու միջազգային հաղորդակցության զարգացմանը:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԱՂՈՅԱՆ 2015 – Աղոյան, Ն. (2015), Էլեկտրոնային գրքի ձևվաչափերի ներկայացում և դրանց կիրառումը հայատառ նյութերի պարագայում, *Բանբեր Հայաստանի գրադարանների*, Երևան, 1, 3-17 [Aghoyan, N. (2015), Introducing E-Book formats and their applications for Armenian Script materials, *Bulletin of Armenian Libraries*, Yerevan, 1, 3-17];

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2023 – Գրիգորյան, Մ. (2023), Հայ տպագիր ժառանգության հետքերով, *Լրադու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, Երևան, 2(2), 57-68 [Grigoryan, M. (2023), Following trages of Armenian Printed Heritage, *Herald of the Armenian Library Association*, Yerevan, 2(2), 57-68];

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2023 – Գրիգորյան, Մ. (2023), ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի «Էդգարյան» հավաքածուն, *Լրադու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, Երևան, 1(1), 73-96 [Grigoryan, M. (2023), The «Edgarian» Collection of the Fundamental Scientific Library of NAS RA, *Herald of the Armenian Library Association*, Yerevan, 1(1), 73-96];

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2024 – Գրիգորյան, Մ. (2024), ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի հավաքածուները. նոր ձեռքբերումներ, *Լրադու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, Երևան, 1(3), 90-102 [Grigoryan, M. (2024), Collections of the Fundamental Scientific Library of the NAN RA: new achievements, *Herald of the Armenian Library Association*, Yerevan, 1(3), 90-102];

ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002 – ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002 – Զարգարյան, Տ. (2002), *Թվային գրադարաններ*, Երևան, Հեղ. հրատ., 168 [Zargaryan, T. (2002), *Tvayin Gradaranner*, Yerevan, Hegh. Hrat., 168];

ԶԱՐԳԱՐՅԱՆ 2023 – Զարգարյան, Տ. (2023), Մխիթարեան միաբանության Վիեննայի մենաստանի պարբերականների թվայնացման նախագծի առաջին փուլի արդյունքների ներկայացում, *Լրադու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, Երևան, 2(2), 5-29 [Zargaryan, T. (2023), Digitalization of the periodicals being preserved in the Mekitarist Monastery of Vienna: Presentation of first phase results, *Herald of the Armenian Library Association*, Yerevan, 2(2), 5-29];

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ԶԱՐԳԱՐՅԱՆ 2024 – Զարգարյան, Տ. (2024), Թվային տեխնոլոգիաների կիրառումը մատենագիտական նկարագրություն պատրաստելիս, *Լրադրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, Երևան, 1(3), 5-18 [Zargaryan, T. (2024), Using digital technologies during preparation of bibliographic description, *Herald of the Armenian Library Association*, Yerevan, 1(3), 5-18];

ԶԱՐԳԱՐՅԱՆ, ՄԱՆՈՒԿՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ 2025 – Զարգարյան, Տ, Մանուկյան, Մ., Գրիգորյան Մ. (2025), Մատենագիտական հետախուզումներ. հայ գրքի նոր անունների ներկայացում, *Լրադրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, Երևան, 1(5), 110-140 [Zargaryan, T., Manukyan, M., Grigoryan, M. (2025), Bibliographical Searches: Introducing Newly Discovered Names of Armenian Books, *Herald of the Armenian Library Association*, Yerevan, 1(5), 110-140];

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 2023 – Հայրապետյան, Ն. (2023), Թվանշային գրադարանների ստեղծման անհրաժեշտությունը: Բաց/ազատ կոդերով ծրագրաշարերի ներկայացում, *Լրադրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, Երևան, 1(1), 9-21 [Hayrapetyan, N. (2023), The Importance of Creating Digital Libraries: Presentation of Free/Open Source Software, *Herald of the Armenian Library Association*, Yerevan, 1(1), 9-21];

ԹՈՒՄԱՆՅԱՆ 2025 – Թումանյան, Ռ. (2025), Համահայկական թվանշային գրադարանը՝ գիտության զարգացման հարթակ, *Լրադրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, Երևան, 1(5), 65-73 [Tumanyan, R. (2025). The Pan-Armenian Digital Library as a Platform for Scientific Development, *Herald of the Armenian Library Association*, Yerevan, 1(5), 65-73];

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 2025 – Հովհաննիսյան, Ա. (2025), Ժառանգություն և նորարարություն: ԳԱԱ 80-ամյա ուղին, *Լրադրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, Երևան, 1(5), 74-83 [Hovhannisyan, A. (2025). Heritage and Innovation: The 80-year Journey of the National Academy of Sciences of Armenia, *Herald of the Armenian Library Association*, Yerevan, 1(5), 74-83];

ՄԱՆՈՒԿՅԱՆ 2023 – Մանուկյան, Մ. (2023), Մատենագիտությունը թվային դարաշրջանում. «Թարգմանչաց արվեստ» շտեմարան, *Լրադրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, Երևան, 2(2), 30-38 [Manukyan,

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

M. (2023), The Bibliography in the Digital Era. “Art of Translation” Database, *Herald of the Armenian Library Association*, Yerevan, 2(2), 30-38];

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ 2013 – Մարտիրոսյան, Ռ. (2013), Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի 70 տարին, *Բանբեր հայագիտության*, Երևան, 1, 6-13 [Martirosyan, R. (2013), Armenian Republic’s National Academy of Sciences is 70 years old, *Review of Armenian*, Yerevan, 1, 6-13];

GRIGORYAN 2025 – Grigoryan, M. (2025), The Bible in the Digital Age, *Herald of the Armenian Library Association*, Yerevan, 1(5), 48-64;

АЙРАПЕТАН 2025 – Айрапетян, Н. (2025), *История армянского книгопечатания: способы сохранения редких и старопечатных книг*, Книжные памятники в аспекте сохранности: материалы VIII международной междисциплинарной научно-практической конференции, Москва, 60-65 [Hayrapetyan, N. (2025), *Istoriya armyanskogo knigopechatanie: sposobi soghraneniye redkikh i starapechatnigh knig*, Knizhniye pamyatniki w aspekte saghannosti: materiali VIII mezhdunarodnoy mezhdistsiplinarnoy nauchno-prakticheskoy konferentsi, Moskva, 60-65];

ТУМАНЯН 2024 – Туманян, Р. (2024), Всеармянская цифровая библиотека-современная платформа для научных исследований, *Книга, чтение, медиасреда*, Новосибирск, 2(3), 220-226 [Tumanyan, R. (2024), Vsearmyanskaya tsifrovaya biblioteka-sowremennaya platforma dlya nauchnikh issledovaniy, *Kniga, chtenie, mediasreda*, Novosibirsk, 2(3), 220-226].

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

THROUGH TIME

The Fundamental Scientific Library of NAS RA is 90 Years Old

MAYA GRIGORYAN

Fundamental Scientific Library of NAS RA

Ph.D. in Philology

Keywords: Fundamental Scientific Library, Scientific Heritage, Collections, Cooperation, Armenian Studies, Bibliography, Digital Library.

The study of the ninety-year activity of the Fundamental Scientific Library of the NAS RA demonstrates that throughout the entire process of the formation and development of Armenian science it has functioned as a key scientific-information and cultural institution. The analysis of the historical stages presented in the article demonstrates that the Library has continuously evolved in line with the requirements of academic science, while preserving its fundamental mission of accumulating and transmitting knowledge. In the contemporary information environment, the Fundamental Scientific Library has transformed its functions by integrating traditional library activities with digitization, open access, and innovative technologies. The creation of digital repositories, the consolidation of Armenological resources, and integration into international scientific information systems have enabled the Library to move beyond local boundaries and ensure the international visibility of Armenian-language scholarly materials. The Library's collections, which include rare printed editions, personal libraries and modern scientific publications, constitute an important component of the national scientific and cultural memory. The ongoing efforts aimed at their preservation, digitization, and bibliographic processing confirm the Library's distinctive role in the development of Armenian Studies and scholarly source studies. The Library has evolved into a cooperative and human-centered institution, providing the scholarly community with high-value information services and supporting research and educational processes.

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 189 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆԸ*

ՀՏԴ: 02(479.25)

DOI: 10.54503/2953-8092.2025.2(6)-76

ԶԱՐՈՒՀԻ ՏՈՆՈՅԱՆ

ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետ

Թանգարանագիտության, գրադարանագիտության և

մատենագիտության ամբիոն

Բանասիրական գիտությունների թեկնածու

ORCID: [0000-0003-3738-7416](https://orcid.org/0000-0003-3738-7416)

Ժամանակակից կրթական համակարգում դպրոցական գրադարանները կարող են և պետք է հանդես գան որպես տեղեկավարական, ուսումնաստանողական և մշակութային կենտրոններ՝ նպաստելով աշակերտների ընթերցողական մշակույթի ձևավորմանը, տեղեկավարական գրագիտության զարգացմանը և ինքնուրույն ուսումնառությանը: Հայաստանի Հանրապետությունում դպրոցական գրադարանների գործունեությունը չունի հստակ իրավական կարգավորում՝ որպես առանձին ենթահամակարգ, ինչի հետևանքով դրանց գործառնությունները հաճախ սահմանափակվում են դասագրքերի պահպանման և բաշխման շրջանակում: Տարածքային, նյութատեխնիկական և մասնագիտական խնդիրները զգալիորեն նվազեցնում են դպրոցական գրադարանների ներուժը կրթական գործընթացում:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել ՀՀ դպրոցական գրադարանների գործունեության հիմնախնդիրները և զարգացման հնարավոր

* Հոդվածը ներկայացվել է 19.09.2025, գրախոսվել է 27.11.2025, ընդունվել է տպագրության 24.12.2025:

The article was submitted on 19.09.2025, reviewed on 27.11.2025, accepted for publication on 24.12.2025.

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ուղիները՝ հիմնվելով Երևանի Սամվել Գևորգյանի անվան թիվ 189 ավագ դպրոցի գրադարանի փորձի վերլուծության վրա: Հետազոտության շրջանակում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել ավագ դպրոցի գրադարանի նյութատեխնիկական, բովանդակային խնդիրները, ընդգծել գրադարանավարի դերն ու մասնագիտական կարողությունները գրադարանի արդյունավետ գործունեության ապահովման գործում, ներկայացնել հաջողված փորձի օրինակ՝ որպես զարգացման գործնական մոդել:

Ուսումնասիրության արդյունքում կարող ենք ընդգծել, որ համապատասխան մասնագիտական մոտեցման, ղեկավարության աջակցության դեպքում դպրոցական գրադարանը կարող է վերափոխվել բազմագործառութային տեղեկատվական կենտրոնի՝ դառնալով դպրոցական համայնքի ակտիվ ուսումնամշակութային միջավայր: Ստացված արդյունքները կարող են հիմք ծառայել դպրոցական գրադարանների գործունեության կատարելագործման, ինչպես նաև ոլորտի վերանայման համար:

In the modern educational system, school libraries can and should function as information, instructional-support, and cultural centers, contributing to the development of students' reading culture, information literacy, and independent learning skills. In the Republic of Armenia, however, the activities of school libraries are not clearly regulated as a separate subsystem, as a result of which their functions are often limited to the storage and distribution of textbooks. Spatial, material-technical, and professional challenges significantly reduce the potential of school libraries within the educational process.

The purpose of this article is to present the key issues facing school libraries in the Republic of Armenia and to explore possible directions for their development, based on an analysis of the experience of the library of Yerevan Samvel Gevorgyan Secondary School No. 189. Within the framework of the study, the following objectives are set: to examine the material-technical and content-related challenges of a high school library; to highlight the role and professional competencies of the librarian in ensuring the effective operation of

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

the library; and to present a successful case as a practical model for development.

As a result of the study, it can be emphasized that with an appropriate professional approach and the support of school administration, a school library can be transformed into a multifunctional information center, becoming an active educational and cultural environment for the school community. The findings of this study may serve as a basis for improving the operation of school libraries and for reconsidering policies and approaches in this field.

Քանայի քաներ՝ Սամվել Գևորգյանի անվան դպրոցական գրադարան, գրադարանային կրթություն, տեղեկատվական կենտրոն, տեղեկատվական գրագիտություն, գրադարանավար, ուսումնական գործընթաց, ավագ դպրոց:

Ինչպես հղել՝ Տոնոյան, Չ. (2025), Սամվել Գևորգյանի անվան N 189 ավագ դպրոցի գրադարանը, *Լրափու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(6), 76-86. [https://doi.org/10.54503/2953-8092.2025.2\(6\)-76](https://doi.org/10.54503/2953-8092.2025.2(6)-76)

How to cite (APA style): Tonoyan, Z. (2025). The Library of Samvel Gevorgyan High School No. 189, *Herald of the Armenian Library Association*, 2(6), 76-86. [https://doi.org/10.54503/2953-8092.2025.2\(6\)-76](https://doi.org/10.54503/2953-8092.2025.2(6)-76)

Ներածություն

ՀՀ գրադարանների և գրադարանային գործի մասին օրենքում դպրոցական գրադարաններն առանձնացված չեն: «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում նշված է. «Կրթական՝ գործում են ուսումնական հաստատությունների կառուցվածքում և, դրանց բնույթին համապատասխան, ձևավորում են հավաքածուներ, մասնակցում ուսումնական ու գիտահետազոտական գործընթացներին, ապահովում են դասախոսների, ուսանողների, գիտական աշխատողների, մասնագետների և այլ անձանց

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

գրադարանային-տեղեկատվական սպասարկումը» (ՕՐԵՆՍԳԻՐՔ 2012, հոդված 6): 2011 թ. ՀՀ Կրթության և գիտության նախարարության ջանքերով տպագրվում է դպրոցների գրադարանների գործունեությունը մեկնաբանող ձեռնարկ, ուր ընդհանուր դրույթներով նշվում է, թե ինչպիսին պետք է լինեն այդ կարևոր կառույցները (ՁԵՌՆԱՐԿ 2011, 75):

Նշենք, որ ՀՀ բոլոր կրթական օջախներում կան գրադարաններ և գրադարանավարներ, որոնք աշխատում են նախապես մշակված ծրագրով և ունեն կայուն գործառույթներ: Այդ գրադարանները, սակայն, հաճախ զբաղեցնում են շատ սահմանափակ տարածք, քիչ են կամ ընդհանրապես բացակայում են տեղում ընթերցելու համար նախատեսված նստատեղերը, պահարանները հին են և ոչ գրավիչ: Այս ամենը չի նպաստում ընթերցողների ներգրավմանը և թույլ չի տալիս իրականացնել տարաբնույթ միջոցառումներ: Հաճախ գրադարանավարի նախաձեռնած միջոցառումներն անցկացվում են դպրոցի դահլիճում կամ առանձին դասարաններում, ինչի պատճառով աշակերտները հնարավորություն չեն ունենում զգալ գրադարանի շունչը:

Ներկայում դպրոցական գրադարանների հավաքածուները համալրվում են մասամբ կամ չեն համալրվում ընդհանրապես: Դպրոցներին հատկացված ֆինանսավորման սղության պատճառով շատ դեպքերում գրադարանի հավաքածուների համալրումը մղվում է հետին պլան: Նման մոտեցման մեջ իրենց անմիջական մեղքի բաժինն ունեն նաև դպրոցի ղեկավարությունն ու գրադարանավարը, որոնց անտարբերության պատճառով գրադարանը վերածվում է պահեստի: Երբեմն համալրումը կատարվում է նվիրատվությունների շնորհիվ, սակայն շատ հաճախ այդ գրականությունը ժամկետանց է և ոչ պիտանի: Նման համալրումը բնականաբար չի կարող նպատա-

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

կային ծառայել արտաուսումնական գործընթացին և չի կարող բավարարել լրացուցիչ տեղեկատվություն ստանալու աշակերտների պահանջները:

Նման հնարավորություններով և սահմանափակումներով գրադարանները չեն կարող դառնալ ժամանցի վայրեր, հետազոտական կենտրոններ կամ տեղեկատվության տարածման աղբյուրներ: Կենցաղային և ֆինանսական խնդիրների պատճառով դրանք չեն նպաստում աշակերտական տրոն ուսումնառությանը, դառնում են «փակ» և ոչ մատչելի:

Խիստ կարևորվում է այստեղ գրադարանավարի դերը: Հաճախ դպրոցներում այս կարևոր հաստիքը վստահվում է ցանկացած այլ մասնագետի, քանի որ, ըստ տրամադրվածության, դպրոցական գրադարանը դիտվում է միայն դասագիրք պահող և սպասարկող վայր: Մինչդեռ մասնագիտական որակավորում ունեցող անձի ներգրավումը հնարավորություն կտա լուծելու մի շարք խնդիրներ, հատկապես նրանք, որոնք որևէ առնչություն չունեն ֆինանսների և դպրոցի ղեկավարության հետ: Մասնագետ-գրադարանավարը չպետք է իր գործունեությունն իրականացնի տնօրենի ցանկությամբ: Նա պետք է հանդես գա առաջարկություններով՝ տնօրենի հետ համաձայնեցնելով դրանց իրականացման միջոցները:

Դպրոցական գրադարանի գործունեության մասնավոր օրինակ

Ներկայացնելով ՀՀ դպրոցական գրադարանների գործունեությանը բնորոշ ընդհանուր հիմնախնդիրներն ու զարգացման միտումները՝ առանձնացնել ենք Երևանի Սամվել Գևորգյանի անվան թիվ 189 ավագ դպրոցի գրադարանը՝ որպես մասնավոր ուսումնասիրության օրինակ: Այս մոտեցումը հնարավորություն է տվել համադրելու առկա ձեռքբերումներն ու բացթողումները, վերլուծելու դրանց

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

արդյունավետությունն ու ազդեցությունը կրթական գործընթացի վրա, ինչպես նաև նախանշելու հետագա բարելավման և կատարելագործման հնարավոր ուղիները:

Դպրոցը հիմնադրվել է 1987 թ.¹ որպես միջնակարգ դպրոց և գտնվում է Երևանի Դավթաշեն վարչական շրջանում: ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ 2010 թ. այն ստացել է ավագ դպրոցի կարգավիճակ¹: Ուսումնական հաստատությունը կրում է Արցախյան առաջին պատերազմի մասնակից, ՀՀ առաջին աստիճանի «Մարտական խաչ» շքանշանի ասպետ, «Սասնա ծռեր» կամավորական ջոկատի հրամանատար Սամվել Գևորգյանի անունը:

Դպրոցը բաղկացած է երեք մասնաշենքերից և ունի համապատասխան նյութատեխնիկական բազա՝ երեք համակարգչային կաբինետ, էլեկտրոնային գրատախտակներ, երկու մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ, որոնք նպաստում են ժամանակակից կրթական գործընթացի կազմակերպմանը:

Դպրոցի գրադարանը գործում է հիմնադրման օրվանից՝ զբաղեցնելով կառույցի տարածքում առանձնացված և համեմատաբար ընդարձակ սրահ: Ի տարբերություն ՀՀ մի շարք դպրոցական գրադարանների՝ այն աչքի է ընկնում ժամանակակից տեխնիկական միջոցների հագեցվածությամբ: Գրադարանի նյութատեխնիկական ապահովվածությունը ներառում է էլեկտրոնային գրատախտակ, համակարգիչներ, հեռուստացույց, տեսամագնիստոֆոն, տեսաերիզներ, խտասկավառակներ, պատճենահանման սարք, տեղեկատվական պաստառներ, ինչպես նաև հայ և համաշխարհային գրականության

¹ ՀՀ կառավարության որոշում ավագ և հիմնական դպրոցների ցանկը հաստատելու մասին (2 հունիսի, 2011 թ. N 774-Ն)
<https://www.arlis.am/hy/acts/68886> (24.12.2025)

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ու գիտության նշանավոր գործիչների դիմանկարներ: Այս ամենը գրադարանին հնարավորություն է տալիս հանդես գալ ոչ միայն որպես գրապահոց, այլև որպես բազմաֆունկցիոնալ կրթամշակութային միջավայր:

Գրադարանի գործունեությունն իրականացվում է տարեկան ծրագրի հիման վրա, որը մշակվում է դպրոցի ռազմավարական նպատակներին և կրթական առաջնահերթություններին համապատասխան: Ծրագիրը վերանայվում և ճշգրտվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին, քննարկվում մանկավարժական խորհրդի նիստում և ներկայացվում հաստատման դպրոցի տնօրենին: Ծրագրում ներառվում են ընթացիկ և հեռանկարային միջոցառումները, ընթերցանության խթանման նախաձեռնությունները, կրթական ու մշակութային ծրագրերը: Միաժամանակ, այն ենթարկվում է փոփոխությունների՝ պայմանավորված ՀՀ ԿԳՄՍ նախարարության ցուցումներով, ինչպես նաև տվյալ տարվա հոբելյանական կամ թեմատիկ պահանջներով:

Ս. Գևորգյանի անվան դպրոցի գրադարանի առաջնահերթ գործառնություններից է սովորողներին դասագրքերով, իսկ ուսուցիչներին՝ ուսումնական ձեռնարկներով և ուսումնաօժանդակ գրականությամբ ապահովելը: Դասագրքերի ստացումը, հաշվառումը և բաշխումը իրականացվում է ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով՝ Դասագրքերի շրջանառու հիմնադրամի (ԴՀՀ) աջակցությամբ: Հիմնադրամը գործում է Հայաստանում 1997 թվականից և նպատակ ունի ապահովել դպրոցները տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներով, ներդնել կառավարման ավտոմատացված համակարգեր և նպաստել կրթական գործընթացի արդիականացմանը: ԴՀՀ համակարգի միջոցով հնարավոր է դասա-

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

գրքային ֆոնդի ամբողջական հաշվառումն ու վերահսկումը էլեկտրոնային ձևաչափով:

Դասագրքերն ու անհրաժեշտ գրականությունը դպրոցական գրադարանին տրամադրվում են ՀՀ ԿԳՄՍ նախարարության միջոցով՝ հանձնման-ընդունման համապատասխան ակտերով: Ստացված գրականությունը մուտքագրվում է գրադարանի գրքային ֆոնդ և պահպանվում սահմանված ժամկետներում: Քանի որ դպրոցը ավագ դպրոցի կարգավիճակ ունի, դասագրքերը գրադարանում պահվում են առնվազն չորս տարի, որից հետո դուրս են գրվում գործող կարգի համաձայն: ԴՇՀ համակարգում գրանցված լինելու շնորհիվ յուրաքանչյուր աշակերտ և ուսուցիչ հնարավորություն ունի օգտվելու նաև դասագրքերի էլեկտրոնային տարբերակներից: Դասասենյակներում փակցված QR կոդերը ապահովում են արագ մուտք թվայնացված ուսումնական նյութերին:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա նախաշեմին գրադարանավարը ԴՇՀ կառավարման ավտոմատացված համակարգի միջոցով ստանում է գործողությունների հստակ պլան, որն իրականացվում է տնօրենի և հաշվապահի հետ համագործակցությամբ: Այդ գործընթացը ներառում է դասագրքերի ստացում, կնքում, բաշխում, հաշվառման ստուգում, ֆինանսական հաշվետվությունների կազմում և հաստատում, շրջանառությունից դուրս եկած գրականության օտարում, ինչպես նաև ուսումնական տարվա ավարտին դասագրքերի վերադարձի կազմակերպում և համակարգային արձանագրում:

Միևնույն ժամանակ, դպրոցի գրադարանը չի սահմանափակվում միայն դասագրքային ֆոնդի սպասարկմամբ: Այն համալրված է գեղարվեստական, մասնագիտական, մեթոդական և ուսումնաօժանդակ գրականությամբ և գործում է որպես տեղեկատվական կենտրոն: Սովորողներն ու ուսուցիչները հնարավորություն ունեն օգտվելու

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ինչպես ավանդական, այնպես էլ էլեկտրոնային ռեսուրսներից: Գրականության համալրումը հիմնականում իրականացվում է նպատակային նվիրատվությունների միջոցով՝ նախապես գնահատելով դրանց համապատասխանությունը ընթերցողական պահանջներին: Գնումներ կատարվում են բացառիկ դեպքերում:

Գրադարանի հարմարավետ կահավորումը և ազատ տարածքը նպաստում են ընթերցանության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը: Գրականությունը դասակարգված է ըստ բաժինների, ինչը հեշտացնում է որոնումն ու ինքնուրույն օգտագործումը: Բաց դարակների համակարգը և ինքնասպասարկման սկզբունքը խթանում են տեղեկատվական գրագիտության զարգացմանը, միաժամանակ ձևավորելով պատասխանատվության զգացում գրադարանի նյութական արժեքների նկատմամբ:

Գրադարանը ծառայում է նաև որպես ժամանցի և արտադասարանական գործունեության կենտրոն: Այստեղ կազմակերպվում են դաս-միջոցառումներ, ցուցադրվում են ուսումնական և մշակութային տեսաֆիլմեր, անցկացվում են պոեզիայի, երաժշտության և ասմունքի երեկոներ, ինչպես նաև փորձարարական և օրինակելի դասեր: Ուսուցիչների համար գրադարանը հանդես է գալիս որպես ինքնազարգացման միջավայր՝ ապահովելով հասանելիություն մեթոդական գրականությանը, ուսուցչական ձեռնարկներին, մասնագիտական պարբերականներին և «Կրթություն» շաբաթաթերթի ամբողջական հավաքածուին:

Դպրոցում գործող տարբեր ակումբներն ու խմբակները՝ «Պատանի բանասեր», «Պատանի բնասեր», «Գրքասերներ», «Պատանի մաթեմատիկոս» և այլն, սերտորեն համագործակցում են գրադարանի հետ: Գրադարանը ակտիվորեն մասնակցում է պետական և ազգային տոներին նվիրված միջոցառումներին, հանդես գալիս

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

սեփական նախաձեռնություններով և կազմակերպում հանդիպումներ ու քննարկումներ: Դպրոցը համագործակցում է Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանի և ՀՀ այլ կրթական հաստատությունների հետ:

Ամփոփում

Սույն հոդվածի շրջանակում իրականացված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում դպրոցական գրադարանները շարունակում են գործել սահմանափակ գործառնություններով և առանց հստակ իրավական ու ռազմավարական կարգավորման: Դրանց գործունեությունը հաճախ պայմանավորված է նյութատեխնիկական անբավարար պայմաններով, մասնագիտական կադրերի պակասով և դպրոցական ղեկավարության կողմից գրադարանի դերի թերի արժևորմամբ, ինչի հետևանքով գրադարանները վերածվում են հիմնականում դասագրքերի պահպանման և բաշխման վայրերի:

Երևանի Սամվել Գևորգյանի անվան թիվ 189 ավագ դպրոցի գրադարանի փորձի վերլուծությունը փաստում է, որ համապատասխան մասնագիտական մոտեցման, նպատակային կառավարման և տնօրինության աջակցության դեպքում դպրոցական գրադարանը կարող է հանդես գալ որպես բազմաֆունկցիոնալ տեղեկատվական, ուսումնական և մշակութային կենտրոն: Տվյալ օրինակը ցույց է տալիս, որ գրադարանի արդյունավետ գործունեությունը հնարավոր է նույնիսկ սահմանափակ ֆինանսական պայմաններում՝ հենվելով գրադարանավարի նախաձեռնողականության, մասնագիտական կարողությունների և համագործակցային միջավայրի վրա:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Օգտագործված գրականության ցանկ (References)

ՁԵՌՆԱՐԿ 2011 – Հայաստանի դպրոցների գրադարանների ձեռնարկ (2011), 75 [Hayastani dprotsneri gradaranneri dzernark (2011), 75];

ՕՐԵՆՍԳԻՐՔ 2012 - ՀՀ Գրադարանների և գրադարանային գործի մասին օրենք: Հոդված 6 [HH Gradaranneri ev gradaranayin gortsi masin orenq: Hodvats 6]:

**THE LIBRARY OF SAMVEL GEVORGYAN
HIGH SCHOOL NO. 189**

ZARUHI TONOYAN

Faculty of Culture of ASPU

Department of Museology, Library Studies and Bibliographies

Ph.D. in Philology

Բանալի բառեր՝ Samvel Gevorgyan School Library, Library Education, Information Center, Information Literacy, Librarian, Educational Process, High School.

The study conducted within the framework of this article demonstrates that in the Republic of Armenia school libraries continue to operate with limited functions and without clear legal and strategic regulation. Their activities are often conditioned by insufficient material and technical resources, a lack of professional staff, and the inadequate appreciation of the library's role by school administrations, as a result of which libraries are reduced primarily to spaces for the storage and distribution of textbooks.

The analysis of the experience of the library of Yerevan Samvel Gevorgyan High School No. 189 confirms that, with an appropriate professional approach, purposeful management, and the support of the school administration, a school library can function as a multifunctional information, educational, and cultural center. This example shows that the effective operation of a library is possible even under conditions of limited financial resources, relying on the librarian's initiative, professional competencies, and a collaborative environment.

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ԲՐՅՈՒՍՈՎՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ*

ՀՏԴ: 02(479.25)

DOI: 10.54503/2953-8092.2025.2(6)-87

ՆԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Վալերի Բրյուսովի անվան պետական
համալսարանի գիտական գրադարան**

ORCID: [0009-0005-5725-5877](https://orcid.org/0009-0005-5725-5877)

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի՝ Բրյուսովյան գիտական կենտրոնի հարուստ ու մեծարժեք հավաքածուն, արժևորել նրա դերը հայ և ռուս պոեզիայի ժողովրդականացման գործում և դարձնել հանրության սեփականությունը:

Հաշվի առնելով, որ Բրյուսովյան գիտական կենտրոնի հավաքածուն ամբողջությամբ ուսումնասիրված չէ՝ այս ուսումնասիրությունը կարող է դառնալ հիմք նոր հետազոտական աշխատանքների համար: Կենտրոնի նյութերի ուսումնասիրման և հանրայնացման աշխատանքները հնարավորություն են տալիս բացահայտել նոր մոտեցումներ, նպաստել գիտական և մշակութային հետազոտություններին:

The goal of this article is to present the rich and valuable collection of the Brusov Academic Center of V. Brusov State University, to value its role in the popularization of Armenian and Russian poetry and to make it the property of the public.

* Հոդվածը ներկայացվել է 06.11.2025, գրախոսվել է 29.11.2025, ընդունվել է տպագրության 25.12.2025:

The article was submitted on 06.11.2025, reviewed on 29.11.2025, accepted for publication on 25.12.2025.

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Considering that the collection of the center has not been studied completely, we assure that this study can become the basis for new studies. Works on studying and publishing materials allow opening new approaches and contributing to academic and cultural research.

Բանալի բառեր՝ Վալերի Բրյուսով, անձնական գրադարան, գրքային հավաքածու, գիտական կենտրոն, նվիրատվություն:

Ինչպես հղել՝ Հարությունյան, Ն. (2025), Բրյուսովյան գիտական կենտրոնի հավաքածուն, *Լրաբու Հայկական գրադարանային ասոցիացիա*, 2(6), 87-98. [https://doi.org/10.54503/2953-8092.2025.2\(6\)-87](https://doi.org/10.54503/2953-8092.2025.2(6)-87)

How to cite (APA style): Harutyunyan N. (2025), Brusov Academic Center Collection, *Herald of the Armenian Library Association*, 2(6), 87-98. [https://doi.org/10.54503/2953-8092.2025.2\(6\)-87](https://doi.org/10.54503/2953-8092.2025.2(6)-87)

Ներածություն

1962 թ. մարտի 2-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ ռուսական և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտին շնորհվում է ռուս ականավոր բանաստեղծ և հասարակական գործիչ Վալերի Յակովլևիչ Բրյուսովի անունը (<< ՊՊԿԱ, ֆ. 956, ց. 1, գ. 2, թ. 4): Որոշմանը զուգահեռ առաջարկվում է ստեղծել Վ. Բրյուսովի անվան կաբինետ, որտեղ պետք է կենտրոնացվեին բանաստեղծի կյանքին և գրական գործունեությանը վերաբերող արխիվային և գրքային նյութերը: Հենց այս նախաձեռնությունն էլ դառնում է Բրյուսովյան գիտական կենտրոնի ձևավորման հիմքը:

Նույն թվականի հունիսին համալսարանի ռեկտոր Միքայել Նահապետյանը պաշտոնական նամակով դիմում է Վալերի Բրյուսովի կնոջը՝ Իոաննա Բրյուսովային՝ խնդրելով աջակցել կենտրոնի համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերմանը (<< ՊՊԿԱ, ֆ. 956, ց. 1, գ. 3): Նշենք, որ հավաքածուի ստեղծման գործում մեծ դեր են

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ունենում Բրյուսով ընտանիքի անդամները, մասնավորապես՝ բանաստեղծի եղբայրը՝ խորհրդային գիտնական-հնագետ Ալեքսանդր Բրյուսովը, ով պարբերաբար այցելում էր Երևան: Չափազանց կարևոր էին նաև հայաստանցի մասնագետների այցերը Մոսկվա: Հատկապես հիշարժան է համալսարանի պատվավոր պրոֆեսոր Էլեոնորա Դանիելյանի ներդրումը, ով 1963 թ. Մոսկվայից Երևան է Երևան է տեղափոխում բազմաթիվ կարևոր նյութեր, այդ թվում՝ «Миг» («Ակնթարթ») բանաստեղծությունների տպագիր ժողովածուն, որը բացառիկ նմուշ էր Հայաստանում: Այս ամենը նպաստում է, որպեսզի Վ. Բրյուսովի անունը մեկընդմիջտ կապվի համալսարանի գիտական և մշակութային կյանքի հետ, ինչպես նաև նպաստի կենտրոնի հաստատմանն ու շարունակական համալրմանը:

Բրյուսովյան գիտական կենտրոնը

Վ. Բրյուսովի անունը հայ իրականության մեջ նորություն չէր, և համալսարանը նրա անունով կոչելու, ինչպես նաև գիտական կաբինետ ստեղծելու գաղափարները պատահական որոշման արդյունք չէին: Դեռևս 1915 թ. Մոսկվայի հայկական կոմիտեի առաջարկով Վալերի Բրյուսովը սկսեց աշխատել հայկական ազգային պոեզիայի անթոլոգիայի վրա, որը լույս տեսավ 1916 թ. «Поэзия Армении» վերնագրով: Հայոց պոեզիան ընդգրկող այս աշխատությունը բացառիկ դեր ունեցավ հայ և ռուս ժողովուրդների մշակութային կապերի ամրապնդման գործում և իր ուրույն հետքը թողեց Հայաստանի, հայ գրական-մշակութային կյանքի վրա: 1918 թ. նա հեղինակեց «Հայ ժողովրդի պատմական ճակատագրերի տարեգրությունը» աշխատությունը, որի բնօրինակի միկրոֆիլմը պահվում է կենտրոնում: 1923 թ. Բրյուսովին ծննդյան 50-ամյակի կապակցությամբ Սովետական Հայաստանի կառավարության կողմից նրան շնորհվեց Հայաստանի ժողովրդական բանաստեղծի կոչում:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Այսօր Բրյուսովյան գիտական կենտրոնը զբաղեցնում է երկու սենյակ: Առաջին սենյակը գործում է որպես պահոց, իսկ երկրորդը՝ թանգարան: Կենտրոնի ֆոնդը ներառում է՝

- ✓ Վ. Բրյուսովի ձեռագրերի բնօրինակներ,
- ✓ միկրոֆիլմեր և ֆոտոպատճեններ,
- ✓ նամակագրական արխիվի նյութեր,
- ✓ բանաստեղծի կյանքի ընթացքում և հետմահու հրատարակված գրքերի գրեթե ամբողջական հավաքածուն,
- ✓ եզակի պարբերական մամուլ,
- ✓ կենսագրական և պատկերագրական նյութեր:

Թանգարանային հատվածում ներկայացված է բանաստեղծի ժառանգության ստվար մասը: Թե՛ պահոցը, թե՛ թանգարանը բաց և հասանելի են ընթերցողների համար: Ստեղծված են բոլոր պայմանները գիտնականների և հետազոտողների համար՝ ֆոնդում առկա հարուստ ժառանգությունն ուսումնասիրելու համար:

Յուրաքանչյուր անձնական հավաքածու ձևավորելիս՝ այն կարելի է բաժանել երկու ժամանակաշրջանի՝ մինչև հեղինակի մահը՝ 1924 թ. հոկտեմբերի 9-ը և դրանից հետո: Առաջին շրջանն անմիջականորեն արտացոլում է հեղինակի կյանքի ուղին, հետաքրքրությունների շրջանակը և մտավոր զարգացման ընթացքը: Երկրորդ շրջանի դեպքում հավաքածուն հարստանում է տվյալ ժամանակաշրջանին բնորոշ սոցիալ-մշակութային և պատմամշակութային նմուշներով՝ արտացոլելով ոչ միայն անհատի՝ հոգեբանությունը, այլև նրա շրջապատն ու ժամանակաշրջանը:

Բրյուսովյան գիտական կենտրոնի հավաքածուի արժեքը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ այն ներառում է կոնկրետ անհատի գործունեության արդյունքները և արտացոլում է որոշակի պատմական ժամանակաշրջանի մշակութային միջավայրը, այլև

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ


Նրանով, որ կրում է նշանավոր գրողի, ականավոր գիտնականի և մշակութային գործչի մտավոր ու հոգևոր կյանքի անմիջական դրոշմը (ԶՈԼՅԱՆ 2010, 188): Հավաքածուի կազմում ընդգրկված առանձին գրքեր գուցե ինքնին նշանակալի արժեք չեն ներկայացնում, սակայն ամբողջական ֆոնդի համատեքստում դրանք ձեռք են բերում գիտական և մշակութային կարևորություն և, որպես կանոն, ավելի են արժևորվում ժամանակի ընթացքում:

Այս հավաքածուն անփոխարինելի աղբյուր է Վ. Բրյուսովի կյանքի և ստեղծագործական ժառանգության խորքային ուսումնասիրությամբ զբաղվող հետազոտողների համար, քանի որ այն ամբողջականորեն արտացոլում է նրա պատմագրական, լեզվաբանական, իմաստաբանական, մշակութաբանական հետաքրքրությունների ու հետազոտական ուղղությունների բազմակողմանիությունը: Հավաքածուի մաս կազմող նյութերը ինքնին առանձնահատուկ արժեք ունեն՝ որպես մարդկության նյութականացված հիշողության կրողներ: Առկա տպագիր գրքերի մի մասը մատենագիտական տեսանկյունից համարվում է հազվագյուտ նմուշ, քանի որ կամ բացակայում է այլ գրադարաններում, կամ պահպանվում է եզակի օրինակներով:

Հավաքածուի կենսագրական նյութերը ներառում են ընտանեկան լուսանկարներ, հին լուսանկարչական բացիկներ, որոնք առնչվում են ինչպես Ռուսական կայսրությանը, այնպես էլ խորհրդային ժամանակաշրջանին: Կենտրոնի հավաքածուի նյութերը, գեղարվեստական և քննադատական հարուստ գրականությունը, ինչպես նաև արժեքավոր կենսամատենագիտական տվյալները ստեղծում են գիտական հետազոտությունների իրականացման լայն հնարավորություններ ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլև մերձավոր և հեռավոր երկրների ուսումնական հաստատությունների ու գիտա-

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

կան ինստիտուտների աշխատակիցների համար:



Բրյուսովյան գիտական կենտրոնը բացառիկ նշանակություն ունի նաև այն առումով, որ ֆոնդում ընդգրկված գրքերի զգալի մասի վրա հեղինակը անձամբ կատարել է բազմաթիվ մակագրություններ, զծանշումներ և մեկնաբա-

նություններ (նկ¹): Դրանք հնարավորություն են տալիս վերակազմելու նրա ստեղծագործական մտածողության ընթացքը և գրական աշխատանքի մեթոդաբանությունը: Հարյուրավոր գրքերի տողերի արանքում, առանձին բառերի և հատվածների կողքին պահպանված այդ նշումները հավաքածուին հաղորդում են առանձնահատուկ գիտական և աղբյուրագիտական արժեք:

Կենտրոնում պահպանվում են Բրյուսովի լավագույն բանաստեղծությունների ինքնագրերը, բանաստեղծի կենդանության օրոք լույս տեսած հրատարակությունները, գրախոսության ուղարկված բանաստեղծությունները, տարբեր հեղինակների ընծայագրերը, ինչպես նաև բանաստեղծական ժողովածուների օրինակներ՝ հեղինակի խմբագրական ուղղումներով: Հավաքածուի կարևոր մաս են կազմում նաև Բրյուսովի նամակները, գիմնագիայում սովորելու տարիներին գրված գրական թեմաներով աշխատանքները, առաջին բանաս-

¹ Բրյուսով Վ., «Պոմպեոս Մեծ»: Հատված ձեռագիր սևագրից, Բրյուսովի գիտական կենտրոնի հավաքածու:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

տեղծությունների պատանեկան տետրերը և օրագրային գրառումները, որոնք թույլ են տալիս հետևել նրա ստեղծագործության ձևավորման վաղ փուլերին:

Հավաքածուի մեջ ներառված են նաև Բյուսովի ժամանակաշրջանի ռուս նշանավոր բանաստեղծների և գրողների՝ Անդրեյ Բելիի, Իգոր Սևերյանինի, Ֆեոդոր Սոլոգուբի, Վլադիսլավ Խոդասևիչի, Լեոնիդ Անդրեևի, Վսևոլոդ Իվանովի և այլոց աշխատությունները:

Բավականին հարուստ է կենտրոնի պարբերական մամուլի բաժինը, ուր ժամանակագրորեն ամենահին միավորը «Мир искусства» (Արվեստի աշխարհ) ամսագրի համարներն են: Ամսագիրն ամբողջությամբ նվիրված է ռուսական սիմվոլիստական շարժմանը: Ամսագրի գրական բաժինը ձևավորվել էր ոչ թե ամսագրի հիմնադրման պահից (1899 թ.), այլ միայն 1900 թ.: Այն զուրկ էր գեղարվեստական գրականությունից և բաղկացած էր միայն հոդվածներից ու գրախոսություններից: Պարբերականի գեղարվեստական և գեղագիտական մակարդակը փոխվում է Դ. Մերեժկովսկու, Զ. Գիպպիուսի, Վ. Ռոզանովի, Լ. Շեստովի, Ն. Մինսկու, Ֆ. Սոլոգուբի, Կ. Բալմոնտի, Վ. Բյուսովի (1901 թ. կեսերից), Անդրեյ Բելիի (1902 թվականից) ջանքերի շնորհիվ:

Բյուսովը քարոզում էր սիմվոլիզմը հասարակության կրթված շրջանակներում և ծավալում ակտիվ հասարակական գործունեություն: Նա «Скорпион» հրատարակչության ղեկավարներից էր, «Северные цветы» ավանախի կազմակերպիչը, «Весы» (Կշեռք) ամսագրի նախաձեռնողն ու խմբագիրը: Կենտրոնում պահվում են հետևյալ պարբերականները՝

- ✓ «Русские символисты» (1894 г.)
- ✓ «Весы: Ежемесячник искусств и литературы» (1905-1909 гг.)
- ✓ «Русская мысль: Ежемесячное литературно-политическое

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

издание» (1908-1916 гг.)

✓ «Аполлон: Художественно-литературный журнал» (1911-1917 гг.)

✓ «Русская литература XX вѣка: (1890-1910)» (1915-1916 гг.)

✓ «Армянский вестник: Еженедельный общественно-политический и литературный журнал» (1916-1917 гг.) և այլն:

Բրյուսովյան գիտական կենտրոնի երաժշտությանը վերաբերող «ոսկե ֆոնդը» համալսարանին նվիրաբերել են Վալերի Բրյուսովի քույրերը՝ Նադեժդա Բրյուսովան և Եվգենիա Բրյուսովան, ինչպես նաև տարբեր անվանի երաժիշտները: Ֆոնդը ներառում է մեծ արժեք ներկայացնող նոտագրական նյութեր՝ ստեղծված Վ. Բրյուսովի բնօրինակ և թարգմանական բանաստեղծությունների հիման վրա: Այս նյութերը Բրյուսովյան կենտրոնի հավաքածուի առանձնահատուկ մասն են՝ հանդիսանալով գրականության և երաժշտության փոխազդեցության յուրօրինակ վկայություններ:

Նոտաները հրատարակվել են Ռուսաստանում և Եվրոպայում՝ XX դարի դասական երաժշտության նմուշների հրատարակության մեջ հայտնի խոշոր հրատարակիչներ Պ. Յուրգենսոնի, Յուլիուս Հենրիխ Յիմերմանի և այլոց կողմից, ինչն ավելի է մեծացնում այդ նյութերի արժեքը:

Ներկայացնենք հեղինակների, նվիրատուների ստորագրություններով ու ձոներով Բրյուսովյան գիտական կենտրոնին նվիրաբերված նյութերից մի քանիսը՝ ի ցույց դնելով հավաքածուի մատենագիտական և պատմամշակութային արժեքը:

Ընծայագրերով նոտաներ՝

✓ Гречанинов, А. Снежинки [Ноты], Москва, 1910.

Ընծայագրով. «Ереванскому педагогическому институту им.

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

В.Я. Брюсова от семьи Брюсовых. 5/IX 62 г.»

✓ Иванов-Борецкий, А. Два стихотворения Валерия Брюсова из цикла «Ненужная любовь», СПб., 1908.

Ընծալալարնվ. «Ереванскому педагогическому институту им. В.Я. Брюсова от семьи Брюсовых. 5/IX 62 г.»

✓ Рахманинов, С.В. Шесть стихотворений: романс для пения и фортепиано, Москва, [1916].

Ընծալալարնվ. «Ереванскому педагогическому институту им. В.Я. Брюсова от семьи Брюсовых. 5/IX 62 г.»

✓ Alexandre, C. Où es tus? (“Где ты?”): pour chant et piano, Москва, 1919.

Ընծալալարնվ. «Ереванскому педагогическому институту им. В.Я. Брюсова от семьи Брюсовых. 5/IX 62 г.»

Ընծալալարնարնվ գրքեր՝

✓ Брюсов, В.Я. Земная ось. Рассказы и драматические сцены (1901-1907 г.), М., 1910.

Ընծալալարնվ. «Милой маме. Валерий 1910 г.»

✓ Брюсов, В.Я. Миг. Стихи: 1920-1921 гг., Берлин-Петербург, 1922.

Ընծալալարնվ. «Ереванскому педагогическому институту им. В. Брюсова от семьи Брюсова. 4/XI 1963 г.»

✓ Брюсов, В.Я. Огненный ангел: повесть в XVI гл., М., 2004.

Ընծալալարնվ. «Дар библиотеке университета им. В. Брюсова 11 февраля 2020 г. М. Амирханян»

✓ Валерий Брюсов и Петр Струве: Переписка. 1906-1916 / Составл. А. Лаврова.- СПб., 2021.

Ընծալալարնվ. «В Брюсовский кабинет Ереванского универси-

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ


тета им. Брюсова от составителя. 9/X 23 г.»

✓ Пушкин, А.С. Полное собрание сочинений / Ред. В. Брюсова.- М., 1919.

Ընծայագրով. «Брюсовскому кабинету Ереванского Педагогического института имени Валерия Брюсова от Т. Ахумяна 23/XI 1962 г.»

✓ Французские лирики XVIII века, М., 1914.

Ընծայագրով. «Սիրէլի Նւարդ Թումանեանին՝ սրտագին նւէր Եօհաննա Բրիւսովից»



Բրյուսովը նաև կազմել է Հոլանդիայի, Գերմանիայի, Բելգիայի, Իտալիայի քարտեզները տարբեր պատմական ժամանակաշրջաններում: Հավաքածուում պահվում են հեղինակի ձեռագիր քարտեզները՝ համապատասխան ժամանակաշրջաններ վերաբերյալ նրա գրառումներով²:

Ժամանակագրական առումով հավաքածուն ընդգրկում է այստեղ մեկտեղվել են XX դարի առաջին կեսից մինչ օրս տպագրված գրքեր և պարբերականներ:

Նյութերը տպագրվել են Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, Ստավրոպոլում, Երևանում, Թբիլիսիում, Լիոնում, Վարշավայում,

² Նկարը Հին Հռոմի քարտեզի ձեռագիր բնօրինակ է՝ հեղինակված Վ. Բրյուսովի կողմից, Բրյուսովի գիտական կենտրոնի հավաքածու:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Տոկիոյում և այլ քաղաքներում:

Հավաքածուն շարունակում է համալրվել այլ գրադարանների և նվիրատուների հազվագյուտ օրինակներով:

Ամփոփում

Կարող ենք եզրակացնել, որ անձնական հավաքածուների պահպանությունը, համակարգումը, հետազոտումն ու հանրայնացումը ունեն առանցքային նշանակություն, քանի որ դրանք հանդիսանում են յուրօրինակ կամուրջներ ժամանակի և տարածության միջև, որոնք մշակութային ժառանգությունը փոխանցում են գալիք սերունդներին և գիտական հանրությանը: Բրյուսովյան գիտական կենտրոնի հավաքածուի վիճակագրական, վերլուծական և մատենագիտական ուսումնասիրությունը թույլ կտա բացահայտել մշակութային և գիտական արժեք ներկայացնող բազմաթիվ նոր նյութեր, որոնք մինչ օրս լիարժեք հետազոտության չեն արժանացել: Միաժամանակ, հնարավոր կլինի ստանալ ճշգրիտ տվյալներ հավաքածուի ամբողջական քանակի վերաբերյալ՝ ըստ գիտական ճյուղերի, գրականության տեսակների և լեզուների:

Համոզված ենք, որ այս հոդվածը կդառնա հավաքածուի համակողմանի գիտական ուսումնասիրության գործընթացի կարևոր մեկնարկային փուլը:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԱՐԿԵՍՏԻ աշխարհ – էլ. աղբյուր՝ Արվեստի աշխարհ (ամսագիր) – Վիքիպեդիա (06.12.2025)

ՀՈԼՅԱՆ 2010 – Հոլյան, Ս. և ուրիշն. (խմբ.) (2010), *Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի պատմություն: Արխիվային նյութերի ժողովածու*, Երևան, 188 էջ [Zolyan, S. ev urishn. (khmb.) (2010), *Yerevani V. Bryusovi anvan petakan lezvabanakan hamalsaḡani patmutyun: Arkhivayin nyuteri zhoghovatsu*, Yerevan, 188];

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ 1976 – Համբարձումյան, Վ. և ուրիշն. (խմբ.) (1976), Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 2, Երևան, 720 էջ [Hambardzumyan, V. et al. (1976), Haykakan sovetakan hanragitaran, ht. 2, Yerevan, 720];

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 956, գ. 1, զ. 2, թ. 4 [HH PPKA, f. 956, ts. 1, g. 2, t. 4];

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 956, գ. 1, զ. 3 [HH PPKA, f. 956, ts. 1, g. 3]:

BRUSOV ACADEMIC CENTER COLLECTION

NARINE HARUTYUNYAN

Brusov State University

Academic Library

Բանալի բանեք՝ Valery Brusov, Personal Library, Book Collection, Academic Center, Donation.

It can be concluded that the preservation, organization, study, and dissemination of personal collections hold significant importance, as they serve as bridges across time and space, transmitting cultural and intellectual heritage to future generations and the academic community. Statistical, analytical, and bibliographic studies of the Brusov Academic Center's collection will allow the identification of numerous materials of cultural and scholarly value that, until now, may not have received comprehensive examination. At the same time, such research will enable the collection to obtain accurate data regarding the total size of the collection, classified by scientific disciplines, literary genres, and languages.

Regretably, this article will become the initial stage in the process of a comprehensive scholarly study of the collection.

ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ

Վիճակագրական վերլուծություն*

ՀՏԴ: 02(479.25)

DOI: 10.54503/2953-8092.2025.2(6)-99

ՀԵՂԻՆԵ ՀԱԼԻՎՈՐՅԱՆ, ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Լոռու մարզային գրադարան

ORCID: [0009-0002-2941-1260](https://orcid.org/0009-0002-2941-1260)

Սույն ուսումնասիրության մեջ ներկայացվում է Լոռու մարզում գործող գրադարանների գործունեության վիճակագրական և վերլուծական պատկերը: Ուսումնասիրության նպատակն է գնահատել գրադարանների գրքային հավաքածուների համալրման, ընթերցողական ակտիվության, աշխատակիցների կրթական մակարդակի և համայնքային գործունեության արդյունքները: Վերլուծվում են մարզային, քաղաքային, գյուղական և մանկական գրադարանների աշխատանքները, հետազոտվում են գրադարանային ավանդույթները, ֆինանսական և տեխնիկական խնդիրները, ինչպես նաև ընթերցողների սպասարկման և կրթական-մշակութային ծրագրերի իրականացումը:

The goal of this research is to provide a statistical and analytical overview of the activities of libraries operating in the Lori region. The purpose of the study is to assess the results of library book collection development, reader engagement, staff educational preparedness, and community activities. The work of regional, city, rural, and children's libraries is analyzed, examining library

* Հոդվածը ներկայացվել է 02.05.2025, գրախոսվել է 07.09.2025, ընդունվել է տպագրության 11.10.2025:

The article was submitted on 02.05.2025, reviewed on 07.09.2025, accepted for publication on 11.10.2025.

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

traditions, financial and technical challenges, as well as the implementation of reader services and educational and cultural programs.

Բանալի բառեր՝ Լոռու մարզ, գրադարաններ, հավաքածուներ, ընթերցողներ, ավանդական գրադարան, թվային տեխնոլոգիաներ, մարտահրավերներ, գրադարանների պատմություն, վիճակագրություն:

Ինչպես հղել՝ Հալիվորյան, Հ., Մանուչարյան, Կ. (2025), Լոռու մարզի գրադարանները: Վիճակագրական վերլուծություն, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(6), 99-114. [https://doi.org/10.54503/2953-8092.2025.2\(6\)-99](https://doi.org/10.54503/2953-8092.2025.2(6)-99)

How to cite (APA style): Halivoryan, H., Manucharyan, K. (2025), Libraries of Lori Province: Statistical Analysis, *Herald of the Armenian Library Association*, 2(6), 99-114. [https://doi.org/10.54503/2953-8092.2025.2\(6\)-99](https://doi.org/10.54503/2953-8092.2025.2(6)-99)

Ներածություն

Ժամանակակից գրադարանը մշակութային և կրթական հաստատություն է, որի դերը արդի տեղեկատվական հասարակության ձևավորման գործում ընդգծվում է յուրաքանչյուր տարի (ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002, 262): Ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում գրադարանների գործունեության ոլորտները զգալիորեն ընդլայնվել են: Տպագիր արտադրանքի հսկայական աճը գրադարանների առջև բազմաթիվ հրատարակությունների ընտրության, մշակման, արդյունավետ պահպանման և ընթերցողներին արագ ու ճիշտ սպասարկելու խնդիր է դրել (ԶԱՐԳԱՐՅԱՆ 1996):

Բնակչության կրթական մակարդակի բարձրացմանը զուգահեռ մեծացել են ընթերցողների պահանջները գիտական, մասնագիտական գրականության և մատենագիտական տեղեկատվության նկատմամբ: Ուստի, գրադարանային գործի ճիշտ և արդյունավետ

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

կազմակերպումը գործուն նշանակություն ունի գիտակից և առողջ հասարակության ձևավորման և կայացման գործում:

Մարզերում մշակութային կյանքի ակտիվացման գործում անվերապահորեն մեծ է մարզային գրադարանների դերը: Դա ամրագրված է առաջին հերթին ՀՀ օրենսդրությամբ. «Մարզային գրադարանը ապահովում է մարզի բնակչության գրադարանային-տեղեկատվական մատչելիությունը, համալրում է գրադարանային տեղեկույթի էլեկտրոնային շտեմարանը, օգտվում է ցանցի հնարավորություններից, ապահովում է մարզի կազմակերպությունների գրադարանային ծառայության մեթոդական, մասնագիտական և տեղեկատվական ծառայությունը»¹: Բոլոր խնդիրներով հանդերձ՝ մարզային գրադարաններն այսօր կարողանում են համակարգել իրենց և համայնքային գրադարանների աշխատանքը, ինչը մեծապես նպաստում է մարզի կրթա-մշակութային կյանքի ակտիվացմանն ու զարգացմանը (ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՄՈՒՐԱԴՅԱՆ 2023, 404-418):

Ըստ Վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2024 թ. Լոռու մարզում գործել է 48 գրադարան, որոնցից քաղաքային են 13-ը, գյուղական՝ 35-ը, 1-ը՝ Լոռու մարզային գրադարանը: Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել Լոռու մարզում գործող գրադարանների գործունեության ընդհանուր պատկերը տարժամանակյա և համաժամանակյա կտրվածքներով: Քանի որ Լոռու մարզը բավական մեծ է, և բոլոր գրադարանները մեկ հոդվածի սահմանում անհնար է ներկայացնել, առանձնացրել ենք նրանցից մի քանիսը, անդրադարձել ենք այդ գրադարանների ստեղծման պատմությանը, 1988 թ. ավերիչ

¹ ՀՀ օրենքը գրադարանների և գրադարանային գործի մասին, 2012 թ. մարտի 21, հոդված 5:

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

երկրաշարժի ազդեցությանը և ներկա դրությանը: Նվաճումների և ձեռքբերումների կողքին ընդգծել ենք առկա խնդիրները:

Պատմական անդրադարձ

Լոռու մարզի գրադարանային մշակույթի արմատները հասնում են X դար, երբ Սանահինի և Հաղպատի վանական համալիրներում ձևավորվում են ձեռագրատներ: Դրանք ոչ միայն հոգևոր ու կրթական կյանքի կենտրոններ էին, այլև գիտելիքի ստեղծման ու տարածման կարևոր օջախներ:

Գրադարանային գործի զարգացումը Լոռու մարզում առավել տեսանելի է դառնում տարածաշրջանում արդյունաբերության զարգացման համատեքստում: Օրինակ՝ Ալավերդիում 1901 թ. հույն և ֆրանսիացի մասնագետների նախաձեռնությամբ հիմնված գրադարանը նախնական շրջանում ուներ տեխնիկական ուղղվածություն և ծառայում էր պղնձարտադրության ոլորտի մասնագետներին: Խորհրդային կարգերի հաստատումից հետո գրադարանը դառնում է մասսայական գրադարան՝ ընդլայնելով իր գործունեության շրջանակը և դառնալով հանրային կրթամշակութային կենտրոն: 1921-1923 թթ. քաղաքի բոլոր թաղամասերում բացվել են խրճիթ-ընթերցարաններ, որոնք այնուհետև վերածվել են թաղամասային գրադարանների:

Ստեփանավանում գրքի և գրադարանների մշակույթը ձևավորվել է 19-րդ դարի երկրորդ կեսին: 1883 թ. Ստեփանավանի տանուտեր Սարգիս Տեր-Գրիգորյանցը հիմնել է հասարակական ընթերցարան, իսկ 1935 թ., քաղաքում բացվել է նոր գրադարան-ընթերցարանը: Տարիների ընթացքում քաղաքը համալրվել է քաղաքային, շրջանային, մանկական գրադարաններով: 1980 թ. ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրության հրամանով Ստեփանավանում ստեղծվել է գրադարանների կենտրոնացված համակարգ, որը լուծարվել է

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

1996 թ.՝ վերանվանվելով կենտրոնական գրադարան: 2000-2011 թթ. լուծարվել են տեղի թիվ 1 քաղաքային, մանկական 2 գրադարանները: 2011 թվականից քաղաքում գործում է միայն կենտրոնական գրադարանը, որը 2024 թ. վերանվանվել է քաղաքային գրադարան: Այն գործում է վերանորոգված, հարմարավետ շենքում:

Լոռու մարզի գրադարանների շարքում անդրադարձ կատարենք նաև Սպիտակի քաղաքային գրադարանին, որը գործում է 1939 թվականից: Գրադարանի գործունեությունը խափանվել է երկրաշաժի պատճառով, որից հետո վերականգնվել է և գործում է մինչ օրս: Այն եզակի գրադարաններից է, որն ունի թանգարանային բաժին:

Համայնքային գրադարանների գործունեությունն առանձին-առանձին սույն հոդվածի շրջանակում ներկայացնել չենք կարող: Նշենք միայն, որ որոշ համայնքային գրադարաններ ակտիվ են, որոշները՝ պասիվ: Որպես օրինակ՝ առանձնացնենք Մեղրուտ գյուղի գրադարանը (այժմ՝ Գուգարք բնակավայր), որը սկսել է գործել 1948 թվականից: 1978 թ. այն դարձել շրջանային՝ 6 բաժիններով: Գրադարանի շենքն ունի լուսավոր և ընդարձակ սենյակներ, սակայն հրատապ է վերանորոգման հարցը. չկա ջրամատակարարում, կոյուղի, ջեռուցում:

Լոռու մարզի գրադարանային համակարգի կենտրոնը Լոռու մարզային գրադարանն է: Այն գործում է 1975 թվականից, տիպային հարմարավետ շենքում: 1985 թ. կենտրոնական գրադարանը հայ բանաստեղծ Վահան Տերյանի ծննդյան 100-ամյակի առիթով անվանակոչվել է նրա անունով: 1992 թ. վերանվանվել է Վանաձորի կենտրոնական գրադարան, իսկ 2003 թ.՝ Լոռու մարզային գրադարան: 1987 թ. Վանաձորի գրադարանային կենտրոնացված համակարգի մասնաճյուղային գրադարանների բազայի վրա ստեղծվել է «Գրա-

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

դարանների կենտրոնացված բաժնետիրական ընկերություն»-ը այժմ՝ «Հրանտ Մաթևոսյանի անվան Վանաձորի գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ (2010թ. դեկտեմբերի 17-ի թիվ 91 որոշմամբ): 2008 թ. ԳԿՀ ՀՈԱԿ-ի կազմում գործել է 10, 2010-ին՝ 8, 2017-ից՝ 4 գրադարան:

1975 թ. շահագործման է հանձնվել գրադարանի շենքը: Կարճ ժամանակահատվածում այն համալրվել է անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Իր գործունեության ընթացքում այս մշակութային կառույցը վերածվել է ոչ միայն ընթերցողների սպասարկման, այլև գրադարանագիտական և մատենագիտական կենտրոնի:

Գրադարանի գործունեությունն արմատապես փոխվել է 1988 թ. ավերիչ երկրաշարժից հետո, բայց ոչ մի օր փակ չի եղել: Գրադարանային ավանդական բաժիններից բացի, 2003 թ. ստեղծվել են նորերը՝ Գրադարանային գործի ավտոմատացման, էլեկտրոնային սպասարկման և տեղեկատվության, Այլ խմբերի հետ աշխատանքների և սպասարկման բաժիններ: 2007 թվականից այստեղ գործում է Վանաձորի Ամերիկյան անկյունը, որն ակտիվ գործունեություն է ծավալում անգլերեն գրականության սպասարկման և անգլերենի տալիսականության ակումբների կազմակերպման գործում:

Երկրաշարժից հետո գրեթե 20 տարի գրադարանը գործել է առանց ջեռուցման: 2008 թ. ՀՀ կառավարության օժանդակությամբ Լոռու մարզային գրադարանը հիմնանորոգվել է, վերականգնվել է ջեռուցումը:

Լոռու մարզի գրադարանները, որոնք ձևավորվել են հարուստ պատմամշակութային ավանդույթների հիման վրա, ներկայումս կրթության, գիտության, մշակույթի և հանրային հաղորդակցության բազմաֆունկցիոնալ կենտրոններ են: Դրանց գործունեությունը չի սահմանափակվում միայն գրքային հավաքածուների պահպանմամբ

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

և ընթերցողների սպասարկմամբ, այլև ներառում է տեղեկատվական, կրթամշակութային, սոցիալական և հասարակական կարևոր գործառնություններ: Այս առումով առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Լոռու մարզային գրադարանը, որը հայտնի է իր նվիրյալ աշխատակիցներով: Նրանցից մեկը՝ Վերգինե Մխիթարյանը, դարձել է Ստեփան Զորյանի «Գրադարանի աղջիկը» վիպակի գլխավոր հերոսուհին: Այսօր էլ գրադարանի աշխատակիցները ջանք ու եռանդ չեն խնայում՝ մատաղ սերնդի կրթությունն ու դաստիարակությունը ճիշտ կազմակերպելու համար:

Գրադարանների գործունեության կարևոր ուղղություններից է ընթերցանության խթանումը, տեղեկատվական նոր ռեսուրսների ներգրավումը: Հաջողության հասնելու համար տարբեր տարիներին օգտագործվել են դոնոր կազմակերպությունների և դրամաշնորհային ծրագրերի հնարավորությունները: Մասնավորապես, 1990 թ. «Բաց հասարակության ինստիտուտի» օժանդակությամբ Լոռու մարզային գրադարանը համալրվել է շուրջ 5000 ԱՄՆ դոլար արժողությամբ գիտական և ուսումնական գրականությամբ: «Եվրասիա» հիմնադրամի դրամաշնորհի շնորհիվ գրադարանը ձեռք է բերել անհրաժեշտ համակարգչային տեխնիկա և մեծաքանակ գրականություն, ինչի արդյունքում ընդլայնվել են տեղեկատվական ծառայությունների հնարավորությունները:

Լոռու մարզի գրադարանները կարևորում են նաև ընթերցող-գիրք կապի ամրապնդումը՝ կազմակերպելով բազմաբնույթ միջոցառումներ՝ հանրամատչելի զեկուցումներ, սեմինարներ, գրքերի շնորհանդեսներ, կինոդիտումներ և քննարկումներ: Պարբերաբար նշվում են հայ դասական և ժամանակակից գրողների հոբելյաններ, ինչը նպաստում է մշակութային ժառանգության հանրահռչակմանը և ընթերցանության մշակույթի ձևավորմանը: Այս միջոցառումները հատ-

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

կապես կարևոր են աշակերտների և ուսանողների համար՝ հնարավորություն ընձեռելով լրացնել դպրոցում և բուհում ստացած գիտելիքները և զարգացնել հետազոտական ու վերլուծական հմտությունները:

Լոռու մարզային գրադարանը համայնքային գրադարաններին մշտապես պահում է ուշադրության կենտրոնում՝ դիտարկելով դրանք որպես համայնքների մշակութային, կրթական և տեղեկատվական կյանքի կարևոր հենասյուներ: Այդ նպատակով մարզային գրադարանն իրականացնում է բազմաշերտ և համակարգված աշխատանք: Մասնավորապես՝ իրականացնում է մեթոդական ղեկավարում՝ մշակելով ուղեցույցներ, առաջարկություններ և աշխատանքային ծրագրեր համայնքային գրադարանների համար, կազմակերպում են մասնագիտական վերապատրաստումներ, սեմինարներ և աշխատաժողովներ, որոնք նպաստում են գրադարանավարների կարողությունների զարգացմանը և ժամանակակից գրադարանային մոտեցումների կիրառմանը, ապահովում է փորձի փոխանակում և ցանցային համագործակցություն և խթանում համայնքային գրադարանների միջև կապերի ամրապնդումը: Այս կերպ մարզային գրադարանը դառնում է ոչ միայն համակարգող, այլև գործընկեր՝ համայնքային գրադարանների զարգացման ճանապարհին:

Գրադարանը միջազգային համագործակցության շրջանակում արժանացել է նաև օտարերկրյա հյուրերի ուշադրությանը. Մեծ Բրիտանիայի դեսպանի այցի ընթացքում գրադարանին նվիրաբերվել է համաշխարհային դասականների հարյուր հատորանոց անգլալեզու մատենաշար, իսկ ամերիկացի գիտնական Դենի Բաթրֆիլդի կողմից՝ շուրջ 4000 ԱՄՆ դոլարի արժողությամբ ռուսական, արևմտաեվրոպական և ամերիկյան գրականության ընտրանի: Այս

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Նվիրատվությունները զգալիորեն հարստացրել են գրադարանի ֆոնդը և ընդլայնել ընթերցողների հնարավորությունները:

Վերջին տարիներին գրադարանի համալրման հիմնական աղբյուրներն են գնումները և նվիրատվությունները, ինչպես նաև համագործակցությունը տարբեր հրատարակչությունների հետ: Միև-նույն ժամանակ, գրադարանի ամենախնդրահարույց հարցերից մեկը շարունակում է մնալ պարբերական մամուլի համալրումը, ինչը հանգեցնում է ընթերցողների պահանջների ոչ լիարժեք բավարարմանը:

Այս բազմակողմանի գործունեության շնորհիվ Լոռու մարզային գրադարանը մի քանի անգամ ճանաչվել է լավագույնը՝ գրանցելով բարձր ցուցանիշներ: 2025 թ. դրությամբ գրադարանի գրքային ֆոնդը կազմում է 355.824 միավոր, ընթերցողների թիվը՝ 11.650, հաճախումները՝ 155.111, տացքը՝ 209.232, ինչը վկայում է գրադարանի կայուն պահանջարկի և հանրային նշանակության մասին:

Լոռու մարզի քաղաքային և համայնքային գրադարանների գործունեությունը ևս պետք է դիտարկել ձեռքբերումների ու խնդիրների համադրության մեջ: Ալավերդի քաղաքում մինչ 1990-ականները գործել է 14 գրադարան, որոնց մեծ մասը հետագայում փակվել է: Ներկայում գործում են երկու գրադարաններ՝ Հ. Թումանյանի անվան քաղաքային և Հրանտ Մաթևոսյանի անվան գրադարանները: Փակված գրադարանների գրքային ֆոնդը բաշխվել է այս երկու գրադարանների միջև: Հ. Թումանյանի անվան գրադարանը նախկինում տեղակայված է եղել քաղաքի մշակույթի տանը: 2005 թ. «Վալլեքս Գրուպ» ընկերությունը գնել է մշակույթի տունը, և գրադարանը տեղափոխվել է հարակից շենք՝ Ալավերդու մշակույթի պալատ, ուր գործունեություն է ծավալում առ այսօր: Այս շենքը նույնպես պատկանում է «Վալլեքս Գրուպ» ընկերությանը: Մեկ դարի պատմու-

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

թյուն ունեցող գրադարանն ունի վերանորոգման կարիք և չունի սեփական տարածք:

Ստեփանավանի քաղաքային գրադարանը գործում է վերանորոգված և հարմարավետ շենքում և իր գործունեությամբ օրինակելի մոդել է մարզի համար: Այն բավարարում է բնակչության տարբեր խմբերի պահանջները, իրականացնում է կրթական և մշակութային բազմաբնույթ ծրագրեր, ունի «Արմատ» ինժեներական լաբորատորիա, երիտասարդական կենտրոն, կազմակերպում է անվճար դասընթացներ և հանդիպումներ մշակույթի գործիչների հետ: 2025 թ. հունվարի 1-ի դրությամբ գրքային ֆոնդը կազմում է 97.030 միավոր գրականություն, ընթերցողների թիվը՝ 2827, հաճախումը՝ 26.615, տացքը՝ 52.719:

Սպիտակի քաղաքային գրադարանը, որը վերականգնվել է երկրաշարժից հետո, ունի նաև թանգարանային բաժին և ակտիվ մշակութային կյանք: Այն համագործակցում է բազմաթիվ կրթական և հասարակական կազմակերպությունների հետ, կազմակերպում է մրցույթներ, փառատոներ, գրական երեկոներ և կրթաճանաչողական միջոցառումներ: Ֆինանսական սահմանափակումների պատճառով այստեղ ևս դժվարությամբ է ապահովում գրքային ֆոնդերի շարունակական համալրումը, և այդ բացը հաճախ լրացվում է գրքերի նվիրատվության ակցիաներով: Ըստ 2024 թ. տվյալների՝ գրադարանային հավաքածուն կազմում է 48.235 միավոր գրականություն, ընթերցողների թիվը՝ 4071, տացքը 75.625, հաճախումների թիվը՝ 61.230:

Գյուղական համայնքներում գործող գրադարանները կարևոր դեր են խաղում համայնքային մշակութային կյանքի պահպանման գործում, սակայն ունեն շենքային և ենթակառուցվածքային լուրջ

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

խնդիրներ՝ ջեռուցման, ջրամատակարարման և վերանորոգման բացակայության պայմաններում:

Ընդհանուր առմամբ կարելի է եզրակացնել, որ Լոռու մարզի գրադարանները վերջին տարիներին արձանագրել են զգալի առաջընթաց՝ ինչպես գրքային ֆոնդերի համալրման, այնպես էլ կրթամշակութային միջոցառումների կազմակերպման ոլորտներում: Միևնույն ժամանակ, շենքային պայմանների բարելավման, պարբերական մամուլի ապահովման, ֆինանսավորման կայուն մեխանիզմների և թվայնացման գործընթացների խորացման անհրաժեշտությունը շարունակում է մնալ արդի մարտահրավեր: Չնայած այդ խնդիրներին՝ Լոռու մարզի գրադարանները շարունակում են ակտիվորեն նպաստել հանրության տարբեր շերտերի ընթերցողական պահանջարկների բավարարմանը՝ պահպանելով իրենց դերը որպես տարածաշրջանի մտավոր և մշակութային զարգացման կարևոր հիմնասյուներ:

Վիճակագրական վերլուծություն


Վերը նշված տվյալները խոսում են գրադարանների ակտիվության և հասարակական տարբեր ոլորտների վրա ունեցած ազդեցության մասին, սակայն առկա խնդիրներն ու մարտահրավերները ստիպում են պարբերաբար վերլուծել գրադարանների գործունեությունը՝ ավելի լավ արդյունքի հասնելու համար: Սույն ուսումնասիրության շրջանակում ներկայացնում ենք որոշ վիճակագրական տվյալներ, որոնք վերցվել են ՀՀ վիճակագրական պետական կոմիտեի հաշվետվություններից:

Մեզ հետաքրքրել են միայն Լոռու մարզի գրադարանների քանակին ու տեսակներին առնչվող վիճակագրական տվյալները, այդ պատճառով ընթերցողների թվաքանակին, տացքին, հաճախումներին և այլ հարցերին առնչվող տվյալներն այստեղ չենք ներկայաց-

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Նում՝ նպատակ ունենալով հետազայում ավելի մանրակրկիտ անդրադառնալ այդ խնդիրներին: Համեմատել ենք 2022-2024 թթ. արդյունքները: Ըստ այդմ՝ պատկերը հետևյալն է:

Լոռու մարզում գործող գրադարանների քանակը².



Ինչպես տեսնում ենք, 2022 թ. Լոռու մարզում գործել է 44, 2023 թ. 41, 2024 թ.՝ 48 գրադարան: Ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ 2022–2024 թթ. ընթացքում Լոռու մարզի գրադարանային ցանցը փոփոխությունների է ենթարկվել: 2020–2021 թթ. համավարակի և հետպատերազմյան սոցիալ-տնտեսական դժվարությունների ֆոնին 2022 թ. տվյալը փաստում է, որ մարզում հնարավոր է եղել պահպանել հիմնական ենթակառուցվածքը, ինչը չենք կարող ասել 2023 թ. մասին, երբ դադարել է գործել 3 գրադարան: Սա մարզի համար մեծ թիվ է: 2024 թ., սակայն, գրադարանների թիվը կտրուկ ավելացել է, ինչը դրական շրջադարձ է մարզի բնակչության համար: 2023 թ. արձանագրված նվազումը ժամանակավոր բնույթ է

² Բոլոր տվյալները վերցվել են Վիճակագրական պետական կոմիտեի հաշվետվություններից <https://statbank.armstat.am/> (11.10.2025)

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

կրել, իսկ 2024 թ. աճը վկայում է համակարգի վերականգնման և զարգացման հնարավորությունների մասին:

Լոռու մարզում գործող գրադարաններն՝ ըստ տեսակների.

	2022	2023	2024
Մարզային	1	1	1
Քաղաքային	21	14	12
Գյուղական	22	26	35

Մարզային գրադարանը համակարգող, մեթոդական և կենտրոնական կառույց է և չի ենթարկվում կառուցվածքային փոփոխությունների: Այն շարունակում է կատարել իր հիմնական գործառնությունները՝ անկախ վարչական կամ ֆինանսական տատանումներից, քանի որ ունի պետական կարգավիճակ, համակարգող դեր և կայուն ֆինանսավորում:

Քաղաքային գրադարանների թիվը 2023 թ. կտրուկ նվազել է, ապա 2024 թ. գրեթե վերականգնվել: 2023 թ. նվազումը պայմանավորված է ֆինանսական խնդիրներով և համայնքների խոշորացման գործընթացով, որի արդյունքում որոշ քաղաքային գրադարաններ ներառվել են միասնական գրադարանային համակարգերի: 2024 թ. մի շարք գրադարաններ վերաբացվել են կամ վերագրանցվել, ակտիվացել է մարզի մշակութային կյանքը, ինչն իր հերթին ենթադրում է գրադարանների ավելացում: Ամենակարևորը, սակայն, պետական մարմինների մոտեցումն է:

Գյուղական գրադարանների պարագայում գրադարանների թիվը մարզում միայն աճել է, ինչն ուրախալի փաստ է: Նշենք նաև, որ 2022-2024 թթ. Լոռու մարզում գրադարանների ընդհանուր աճը

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

հիմնականում ապահովվել է գյուղական գրադարանների քանակի ավելացման հաշվին:

Ամփոփում

Սույն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Լոռու մարզի գրադարանային համակարգը, ձևավորվելով հարուստ պատմամշակութային ավանդույթների հիման վրա, այսօր գտնվում է փոփոխվող, բայց ընդհանուր առմամբ կենսունակ և զարգացման ներուժ ունեցող վիճակում: Վերլուծված պատմական, գործառության և վիճակագրական տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ գրադարանները մարզում շարունակում են կատարել ոչ միայն դասական տեղեկատվական, այլև կրթական, մշակութային և հասարակական կարևոր առաքելություն:

2022–2024 թթ. վիճակագրական պատկերը վկայում է գրադարանների թվաքանակի տատանումների, սակայն ոչ անկման մասին: 2023 թ. գրանցված նվազումը կրում է ժամանակավոր և հիմնականում վարչատարածքային ու ֆինանսական բնույթ, մինչդեռ 2024 թ. արձանագրված աճը վկայում է համակարգի վերականգնման և պետական ու համայնքային մակարդակներում գրադարանների դերի վերարժևորման մասին: Հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ գրադարանների ընդհանուր աճը հիմնականում ապահովվել է գյուղական գրադարանների թվի ավելացման հաշվին, ինչը խոսում է մշակութային ծառայությունների տարածքային հավասարակշռման և գյուղական համայնքների կրթամշակութային կյանքի պահպանմանն ուղղված մոտեցման մասին:

Մարզային գրադարանը, ունենալով կայուն կարգավիճակ և համակարգող դեր, հանդես է գալիս որպես ամբողջ համակարգի առանցքային օղակ՝ նպաստելով քաղաքային և համայնքային գրադարանների մասնագիտական և մեթոդական աջակցությանը:

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002 – ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002 – Զարգարյան, Տ. (2002), *Թվային գրադարաններ*, Երևան, Հեղ. հրատ., 168 [Zargaryan, T. (2002), *Tvayin Gradaranner*, Yerevan, Hegh. Hrat., 168];

ԶԱՐԳԱՐՅԱՆ 1996 – Զարգարյան, Տ. (կազմ.) (1996), *Գրադարանները փոփոխվող աշխարհում: Նոր տեխնոլոգիաներ համագործակցության նոր ձևեր: Մեթոդական ձեռնարկ*, կազմ.՝ Տ. Զարգարյան, Ա. Շիրինյան, Կ. Խաչատրյան, Հ. Ավետիսյան, Երևան, 68 [Zargaryan, T. (1996), *Gradarannery Popokhvogh Ashkharum. Nor Tekhnologianer Hamagortsakts'utyan Nor Dzever. Metodakan Ughets'uyts'*, T. Zargaryan, A. Shirinyan, K. Khachaturyan, H. Avetisyan, Yerevan, 68];

ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՄՈՒՐԱԴՅԱՆ 2023 – Մուրադյան, Պ., Գրիգորյան, Մ., Մարգարյան գրադարանների զարգացման միտումները, *Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու* (Երևան), 14, 404-418 [Muradyan, P., Grigoryan, M. (2023), Development Trends of Regional Libraries, *Collection of Scientific Articles of Gavar State University* (Yerevan), 14, 404-418];

LIBRARIES OF LORI PROVINCE:

Statistical Analysis

HEGHINE HALIVORYAN, KAREN MANUCHARYAN

Lori regional library

Keywords: Lori Region, Libraries, Collections, Readers, Traditional Library, Digital Technologies, Challenges, History of Libraries, Statistics.

This study shows that the library system of Lori Region, formed on the basis of rich historical and cultural traditions, is today in a changing but overall viable state with development potential. The analyzed historical, functional, and statistical data allow us to conclude that libraries in the region continue to perform not only classical informational functions but also important educational, cultural, and social roles.

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

The statistical picture for 2022–2024 indicates fluctuations in the number of libraries, but not a decline. The decrease recorded in 2023 is temporary and mainly due to administrative and financial factors, while the growth observed in 2024 reflects the system's recovery and the renewed appreciation of libraries' role at both the state and community levels. Particularly important is the fact that the overall growth in libraries was primarily driven by an increase in the number of rural libraries, indicating an approach aimed at balancing access to cultural services across the region and preserving the educational and cultural life of rural communities.

The regional library, with its stable status and coordinating role, functions as a central hub of the entire system, contributing to the professional and methodological support of urban and community libraries.

ԿԱՆՈՆ ՍՐԲՈՅ ՇՈՂԱԿԱԹԻՆ՝

ԱՅՍԻՆՔՆ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Էջմիածնի Մայր տաճարի հիմնարկման տեսիլը՝

***Էջմիածնի առաջին տպարանի փորագրանկարներում*^{**}**

ՀՏԴ: 281.6(091)+655+769

DOI: 10.54503/2953-8092.2025.2(6)-115

ՇՈՂԱԿԱԹ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Պալատության ինստիտուտ

ORCID: [0009-0007-8304-8227](https://orcid.org/0009-0007-8304-8227)

Հոդվածը նվիրված է Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի հիմնարկման տեսիլին և նրա գեղարվեստական ու գրական մեկնաբանություններին՝ շեշտադրելով Շողակաթի տոնի խորհրդաբանական և պատկերագրական բովանդակությունը: Ուսումնասիրվում է, թե ինչպես է Ագաթանգեղոսի «Հայոց պալատության» մեջ ներկայացված Լուսավորչի տեսիլը՝ երկնային լույսի և Միածնի էջքով, վերածվել հայ միջնադարյան արվեստի և գրականության ներշնչանքի աղբյուրի: Հոդվածում ցույց է տրվում, որ Սուրբ Էջմիածնի պատկերներն ու նկարագրությունները ձևավորել են յուրահատուկ սիմվոլիկ համակարգ, որտեղ տաճարը մեկնաբանվում է որպես երկնքի և երկրի միավորման խորհրդանիշ՝ հայ եկեղեցու և ազգային ինքնության կենտրոն:

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ (Հետազոտական նախագիծ N 25RL-6A028):

* Հոդվածը ներկայացվել է 17.11.2025, գրախոսվել է 06.12.2025, ընդունվել է տպագրության 25.12.2025:

The article was submitted on 17.11.2025, reviewed on 06.12.2025, accepted for publication on 25.12.2025.

Քանալի բառեր՝ Ս. Էջմիածնի Գրիգոր Լուսավորչի անվան տպարան, տեսիլ, Քրիստոս, լուսակերտ տաճար, Արարատ լեռ, Նոյյան տապան:

Ինչպես հղել՝ Դերիկյան, Շ. (2025), Կանոն Սրբոյ Շողակաթին՝ այսինքն Սրբոյ Էջմիածնի: Էջմիածնի Մայր տաճարի հիմնարկման տեսիլը՝ Էջմիածնի առաջին տպարանի փորագրանկարներում, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(6), 115-122.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.2\(6\)-115](https://doi.org/10.54503/2953-8092.2025.2(6)-115)

How to cite (APA style): Grigoryan, M. (2025), The Canon of Saint Shoghakat, that ts, of Holy Etchmiadzin. The Vision of the Foundation of the Mother Cathedral of Etchmiadzin in the Engravings of the First Etchmiadzin Printing House, *Herald of the Armenian Library Association*, 2(6), 115-122.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.2\(6\)-115](https://doi.org/10.54503/2953-8092.2025.2(6)-115)

Սբ. Աստվածածնի վերափոխման տոնի կիրակիին նախորդող շաբաթ օրը Հայ Առաքելական Եկեղեցին նշում է Շողակաթի տոնը: Այն համարվում է Վերափոխման նավակատիքը, քանի որ, համաձայն եկեղեցական ավանդույթի, Քրիստոսի շնորհիլնկալ մայրը՝ Սուրբ Եկեղեցին, ամեն օր ծնում է Քրիստոսին իր սրտում՝ Սուրբ Սեղանի վրա, այդ պատճառով էլ Սբ. Գրիգորի կողմից Սուրբ Էջմիածնի տաճարի ավագ խորանն Աստվածածին է կոչվում:

Ազաթանգեղոսի «Հայոց պատմությամբ» մեզ է հասել Լուսավորչի՝ Վաղարշապատի հնձանում հավաքված ժողովրդին փոխանցված տեսիլի պատմությունը, որտեղ հայոց առաջին քահանայապետն ասում է. «Եւ իմ նայեցեալ՝ տեսի բացեալ զհաստատութիւն երկնից, ...: Եւ լոյսն հոսեալ վերուստ ի վայր մինչեւ յերկիր հասանէր. եւ ընդ լուսոյն՝ զարք անչափք լուսեղէնք երկթեւեանք ի տեսիլ մարդկան, եւ թեւքն իբրեւ զհոր: ... Եւ մի ահաւոր տեսիլ մարդոյ բարձր եւ ահեղ, որ զառաջն ունէր եւ զէջսն ի վերուստ մինչեւ ի խոնարհ առաջապահ

յառաջեալ, եւ ի ձեռինն իւրում ուռն մի մեծ ոսկի. եւ այն ամենայն զիեւտ խաղացեալ գայր: Եւ ինքն սլացեալ խոյացեալ գայր՝ ըստ նմանութեան արագաթեւ արծուոյ. եւ եկն էջ եհաս մինչեւ մաւտ ի յատակս երկրիս, ի շինամէջ քաղաքին, եւ բաղխեաց զթանձրութիւն լայնատարած գետնոյն, եւ մեծ եւ անչափ դրնդիւնքն հնչեցին ի սանդարամետս անդնդոց. եւ ամենայն երկիր յերեւելիս, յական տեսանելեաց բաւելոյ, հարթ հաւասար դաշտաձեւ յատակեցաւ: Եւ տեսանէի ի մէջ քաղաքիս, մաւտ յապարանսն արքունի, խարսխաձեւ ճախարակաձեւ խարիսխ ոսկի, մեծութեամբ իբրեւ զմեծ մի բլուր, եւ ի վերայ նորա սին մի հրեղէն բարձր մինչեւ յոյժ, եւ ի վերայ նորա թակաղաղ մի ամպեայ, եւ խաչն լուսոյ ի վերայ նորա» (ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ 1983, 414):

Աբ. Էջմիածնի Մայր տաճարին նվիրված ստեղծագործությունների գրական պատկերներն իրենց համարժեք արտացոլումն են գտել վերջինս ներկայացնող արվեստի գործերում, և հակառակը՝ Աբ. Էջմիածինը պատկերող այդ գործերը գրական ներշնչանքի աղբյուր են դարձել տարբեր հեղինակների համար:

Հիմնականում Աբ. Էջմիածինն նվիրված պատկերների կենտրոնում՝ Մայր տաճարն է ներկայացվում, որի հիմնարկումը Միածնի էջքով Աբ. Գրիգորին է ցույց տալիս հրեշտակը: Պայմանավորված պատկերային այս հորինվածքով, տաճարի հիմնարկումը ներկայացնող նկարները հաճախ եռամաս կառուցվածք ունեն, ինչպես հենց Էջմիածնի տպարանում հրատարակված փորագրանկարում է (նկ.): Նկարի ծախ անկյունում՝ երկնակամարի վերին հատվածում պատկերված է Հայր Աստված, իսկ Նրանից ավելի ցած ոսկե մուրճը ձեռքին Քրիստոսն է, ում հարվածից արդեն կերպավորվել է լուսեղեն տաճարը: Այսպիսով, թվում է, թե Աստծո Միածին Որդին իրար է կապում երկինքն ու երկիրը: Նման մեկնաբանման համար, ըստ

երևույթին, հիմք է ծառայել ազգային վերիմաստավորումը ընդհանուր քրիստոնեական այն ըմբռնման, թե Քրիստոսի՝ Բերդեհեմի այրում ծնվելով՝ երկինքը երկիր իջավ, և երկիրը երկինք բարձրացավ: Պատահական չէ, որ մեր գրականության մեջ Սբ. Էջմիածինը անվանվում է նաև Հայոց Բերդեհեմ (ԴԵՎՐԻԿՅԱՆ Վ., ԴԵՎՐԻԿՅԱՆ Շ. 2022, 84):



Նկ. Էջմիածնի Մայր Տաճարի
հիմնարկման տեսիլը
«Տոնացոյց», 1774-1775, Ս.
Գրիգոր Լուսավորչի տպարան,
էջ 225

Փորագրանկարի առջևի պլանում հրեշտակը Հայոց հայրապետին և արքայական ընտանիքին ցույց է տալիս Միածնի էջըով կերպավորված Սբ. Էջմիածինը: Հրեշտակի հայացքն ուղղված է Սբ. Գրիգորին և պատկերում է նրան դիմելը և տեսիլը բացատրելը, իսկ ձեռքով ցույց է տալիս Քրիստոսին, որով կարծես ցանկանում է ասել, թե Միածինն է Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի երկնային ճարտարապետը:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Սբ. Էջմիածնի՝ Միածնի Էջքով և երկնային լույսի գծագրմամբ ձևավորվելու մասին դեռևս 7-րդ դարում Սահակ Գ Ձորափորեցի շարականագիր հայրապետը (կթղ. 677-703 թթ.) գրել է.

Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ Նմա

(ՔՅՈՍԵՅԱՆ, ԴԵՎՐԻԿՅԱՆ 2003, 271)

Սուրբ Էջմիածնի լուսանկար՝ երկնային լույսով նկարված լինելու ընդհանրացած ըմբռնումն Էջմիածինը ներկայացնող արվեստի գործերում, մեծ վարպետությամբ պատկերվել է հետևյալ ձևով: Երկնքի կիսաշրջանից, որը խորհրդանշում է Լուսավորչի տեսիլում երկնային հաստատության դռների բացվելը, աստվածության փառքի ճաճանչները վայր իջնելով՝ հասնում և դիպչում են տաճարին՝ խորհրդանշելով, որ լույսի այդ շողերով է ձևավորվել Սբ. Էջմիածինը:

Մայր տաճարը հաճախ պատկերվում է լուսեղեն կամարի մեջ, որը վերևում պսակվում է խաչով: Այս պատկերի գրական սկզբնաղբյուրը, ինչպես վերը նշեցինք, Լուսավորչի տեսիլն է, ուր ներկայացվում է հրեղեն սյունը՝ ամպե խոյակով և լուսեղեն խաչով:

Այդ խոսքերի հետևողությամբ՝ Միածնի Էջքը պատկերվում է վար խոյանալիս և կիսաթեք դիրքով կռանով հարվածելիս: Այն պատկերող հեղինակները փորձում էին առավելագույնս արտահայտիչ ներկայացնել Միածնի ոչ թե պարզապես Էջքը, այլ վար խոյանալը և ոսկե կռանով ուժգնապես հարվածելը: Նույն ձևով և միջնադարյան հեղինակներն են տարբեր արտահայտչամիջոցներով ներկայացնում Էջքի և հարվածի այս ահագնությունը: 14-րդ դարի հեղինակ Առաքել Սյունեցին գրում է.

Էհար ուժգին զերկիր սաստկագին

Ոսկի ոռամբն ի մէջ տաճարին

(ՔՅՈՍԵՅԱՆ, ԴԵՎՐԻԿՅԱՆ, 138):

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Առանձնակի պատկերավորությամբ է ներկայացվում նաև հրեշտակի կողմից Լուսավորչին տեսիլի ցույց տալը: Հրեշտակը շփոթահար սրբի ուշադրությունը սևեռում է երկնային էջքի վրա՝ ուղղակիորեն խթելով նրա կողը: Այն իր համարժեք արտացոլումն է գտել միջնադարյան բանաստեղծությունում, և էջմիածինն նվիրված արվեստի գործերում հատուկ շեշտվում է այս պահը:

Առաքել Սյունեցին գրում է, որ Լուսավորիչը, իջնող Միածնին տեսնելով, ուշաթափ ընկնում է.

***Այր լուսաւոր տեսիլն ահագին
Յանկարծակի զնա զարհուրեցին:
Եւ յահագին տեսլենէ նորին
Ուշաթափեալ անկաւ ի գետնին:***

(ՔՅՈՍԵՅԱՆ, ԴԵՎՐԻԿՅԱՆ, 136):

Նկարի երկտող մակագրությունում, որի հեղինակը, ամենայն հավանականությամբ, Սիմեոն Երևանցին է (կթղ.1763-1780 թթ.), ասվում է.

***Սա է յոր էջ Միածինն Հօր լուսով փառաց
Եւ յօրինեաց հայոց յարուկ մայր պարծանաց***

(ՏՕՆԱՑՈՅՑ 1774-1775, 225):

Հաարտությամբ շեշտվում է, որ Միածնի էջքով տաճարը հատուկ հիմնվեց՝ որպես հայ ժողովրդի պարծանքի մայր՝ աղբյուր:

Սիմեոն Ա Երևանցու հրատարակություններից «Տօնացոյց» (1774-75 թթ.), «Կարգ թաղման կարգաւորաց» (1777 թ.), «Պարտավճար» (1779 թ.) և «Շարակնոց» (1789 թ.) գրքերում տեղ գտած Ս. էջմիածնին նվիրված պատկերները լավագույն օրինակն են արվեստի և գրական ստեղծագործությունների միասնության ու միմյանց փոխ-

լրացման՝ խորհրդանշելով էջմիածնականության՝ որպես հայ ժողովրդի ազգակենտրոնության և ազգահավաքման այն գաղափարը, որն իր բարձրակետին էր հասնելու հենց Սիմեոն Կաթողիկոսի ազգային-եկեղեցական գործունեությունում և հոգևոր-գրական ստեղծագործություններում:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ 1983 – Ազաթանգեղոս (1983), *Պատմություն հայոց*, աշխատ. Ա. Տեր-Ղևոնդյան, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 551 [Agathangelos (1983), *Patmutyun Hayots*, ashkh. A. Ter-Ghevondyan, Yerevan, Yerevani hamalsarani hrat., 551];

ԴԵՎՐԻԿՅԱՆ Վ., ԴԵՎՐԻԿՅԱՆ Շ. 2022 – Դերիկյան, Վ., Դերիկյան Շ. (2022), *Սուրբ էջմիածնի տպարանի հիմնումը և գործունեությունը 18-րդ դարում*, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 320 [Devrikyan V., Devrikyan Sh. (2022), *Surb Ejmiatsni tparani himnumy yev gorcuneutyuny 18-rd darum*. S. Ejmiatsin, Mayr Ator Surb Ejmiatsin, 320];

ՔՅՈՍԵՅԱՆ, ԴԵՎՐԻԿՅԱՆ 2003 – Քյոսեյան, Հ., Դերիկյան, Վ. (2003), *Սուրբ Էջմիածինը հայ մատենագրությունում*, աշխատ. Հ. Քյոսեյան, Վ. Դերիկյան, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 528 [Kyoseyan H., Devrikyan V. (2003), *Surb Ejmiatsiny hay matenagrutyunum*, ashkh. S. Ejmiatsin, Mayr Ator Surb Ejmiatsin, 528];

ՏՕՆԱՅՈՅՑ 1774-1775 – Տօնացոյց (1774-1775): Էջմիածին, Ս. Գրիգոր Լուսավորչի տպարան, 564 [Tonatsoyts (1774-1775). Ejmiatsin, S. Grigor Lusavorchi tparan, 564].

**THE CANON OF SAINT SHOGHAKAT, THAT IS,
OF HOLY ETCHMIADZIN**
*The Vision of the Foundation of the Mother Cathedral of Etchmiadzin
in the Engravings of the First Etchmiadzin Printing House**

SHOGHAKAT DEVRIKYAN
Institute of History of NAS RA

Keywords: Etchmiadzin Printing House named after Gregory the Illuminator, vision, Christ, radiant cathedral, Mount Ararat, Noah's Ark.

The article is devoted to the vision of the foundation of the Mother Cathedral of Holy Etchmiadzin and its artistic and literary interpretations, with particular emphasis on the symbolic and iconographic content of the Feast of Shoghakat. It explores how the vision of St. Gregory the Illuminator, as described in Agathangelos' History of the Armenians-centered on the descent of divine light and the Only-Begotten Son-became a source of inspiration for medieval Armenian art and literature. The study demonstrates that the images and descriptions of Holy Etchmiadzin formed a unique symbolic system in which the cathedral is interpreted as a sign of the union between heaven and earth, serving as the spiritual and national center of the Armenian people.

* *The research was supported by the Higher Education and Science Committee of MESCS RA (Research project N 25RL-6A028).*

Շարունակությունը նախորդ համարից...

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒՋՈՒՄՆԵՐ
Հայ գրքի նոր անունների ներկայացում*

ՀՏԴ: 01:002

DOI: 10.54503/2953-8092.2025.2(6)-123

ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ, ՄԵՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

1925



ՄԱՐԴԸ որ չէր կրնար մեռնիլ եւ ուրիշ քսաներկու կարեւոր պատմութիւններ /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագր. Ս.Գ. Յարութիւնեան, 1925.- 8, 8, 8, 6, 6, 4, 4, 4, 4, 4, 4, 5, 5, 6, 4, 8, 15, 4, 4, 4, 4, 4, 24 էջ:

ՏԻՏՆՈՍԱԹԵՐԹ՝ չունի:

Մամուլանիշեր չունի: Բոլորգիր, վերնագրերը՝ երկաթագիր: Մանր զարդանախշեր, վերջազարդեր: Շապիկը՝ զարդափակ, վրան՝ զարդանախշ:

Բովանդ. Մարդը որ չէր կրնար մեռնիլ /Պէնճըմին Ճ. Կիպըն; Մէկ ոտքով բայց երջանիկ; Ծերմակ ծաղիկը /Ճ.Մ. Թոմսըն; Եկեղեցիին պատէն կախուած համարը; Անմիջապէս պիտի թողում որ փորձէ; Կեանքը կերակու-

* Հոդվածը ներկայացվել է 04.05.2025, գրախոսվել է 14.06.2025, ընդունվել է տպագրության 25.12.2025:

The article was submitted on 04.05.2025, reviewed on 14.06.2025, and accepted for publication on 25.12.2025.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

րէն անելի է: Միայն համբուրեց զիս: Շարունակել: Տեսական հաճոյքներ: Ի՞նչ երջանիկ մարդ: «Ճշմարիտ է, Տէր իմ, ճշմարիտ է» /Z.A.Gurney: Միհրանի փորձութիւնը: Կառապան Կիկօ: Խօ՛ւք, խօ՛ւք, խօ՛ւք: Սրբութիւնն ի՞նչ է իրօք: Մարտիկ Կարօ: Ընդունա՞ծ էք կրակը: Սբ. Հոգին ընդունելու հետեւանքները: Երրորդ սկզբնատրութիւն: Երրեակ պատգամ մը: Բարձր այժոռ մը: Գրաւոր յանձնարարական: Արիս կը պատմէ իր դարձը: Քրիստոս բազմամարդ քաղաքի մէջ:

Ծանոթ.՝ *Տպարանի տվյալը վերցվել է շապիկի վերջերեսից: Գիրքը բաղկացած է քսանչորս պատմվածքներից: «Մարդը որ չէր կրնար մեռնիլ», «Ճերմակ ծաղիկը», «Սբ. Հոգին ընդունելու հետեւանքները» և «Քրիստոս բազմամարդ քաղաքի մէջ» պատմվածքներն ունեն առանձին տիպոգրաթերթեր կամ տիպոգրաթերթանման էջեր և ներառված են «Հայ գիրքը 1921-1930 թթ.» և «Հայ գիրքը 1931-1940 թթ.» մատենագիտությունների մեջ: Առաջին երկու պատմվածքներն ունեն տպագրության տարեթիվ՝ 1924, իսկ մյուս երկուսի դեպքում տարեթիվ չի նշվել (անթվակիր են): Բոլոր պատմվածքներն ունեն առանձին էջակալություն: Սա ենթադրում է, որ դրանք տպագրվել են նաև առանձին: Սույն տպագրությունը եզակի է, քանի որ ունի մեկ ընդհանուր շապիկ և համահավաք օրինակ է:*

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229306>



ՊՈՒՆՏՈՒՆ ԾՈՂԷՏԻՆ Լ. =BALDWIN JOSEPHINE

Անետարանի պատմություններ: Կրտսերագոյն կարգ. Դ տարի-Մասն Ա /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: «Սէլամէթ» տպարան, 1925.- 127 էջ.- (Ուսուցչի դասագիրք).

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԸ

ՈՒՍՈՒՅՉԻ ԴԱՍԱԳԻՐՔ / GOSPEL STORIES / JOSEPHINE BALDWIN / ԱԻԵՏԱՐԱՆԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏԱԿԱՆԳՈՅՆ ԿԱՐԳ / Դ ՏԱՐԻ-

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՆ Ա / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ /
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1925 /

Ութաձալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, վրան և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Տիտղոսաթերթի դարձերեսին՝ նշում. «Printed in Constantinople»: Շապիկի վերջերեսին՝ «Ուսուցչի դասագիրք» մատենաշարով լույս տեսած Ա, Բ, Գ և Դ տարիների գրքերի ծանոթագրությունները, տպարանի տվյալն ու հասցեն: Առաջաբանը՝ «Ամերիկացի հրատարակչի»:

Բովանդ.՝ Ա. Ալետարան ըստ Մարկոսի; Յաւելուած:

Ծանոթ.՝ Տպարանի տվյալը վերցվել է շապիկի վերջերեսից: Ա, Բ և Գ մասերը տպագրվել են 1925 թ., իսկ Դ մասը՝ 1927-ին: Մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի մատենագիտության մեջ:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229249>



ՊՈՒՆՏՈՒԻՆ ԶՈՂԵՖԻՆ Լ. = BALDWIN JOSEPHINE

Ալետարանի պատմություններ: Կրտսերագոյն կարգ. Դ տարի-Մասն Բ /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: «Սէլամէթ» տպարան, 1925.- 123 էջ.- (Ուսուցչի դասագիրք).

ՏԻՏԴՈՍԱԹԵՐԹ

ՈՒՍՈՒՅՉԻ ԴԱՍԱԳԻՐՔ / GOSPEL STORIES / JOSEPHINE BALDWIN / ԱԻԵՏԱՐԱՆԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏԱՆԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / Դ ՏԱՐԻ-ՄԱՍՆ Բ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1925 /

Ութաձալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, վրան և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Տիտղոսաթերթի դարձերեսին՝ նաև նշում. «Printed in Constantinople»: Շապիկի վերջերեսին՝ «Ուսուցչի դասագիրք» մատենաշա-


ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

րով լույս տեսած Ա, Բ, Գ և Դ տարիների գրքերի ծանոթագրությունները, տպարանի տվյալն ու հասցեն:

Քովանդ.՝Ա. Աւետարան ըստ Մարկոսի; Յաւելուած:

Ծանոթ.՝Տպարանի տվյալը վերցվել է շապիկի վերջերեսից: Մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի մատենագիտության մեջ: Տե՛ս նաև նախորդ գրառման ծանոթագրությունը:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229250>



ՊՈՒՆՏՈՒԹԻՆ ԺՈՂՔԻՆ Լ. = BALDWIN JOSEPHINE

Աւետարանի պատմութիւններ: Կրտսերագոյն կարգ. Դ տարի-Մասն Գ /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: «Սէլամէթ» տպարան, 1925.- 150 էջ.- (Ուսուցչի դասագիրք).

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՈՒՍՈՒՅՉԻ ԴԱՍԱԳԻՐՔ / GOSPEL STORIES / JOSEPHINE BALDWIN / ԱՒԵՏԱՐԱՆԻ / ՊԱՍՏՈՒԹԻՆԵՐ / ԿՐՏԱՆԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / Դ ՏԱՐԻՍԱՍՆ Գ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ


ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1925 /

Ութաձալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, վրան և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Տիտղոսաթերթի դարձերեսին՝ նշում. «Printed in Constantinople Turkey»: Շապիկի վերջերեսին՝ «Ուսուցչի դասագիրք» մատենաշարով լույս տեսած Ա, Բ, Գ և Դ տարիների գրքերի ծանոթագրությունները, տպարանի տվյալն ու հասցեն:

Քովանդ.՝ Միսիոներական պատմութիւններ; Անգղիերէն Սբ. գիրքը եւ իր պատմութիւնը; Յաւելուած:

Ծանոթ.՝Տպարանի տվյալը վերցվել է շապիկի վերջերեսից: Մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի մատենագիտության մեջ: Տե՛ս նաև Դ տարի Ա մասի ծանոթագրությունը:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229251>



ՊՈՍՏՈՒՆ ԺՈՂԵՖԻՆ Լ. = BALDWIN JOSEPHINE

Անետարանի պատմություններ: Կրտսերագոյն կարգ (Իբր տասներկու տարեկան տղայոց համար): Դ տարի-Մասն Ա / Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագր. Ս.Գ. Յարութիւնեան, 1925.- 48 էջ (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք).


ՏԻՏՆՈՍԱԹԵՐԹ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ
ԳԻՐՔ / GOSPEL STORIES / JOSEPHINE BALDWIN /
ԱԻԵՏԱՐԱՆԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏԱԵՐԱ-
ԳՈՅՆ ԿԱՐԳ / (Իբր տասներկու տարեկան տղայոց համար) / Դ ՏԱՐԻ-ՄԱՍՆ
Ա / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ /
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1925 /

Մամուլանիշեր չունի: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ զարդափակ շրջանակում՝ հատվածներ Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքում՝ վեց ներդիր թերթ նկար, քարտեզ:

Ծանոթ.՝ Նկարագրված օրինակում 12-րդ էջին հաջորդում է 37-րդ էջը, բայց բովանդակային առումով խախտում չկա: Տպարանի տվյալը վերցվել է շապիկի դարձերեսից: Սույն մատենաշարի Դ տարվա Ա, Բ մասերը տպագրվել են 1925 թվականին, Գ մասը՝ 1926-ին, իսկ Դ մասը՝ 1927-ին: Մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի մատենագիտության մեջ:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229253>



ՊՈԼՏՈՒՆ ՃՈՋԷՖԻՆ L.=BALDWIN JOSEPHINE

Անտարանի պատմություններ: Կրտսերագոյն կարգ (Իբր տասներկու տարեկան տղայոց համար): Դ տարի-Մասն Բ /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: «Սէլամէթ» տպարան, 1925.- 48 էջ.- (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք).


ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ
ԳԻՐՔ / GOSPEL STORIES / JOSEPHINE BALDWIN /
ԱՒԵՏԱՐԱՆԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏՍԵՐԱ-
ԳՈՅՆ ԿԱՐԳ / (Իբր տասներկու տարեկան տղայոց համար) / Դ ՏԱՐԻ-ՄԱՍՆ
Բ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ /
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1925 /

Մամուլանիշեր չունի: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ զարդափակ շրջանակում՝ հատվածներ Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքում՝ տասնվեց ներդիր թերթ նկար, քարտեզ:

Ծանոթ.՝ Նկարագրված օրինակում 16-րդ էջին հաջորդում է 33-րդ էջը, բայց բովանդակային առումով խախտում չկա: Նաև առկա է տպագրական վրիպակ. 15 9-ի փոխարեն տպագրվել է 6: Տպարանի տվյալը վերցվել է շապիկի դարձերեսից: Մաքենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի մաքենագիտության մեջ: Տե՛ս նաև նախորդ գրառման ծանոթագրությունը:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229254>



ՊՈԼՏՈՒՆ ԺՈՋԵՖԻՆ Լ. = BALDWIN JOSEPHINE

Թագաւորութեան պատմութիւններ: Կրտսե-
րագոյն կարգ. Գ տարի-Մասն Բ /Հրատարակու-
թիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդ-
նուպոլիս: Տպագր. Ս.Գ. Յարութիւնեան, 1925.- 128
էջ.- (Ուսուցչի դասագիրք)։

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ


ՌԻՍՏՈՒՅՉԻ ԴԱՍԱԳԻՐՔ / KINGDOM STO-
RIES / JOSEPHINE BALDWIN / ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ
/ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / Գ
ՏԱՐԻ-ՄԱՍՆ Բ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻ-
ԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1925 /

Ութաձալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր,
վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, վրան և տիտղոսա-
թերթին՝ զարդանախշեր, տիտղոսաթերթի դարձերեսին՝ նշում. «Printed in
Constantinople»: Շապիկի վերջերեսին՝ «Ուսուցչի դասագիրք» մատենաշարով
լոյս տեսած Ա, Բ և Գ տարիների գրքերի ծանոթագրությունները:

Բովանդ.՝ Ա. Իսրայելի եւ Յուդայի թագաւորութիւնը (շարունակեալ);
Յաւելլուած:

Ծանոթ.՝ Տպարանի տվյալը վերցվել է շապիկի վերջերեսից: Մատենա-
գիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի մատենագիտության մեջ:
Տե՛ս նաև նախորդ գրառման ծանոթագրությունը:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229274>



ՊՈԼՏՈՒՆ ՃՈԶՖԻՆ Լ. = BALDWIN JOSEPHINE

Թագաւորութեան պատմութիւններ: Կրտսե-
րագոյն կարգ. Գ տարի-Մասն Գ /Հրատարակութիւն
Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնու-
պոլիս: Տպագր. Ս.Գ. Յարութիւնեան, 1925.- 127 էջ.-
(Ուսուցչի դասագիրք).

ՏԻՏՂՈՍԱԹԵՐՈՔ

ՌԻՍՈՒՅՅԻ ԴԱՍԱԳԻՐՔ / KINGDOM STO-
RIES / JOSEPHINE BALDWIN / ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ
/ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ / ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / Գ
ՏԱՐԻ-ՄԱՍՆ Գ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻ-


ԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1925 /

Ութաձալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր,
վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Մեկ վերջագարդ: Շապիկը՝ զարդափակ,
վրան և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր, տիտղոսաթերթի դարձերեսին՝
նշում. «Printed in Constantinople» և տպարանի տվյալը: Շապիկի վերջերեսին՝
«Ուսուցչի դասագիրք» մատենաշարով լոյս տեսած Ա, Բ և Գ տարիների
գրքերի ծանոթագրությունները:

Բովանդ.՝ Ա. Իսրայելի եւ Յուդայի թագաւորութիւնը (շարունակեալ); Բ.
Պատասխանատուութիւն անձի, ընկերոջ եւ երկրի հանդէպ; Գ. Պատմութիւն-
ներ Յուդայի թագաւորութեան վրայ; Յանելուած:

Ծանոթ.՝ Մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի
մատենագիտության մեջ: Տե՛ս նաև նախորդ գրառման ծանոթագրությունը:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229275>



ՊՈԼՏՈՒՆ ՃՈԶԵՖԻՆ Լ. = BALDWIN JOSEPHINE

Թագաւորութեան պատմութիւններ: Կրտսե-
րագոյն կարգ. Գ տարի-Մասն Դ /Հրատարակու-
թիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդ-
նուպոլիս: Տպագր. Ս.Գ. Յարութիւնեան, 1925.- 127
էջ.- (Ուսուցչի դասագիրք):

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ


ՌԻՍՈՒՅՉԻ ԴԱՍԱԳԻՐՔ / KINGDOM STO-
RIES / JOSEPHINE BALDWIN / ԹԱԳԱՆՈՐՈՒԹԵԱՆ
/ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / Գ
ՏԱՐԻ-ՄԱՍՆ Դ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻ-
ԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1925 /

Ութաձալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր,
վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Մեկ վերջագարդ: Շապիկը՝ զարդափակ,
վրան և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր, տիտղոսաթերթի դարձերեսին՝
նշում. «Printed in Constantinople» և տպարանի տվյալը: Շապիկի վերջերեսին՝
«Ուսուցչի դասագիրք» մատենաշարով լոյս տեսած Ա, Բ և Գ տարիների
գրքերի ծանոթագրությունները:

Բովանդ.՝ Դ. Յուդային ժողովրդին արքուն ու վերադարձը; Յաւելուած:

Ծանոթ.՝ Մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի
մատենագիտության մեջ: Տե՛ս նաև նախորդ գրառման ծանոթագրությունը:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229276>



ՊՈԼՏՈՒՆ ՃՈՋԷՖԻՆ Լ. = BALDWIN JOSEPHINE

Թագաւորութեան պատմութիւններ: Կրտսե-
րագոյն կարգ (Իբր տասնըմէկ տարեկան տղայոց
համար): Գ տարի-Մասն Ա /Հրատարակութիւն Ամե-
րիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս:
Տպագր. Ս.Գ. Յարութիւնեան, 1925.- 48 երկայուն
էջ.- (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք):


ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ
ԳԻՐՔ / KINGDOM STORIES / JOSEPHINE BALDWIN
/ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ / ՊԱՍՄՈՒԹՅԱՆՆԵՐ /
ԿՐՏԱՆԴՈՒՆ ԿԱՐԳ / (Իբր տասնըմէկ տարեկան տղայոց համար) / Գ
ՏԱՐԻ-ՄԱՍՆ Ա / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒ-
ԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1925 /

Մամուլանիշեր չունի: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շա-
պիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ զարդափակ շրջանակում՝ հատվածներ
Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքում՝ չորս
ներդիր թերթ նկար, քարտեզ:

Ծանոթ.՝ Նկարագրված օրինակում բացակայում են 18-33-րդ էջերը:
Տպարանի տվյալը վերցվել է շապիկի դարձերեսից: Մատենագիտական
նկարագրությունը չի ներառվել հայ գրքի մատենագիտության մեջ:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229277>



ՊՈԼՏՈՒՆ ԾՈԶԷՖԻՆ Լ. = BALDWIN JOSEPHINE

Թագաւորութեան պատմութիւններ: Կրտսե-
րագոյն կարգ (Իբր տասնըմէկ տարեկան տղայոց
համար): Գ տարի-Մասն Բ / Հրատարակութիւն Ամե-
րիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս:
Տպագր. Ս.Գ. Յարութիւնեան, 1925.- 48 երկայուն
էջ.- (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք).


ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ
ԳԻՐՔ / KINGDOM STORIES / JOSEPHINE BALDWIN
/ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ /
ԿՐՏԱԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / (Իբր տասնըմէկ տարեկան տղայոց համար) / Գ
ՏԱՐԻ-ՄԱՍՆ Բ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒ-
ԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1925 /

Մամուլանիշեր չունի: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շա-
պիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ զարդափակ շրջանակում՝ հատվածներ
Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքում՝ չորս
ներդիր թերթ նկար, քարտեզ:

Ծանոթ.՝ Նկարագրված օրինակում բացակայում են 18-33-րդ էջերը:
Տպարանի տվյալը վերցվել է շապիկի դարձերեսից: Մատենագիտական
նկարագրությունը չի ներառվել հայ գրքի մատենագիտության մեջ:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229278>



ՊՈԼՏՈՒՆ ՃՈՋԷՖԻՆ Լ. = BALDWIN JOSEPHINE

Թագաւորութեան պատմութիւններ: Կրտսե-
րագոյն կարգ (Իբր տասնըմէկ տարեկան տղայոց
համար): Գ տարի-Մասն Գ / Հրատարակութիւն Ամե-
րիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս:
Տպագր. Ս.Գ. Յարութիւնեան, 1925.- 47 երկայուն
էջ.- (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք).


ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ
ԳԻՐՔ / KINGDOM STORIES / JOSEPHINE BALDWIN
/ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ /
ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / (Իբր տասնըմէկ տարեկան տղայոց համար) / Գ
ՏԱՐԻ-ՄԱՍՆ Գ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒ-
ԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1925 /

Մամուլանիշեր չունի: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շա-
պիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ զարդափակ շրջանակում՝ հատվածներ
Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքում՝ չորս
ներդիր թերթ նկար, քարտեզ:

Ծանոթ.՝ Նկարագրված օրինակում բացակայում են 17-31-րդ էջերը:
Տպարանի տվյալը վերցվել է շապիկի դարձերեսից: Մատենագիտական
նկարագրությունը չի ներառվել հայ գրքի մատենագիտության մեջ:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229279>



ՊՈԼՏՈՒՆ ՃՈՋԷՖԻՆ Լ. = BALDWIN JOSEPHINE

Թագաւորութեան պատմութիւններ: Կրտսե-
րագոյն կարգ (Իբր տասնըմէկ տարեկան տղայոց
համար): Գ տարի-Մասն Դ / Հրատարակութիւն Ամե-
րիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս:
Տպագր. Ս.Գ. Յարութիւնեան, 1925.- 47, 1 չի. երկ-
սյուն էջ.- (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք).

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ
ԳԻՐՔ / KINGDOM STORIES / JOSEPHINE BALDWIN
/ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ /
ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / (Իբր տասնըմէկ տարեկան տղայոց համար) / Գ
ՏԱՐԻ-ՄԱՍՆ Դ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒ-
ԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1925 /

Մամուլանիշեր չունի: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շա-
պիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ զարդափակ շրջանակում՝ հատվածներ
Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքում՝ յոթ
ներդիր թերթ նկար, քարտեզ:

Ծանոթ.՝ Նկարագրված օրինակում բացակայում են 17-31-րդ էջերը:
Տպարանի տվյալը վերցվել է շապիկի դարձերեսից: Մատենագիտական
նկարագրությունը չի ներառվել հայ գրքի մատենագիտության մեջ:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229280>

1926

ՀՈԳԵՒՈՐ
Ե Ր Գ Ե Ր

ԶԻԾ

ԱՅՏԱՆԱԿԱՆ
ՊԵՂԱԴՐՈՒՄ
1926

FSL-PGE Books-ARM-018

ՀՈԳԵՒՈՐ երգեր.- Կոստանդնուպոլիս:
Տպարան «Սելամէթ», 1926.- 460 էջ:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ


ՀՈԳԵԻՈՐ / ԵՐԳԵՐ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒԴՈՒ-
ԼԻՍ / «ՍԵԼԱՄԵԹ» ՏՊԱՐԱՆ / 1926 /

Տասնվեցածալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, օգտագոծվել է նաև նոտրգիր: Վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ և նկարազարդ, տիտղոսաթերթին՝ զարդանկար, բուն շարադրանքում՝ մանր գարդանախշեր: Տիտղոսաթերթի դարձերեսին՝

Հշոմ. «Printed in Turkey»:

Ծանոթ.՝ Մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի մատենագիտության մեջ: Սույն տպագրության մասին հիշատակում կա Գ. Բամպուքճեանի կազմած մատենագիտության մեջ («Մատենագիտութիւն յիսնամեայ շրջանի (1923-1972) Սրանպուլահայ գրքի», Շողակաթ, տարեգիրք, Ստամբուլ, 1978, թ. 885 գրառում):

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229295>



ՊՈԼՏՈՒԻՆ ՃՈՉԷՖԻՆ L.=BALDWIN JOSEPHINE

Անետարանի պատմութիւններ: Կրտսերագոյն կարգ (Իբր տասներկու տարեկան տղայոց համար): Դ տարի-Մասն Գ /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: «Սէլամէթ» տպարան, 1926.- 64 էջ.- (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք).

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ
ԳԻՐՔ / GOSPEL STORIES / JOSEPHINE BALDWIN /
ԱԻԵՏԱՐԱՆԻ / ՊԱՏՄՈՒԹԻՆՆԵՐ / ԿՐՏԱԵՐԱ-


ԳՈՅՆ ԿԱՐԳ / (Իբր փաստերկու փարեկան փղայոց համար) / Դ ՏԱՐԻ-ՄԱՍՆ Գ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1926 /

Ութաձալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ զարդափակ շրջանակում՝ հատվածներ Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքում՝ տասնութ ներդիր էջ նկար, քարտեզ:

Ծանոթ.՝ Շապիկին տպագրության թվականը նշվել է 1925: Տպարանի տվյալը վերցվել է շապիկի դարձերեսից: Մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի մատենագիտության մեջ: Տե՛ս նաև Դ տարի Ա մասի ծանոթագրությունը:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229255>

1927



ՊՈԼՏՈՒՆ ՃՈՋԷՖԻՆ Լ. = BALDWIN JOSEPHINE

Անտարանի պատմություններ: Կրտսերագոյն կարգ. Դ տարի-Մասն Դ /Հրատարակութիւն ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: «Սէլամէթ» տպարան, 1927.- 115 էջ.- (Ուսուցչի դասագիրք).

ՏԻՏԴՈՍԱԹԵՐԹ


ՈՒՍՈՒՅՉԻ ԴԱՍԱԳԻՐՔ / GOSPEL STORIES / JOSEPHINE BALDWIN / ԱԻԵՏԱՐԱՆԻ / ՊԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏԱՆԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / Դ ՏԱՐԻ-ՄԱՍՆ Դ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1927 /

Ութաձալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, վրան և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Շապիկի վերջերեսին՝ Շապիկի վերջերեսին՝ «Ուսուցչի դասագիրք» մատենաշարով լույս տեսած Ա, Բ, Գ և Դ տարիների գրքերի ծանոթագրությունները, տպարանի տվյալն ու հասցեն:

Բովանդ.՝ Դ. Ուսումներ Գործք Առաքելոց գիրքէն; Յաւելուած:

Ծանոթ.՝ Տպարանի տվյալը վերցվել է շապիկի վերջերեսից: Մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի մատենագիտության մեջ:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229252>



ՊՈՒՆՏՈՒՆ ԺՈՂՈՒՅԻՆ L.=BALDWIN JOSEPHINE

Անետարանի պատմություններ: Կրտսերագոյն կարգ (Իբր տասներկու տարեկան տղայոց համար): Դ տարի-Մասն Դ /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: «Սէլամէթ» տպարան, 1927.- 47, 1 չի. էջ.- (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք).

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ
ԳԻՐԲ / GOSPEL STORIES / JOSEPHINE BALDWIN /
ԱԻԵՏԱՐԱՆԻ / ՊԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ ԿԱՐԳ / (Իբր տասներկու տարեկան տղայոց համար) / Դ ՏԱՐԻ-ՄԱՍՆ
Դ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ /
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1927 /

Մամուլանիշեր չունի: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ զարդափակ շրջանակում՝ հատվածներ Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքում՝ ինը ներդիր թերթ նկար, քարտեզ:

Ծանոթ.՝ Նկարագրված օրինակում բացակայում են 14-35-րդ էջերը: Տպարանի տվյալը վերցվել է շապիկի դարձերեսից: Մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի մատենագիտության մեջ:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229256>



ՄԵԹՇԻՔ ՊԷՅՁԸԼ

Բարեկամութեան հերոսներ /Գրեց Պէյզըլ Մէթիւզ; Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կ. Պոլիս: Տպարան Սէլամէթ, Ա.թ.- 118 էջ, նկ.- (Բարեկամներ հանուր աշխարհի):

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԲԱՐԵԿԱՄՆԵՐ / ՀԱՆՈՒՐ / ԱՇԽԱՐՀԻ / ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ / ՀԵՐՈՍՆԵՐ / ԳՐԵՅ / ՊԷՅՁԸԼ ՄԵԹՇԻՔ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ /

Ուրաճալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Տողատակի ծանոթագրություններ, բուն շարադրանքում՝ մանր պատկերներ: Շապիկը և տիտղոսաթերթը՝ զարդափակ և նկարազարդ: Տիտղոսաթերթի դարձերեսին՝ տպագրության վայրի և տպարանի տվյալը: Շապիկի վերջերեսին՝ «Պայպըլ Հաուս»-ում վաճառվող գրքերի ցանկը և գրքի արժեքը. «Գին 25 դահեկան»:

Բովանդ.՝ Պողիկարպոս; Խճափին մարդիկը; Փրանկիսկոս Ասիզեցի; Հավայիի հերոսուհին; Աբրահամ Լինքոլն; Յառաջընթաց մարդը; Խամա; Արմալի տերեւի մը վրայ հինգ նշան; Հարաւային ծովերու թամէյթը; Ռուաթքա:

Ծանոթ.՝ Մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի մատենագիտության մեջ:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229340>

Հայադառ թուրքերեն նորահայր անունների ցանկը հաջորդիվ...

**ԽՆԿՈ ԱՊՈՐ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ
IFLA WLIC 2025-ՈՒՄ***

ՀՏԴ: 02(479.25)

DOI: 10.54503/2953-8092.2025.2(6)-141

ՆԱԻՐԱ ԱՃԵՄՅԱՆ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան

ORCID: [0009-0007-2034-8062](https://orcid.org/0009-0007-2034-8062)



2025 թ. օգոստոսի 18-22-ը Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում կայացավ Գրադարանային և տեղեկատվական ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի (IFLA) Համաշխարհային գրադարանային և տեղեկատվական կոնգրեսը (WLIC 2025), որն այս տարի անցկացվեց «Միասին ավելի ուժեղ» խորագրի ներքո: Կոնգ-

** Հոդվածը ներկայացվել է 26.11.2025, ընդունվել է տպագրության 25.12.2025:*

The article was submitted on 26.11.2025, accepted for publication on 25.12.2025.

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

րեսին մասնակցեցին գրադարանային և տեղեկատվական ոլորտի մասնագետներ՝ աշխարհի 114 երկրից:

Հայաստանը ներկայացնում էր Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի ծրագրերի զարգացման և միջազգային համագործակցության բաժնի ղեկավար, Հայկական գրադարանային ասոցիացիայի վարչության անդամ Նաիրա Աճեմյանը՝ որպես «IFLA Emerging Leaders» միջազգային դրամաշնորհային ծրագրի հաղթող: Ծրագիրը միտված է գրադարանային ոլորտում երիտասարդ առաջնորդների բացահայտմանը և նրանց մասնագիտական կարողությունների զարգացմանը՝ համաշխարհային հարթակում առաջնորդության, հաղորդակցության և նորարարական գաղափարների փոխանակման միջոցով:

Անցկացվեցին բազմաբնույթ նիստեր և քննարկումներ՝ նվիրված գրադարանների ապագա դերակատարմանը, արհեստական բանականության կիրառմանը գրադարանային համակարգերում, տեղեկատվական և մեդիա գրագիտության զարգացմանը, կայուն զարգացման նպատակներին, կլիմայական մարտահրավերներին արձագանքող նախաձեռնություններին, ինչպես նաև քաղաքացիական ներգրավվածությանը և միջազգային ու տարածաշրջանային գործընկերությունների ամրապնդմանը: Կոնգրեսը ներառեց նաև մշակութային միջոցառումներ, որոնք հնարավորություն տվեցին մասնակիցներին ծանոթանալու Ղազախստանի ազգային մշակույթին:

Օգոստոսի 21-ին կայացավ «Leadership Session»-ը, որի ընթացքում «IFLA Emerging Leaders» ծրագրի հաղթողները, այդ թվում՝ Նաիրա Աճեմյանը, ներկայացրին իրենց մասնագիտական փորձն ու մոտեցումները գրադարանային առաջնորդության թեմայով: Վերջինս հանդես եկավ «Արդյունավետ գրադարանային առաջնորդու-

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

թյուն» թեմայով՝ ընդգծելով, որ առաջնորդությունը միայն տեսլական ունենալը չէ, այլև այդ տեսլականը գործնականում կյանքի կոչելու կարողությունը՝ ստեղծելով նոր հնարավորություններ անգամ սահմանափակ պայմաններում:



Կոնգրեսի փակման արարողությունը վերածվեց մշակութային տոնի՝ ընդգծելով գրադարանային համայնքի համերաշխությունը, ընդհանուր նպատակը՝ գիտելիքի, մշակույթի և համագործակցության տարածումը:

IFLA WLIC 2025-ին մասնակցությունը կարևոր հնարավորություն էր Հայաստանի գրադարանային համայնքի ներկայացուցչի համար՝ ներկայացնելու մեր երկրի փորձն ու ձեռքբերումները, հաստատելու նոր մասնագիտական կապեր և ուսումնասիրելու միջազգային լավագույն փորձը:

Կոնգրեսը ևս մեկ անգամ հաստատեց, որ գրադարանները ժամանակակից հասարակությունների զարգացման առանցքային դերակատարներ են՝ նպաստելով կրթության, տեղեկատվական հավասարության և մշակութային երկխոսության խորացմանը:

**ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ
ԴԻՆԱՄԻԿ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ
ՀՀ 100 գրադարանավարների վերապատրաստման
քառօրյա ծրագիր***

ՀՏԴ: 02(479.25)

DOI: 10.54503/2953-8092.2025.2(6)-144

ՆԱԻՐԱ ԱՃԵՄՅԱՆ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան

ORCID: [0009-0007-2034-8062](https://orcid.org/0009-0007-2034-8062)



2025 սեպտեմբերի 16-19-ը Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում անցկացվեց գրադարանավարների վերապատրաստման քառօրյա դասընթաց՝ «Գրադարանների վերափոխու-

մը դինամիկ համայնքային և մշակութային կենտրոնների» խորագրով: Ծրագիրը կազմակերպվել էր Հայկական գրադարանային ասոցիացիայի կողմից՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ու Միջազգային գրադարանային ասո-

* Հոդվածը ներկայացվել է 26.11.2025, ընդունվել է տպագրության 25.12.2025:

The article was submitted on 26.11.2025, accepted for publication on 25.12.2025.

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ցիացիաների և հաստատությունների դաշնության (IFLA) աջակցությամբ:

Դասընթացին մասնակցեց շուրջ 100 գրադարանավար Երևանից և Հայաստանի տարբեր մարզերից՝ միավորվելով մասնագիտական զարգացման, միջազգային փորձի փոխանակման և գրադարանների արդիականացման ընդհանուր նպատակի շուրջ:

Վերապատրաստման դասընթացն իրականացվեց երկու թեմատիկ մոդուլներով.

✓ «Ընթերցանության կազմակերպման և խթանման նորարարական մեթոդներ». դասընթացավար Մարիանա Աբրեյու-Լորեյրուն /Պորտուգալիա/

✓ «Նորարարական ծառայությունները, տեղեկատվական գրագիտությունը և հանրային գրադարանների փոխակերպումը». Դասընթացավար Հաննա Ֆոգտ /Գերմանիա/

Դասընթացի պաշտոնական բացման ժամանակ ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, ով կարևորեց նախարարության համագործակցությունը Հայկական գրադարանային ասոցիացիայի և IFLA-ի հետ՝ միջազգային փորձի ուսումնասիրության, փոխառման և տեղայնացման համատեքստում:

Ծրագրի մասնակիցներին ողջունեց նաև Հայկական գրադարանային ասոցիացիայի նախագահ, Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի տնօրեն Ռուզան Տոնոյանը՝ ընդգծելով շարունակական կրթության և մասնագիտական վերապատրաստման կարևորությունը գրադարանների զարգացման և համայնքային դերակատարության ամրապնդման գործում:



Մոդուլ 1. «Ընթերցանության կազմակերպման և խթանման նորարարական մեթոդներ».

Դասընթացավար
Մարիանա Աբրեյու-Լորեյրոն
անդրադարձավ հանրային
գրադարանների առաքելու-

թյանը 21-րդ դարում՝ ընդգծելով, որ ժամանակակից գրադարանները պետք է վերափոխվեն բազմաֆունկցիոնալ, բաց և ներառական համայնքային տարածքների: Նրա խոսքով՝ գրադարանավարներն ունեն առանցքային դեր գրադարանների փոխակերպման գործ-ընթացում, քանի որ հենց նրանց նախաձեռնողականության և մասնագիտական աշխատանքի շնորհիվ գրադարանները կարող են դառնալ մշակութային երկխոսության, կրթության և սոցիալական ներգրավվածության կենտրոններ:

Մարիանա Աբրեյու-Լորեյրոն ներկայացրեց ընթերցանության կազմակերպման և խթանման նորարարական մեթոդներ՝ շեշտադրելով գրքերի ճիշտ ընտրության, ծրագրերի կառուցման և ընթերցող-գրադարանավար փոխհարաբերությունների կարևորությունը: Նրա խոսքով՝ արդյունավետ ընթերցանության ծրագրերը պետք է հիմնված լինեն ոչ միայն գրքի գրական և գեղագիտական արժեքների, այլև մշակութային համատեքստի և ընթերցողի կարիքների վրա:



Մոդուլ 2. «Նորարարական ծառայությունները, տեղեկատվական գրագիտությունը և հանրային գրադարանների փոխակերպումը»

Դոկտոր Հաննա Ֆոգտը դասընթացի շրջանակում ներկայացրեց Գերմանիայի հանրային գրադարանների, մասնավորապես Քյոլնի քաղաքային գրադարանի հաջողված փորձը՝ ցույց տալով, թե ինչպես կարող են գրադարանները գրքերի պահուցներից վերածվել ակտիվ սոցիալական և թվային հանգույցների:

Ինտերակտիվ բանախոսությունների և սահիկաշարերի միջոցով նա խոսեց գրադարանային տարածքների վերափոխման, նորարարական ծառայությունների ներդրման և փոփոխությունների կառավարման ռազմավարությունների մասին: Դոկտոր Ֆոգտը մասնակիցներին խորհուրդ տվեց որևէ գաղափար կյանքի կոչելուց առաջ ստեղծել դրա փոքր մոդելը, փորձարկել այն, ստանալ օգտատերերի արձագանքներ և միայն դրանից հետո անցնել ամբողջական իրականացմանը:

Ողջ դասընթացի ընթացքում մասնակիցները ներգրավվեցին խմբային աշխատանքների մեջ՝ մշակելով սեփական նախագծերի, թվային ծառայությունների և գրադարանների փոխակերպման պլաններ, որոնք ներկայացվեցին և քննարկվեցին ընդհանուր հարթակում:

Արդյունքներ և շարունակականություն



Քառօրյա հագեցած և արդյունավետ դասընթացի ավարտին մասնակիցներին շնորհվեցին վկայականներ: Ծրագիրը ևս մեկ անգամ ամրապնդեց գրադարանավարների մասնագիտական կարողություններն ու հմտությունները, խթանեց միջազգային համագործակցությունը և հասանելի դարձրեց գրադարանային ոլորտի նորարարական մոտեցումներն ու լավագույն փորձերը:

Վերապատրաստման ծրագիրը կարևոր քայլ էր հայկական գրադարանների արդիականացման, համայնքային դերի ուժեղացման և ընթերցանության խթանման ուղղությամբ՝ հաստատելով, որ ժամանակակից գրադարանը ոչ միայն գիտելիքի պահոց է, այլև կենդանի, զարգացող մշակութային միջավայր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագրի սյունակ 3

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ԳԱՐԵԳԻՆ ՂՈԶԻԿՅԱՆ

Կոնֆլիկտները գրադարաններում..... 5

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՍՏԴԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Front-end լուծումների կիրառումը գրադարանային հարթակներում.

Flib.sci.am կայքի օրինակով..... 27

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԱՐՓԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մասնագիտական կրթությունը որպես հայաստանյան

գրադարանային գործունեության որակի ապահովման գործոն.

Մարտահրավերներ և հեռանկարներ..... 40

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ժամանակի միջով. ՀՀ ԳԱԱ

Հիմնարար գիտական գրադարանը 90 տարեկան է..... 52

ԶԱՐՈՒՀԻ ՏՈՆՈՅԱՆ

Սամվել Գևորգյանի անվան

N 189 ավագ դպրոցի գրադարանը..... 76

ՆԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բրյուսովյան գիտական կենտրոնի հավաքածու..... 87

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ՀԵՂԻՆԵ ՀԱԼԻՎՈՐՅԱՆ, ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Լոռու մարզի գրադարանները. Վիճակագրական վերլուծություն... 99

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՇՈՂԱԿԱԹ ԴԵՎՐԻԿՅԱՆ

Կանոն Սրբոյ Շողակաթին՝ այսինքն Սրբոյ Էջմիածնի..... 115

ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ, ՄԵՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ, ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մալբենագիտական հետախուզումներ..... 123

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԻՐԱ ԱՃԵՄՅԱՆ

*Խնկո Ապոր անվան ազգային մանկական
գրադարանի ներկայացուցիչը IFLA WLIC 2025-ում..... 141*

ՆԱԻՐԱ ԱՃԵՄՅԱՆ

*Գրադարանների վերափոխումը դինամիկ համայնքային
և մշակութային կենտրոնների..... 144*

CONTENTS

Editor-in-Chief's Column 3

THEORY AND PRACTICE

GAREGIN GHUCHIKYAN

Conflicts in Libraries 5

21ST CENTURY LIBRARY

ASTGHIK HOVHANNISYAN

*Implementation of Front-End Solutions in Library Platforms:
A Case Study of the Flib.sci.am Website 27*

LIBRARY EDUCATION

ARPINE HAYRAPETYAN

Professional Education as a Factor in Ensuring the Quality of Library Activities in Armenia: Challenges and Prospects..... 40

LIBRARIES OF EDUCATIONAL INSTITUTIONS

MAYA GRIGORYAN

Through Time:

The Fundamental Scientific Library of NAS RA is 90 Years Old 52

ZARUHI TONOYAN

The Library of Samvel Gevorgyan High School No. 189..... 76

NARINE HARUTYUNYAN

Brusov Academic Center Collection 87

REGIONAL AND COMMUNITY LIBRARIES

HEGHINE HALIVORYAN, KAREN MANUCHARYAN

Libraries of Lori Province: Statistical Analysis 99

CULTURAL HERITAGE

SHOGHAKAT DEVRIKYAN

The Canon of Saint Shoghakat, that ts, of Holy Etchmiadzin..... 115

TIGRAN ZARGARYAN, MERY MANUKYAN,

MAYA GRIGORYAN

Bibliographical Searches 123

LIBRARY ASSOCIATION. PARTNERSHIP

NAIRA ATSHEMYAN

Representative of the Khnko Aper

National Children's Library at IFLA WLIC 2025 141

NAIRA ATSHEMYAN

Transforming Libraries into

Dynamic Community and Cultural Centers..... 144

Հայերեն բաժնի խմբագիր
Հայերեն բաժնի սրբագրիչ
Անգլերենի խմբագիր և սրբագրիչ՝
Համակարգչային ձևավորում և էջադրում՝

Նելլի Հայրապետյան
Գոհար Սարգսյան
Նունե Շահումյան
Ռուզաննա Թումանյան

Editor of Armenian section
Proofreader for Armenian section
Editor and proofreader of English
Computer design and pagination

Nelly Hayrapetyan
Gohar Sargsyan
Nune Shahumyan
Ruzanna Sargsyan

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան,
Մարշալ Բաղրամյան պող. 24/6

Address: Marshal Baghramyan ave. 24/6, 0019, Yerevan, Armenia

Ամսագրի պաշտոնական կայքէջը՝
<https://www.flib.sci.am/journal/Lratu/>

Official site of the journal
<https://www.flib.sci.am/journal/Lratu/>

